



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





467

$\frac{9(3)}{7-21}$











№ 36.

Յոսիպ Կ. Ստեփանյան  
ՀԱՍՏՈՑԻՒՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ

Պ Ե Տ Մ Ո Ւ Թ Ե Ը Ն

ՆԱԻՆԻ ԴՍԲ

Թարգմանաբան Օ. Պ.

2004

Ա.-ՊԵՏԵՐՅԱՆ

1864







ՀԱՄԱՇԽԱՐՀԱԳԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

САНКТ-ПЕТЕРБУРГЪ

Дозволено Цензурою С.-Петербургъ, 31 Декабря, 1863 года.

9(3)

ԴՅՅ  
այ

ՀԱՄԱՇԽՈՒՄԻ ԶԱԿԱՆ

ՊԵՏԱՌԻԹԻԻՆ

577

ՆԱԽԵՒ ԴԵՐ

Թայգ. հանու-կան գերհանուկան.

82-58244

ԵՄ  
88

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ

1864.

31496-4.2  
ru

Ռ. Պատկանեանի Տպարանու մը.

По Офицерской улицы (напротив Демидова Сада) домъ № 46.



(119  
88)

44582-58

R



ՀՍԽՍՇԻՍԻ ՀՍԿՍՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ն Ե Ր Խ Ժ Ո Լ Լ Ի Լ Ե Ն

Պատմութիւնը (Համաշխարհային պատմու-  
թիւն) հասկացնում է մեզ, թէ հին ժամա-  
նակներէն սկսած մինչև մեր օրերը՝ ի՞նչ ե-  
րևելի և նշանաւոր բաներ են պատահել  
աշխարհիս երեսին, մեզ ծանօթացնում է  
թագաւորութիւններու և ազգերու լիճա-  
կին, ցոյց է տալիս, թէ ո՞ւր և ե՞րբ են կազ-  
մակերպուել տէրութիւնները, ո՞վ է նրանց  
հիմնարկել, ի՞նչ անցքերով են սկզբնաւոր-  
վել, աճել կամ նոր ի նորոյ նուազել և կո-  
րել. սովորեցնում է մեզ՝ թէ աշխարքի զա-  
նազան ազգերը ո՞րտեղ էին կենում առաջ,  
ե՞րբ և ի՞նչ պատճառներով էին նրանք ի-  
րանց բնակուելու տեղերը փոխափոխում, և

Խնչ նշանաւոր անցքեր են սլատաՏել նրանց մէջերը, այսինքն՝ Խնչ պատերազմներ են արել, Խնչ երկիրներ են նուաճել, և Խնչ պէս են յաղթուել և ծառայ դարձել ուրիշ ազգերու, կամ պաՏել են իրանց աղատութիւնը, Խնչպէս է մեծացել նրանց կրթութիւնը՝ թէ՛ բարքերու, թէ՛ ուսմանց և թէ՛ արՏետագիտութեանց կողմանէ. Խնչպէս երևելի մարդիկ են կեցել նոցա մէջ, այն երևելի մարդիկն-էլ Խնչ են արել կամ լաւ կամ վատ իրանց հայրենիքի համար, և այլն:

Այլ ո՛րտեղաց ունենանք տեղեկութիւն այն անցքերու համար, որոնք-որ սլատաՏել են մեղմէն հարիւրաւոր և հաղարաւոր տարիներ առաջ:

Այն ժամանակէն սկսած, երբ-որ մարդիկ գրութեան հնարը գտել են (գոնէ հաղար տարի Քրիստոսէն առաջ), հրահանգված ազգերու մէջ միշտ գտնուել են այնպիսի մարդիկ (հեղինակներ, պատմագիրներ), որ գրում են եղել այն ամեն նշանաւոր անցքերը, ինչ որ սլատաՏում են եղել իրանց ժամանակումը, կամ ինչ որ լաւմ են եղել ուրիշներէն, մինչև որ գտնուել է տալա-



գրութեան հնարը Քրիստոսէն իբրև 1400 տարի յետոյ:

Ամբողջ մատեաններու օրինակելը շատ ժամանակներ էր պահանջում և շատ ծախք, այս պատճառաւ այն միջոցներումը գրքերը շատ դժար էին գտնվում՝ քան թէ այժմ, և մէկ քանի մատեաններ-էլ, որ շատ օրինակուած չէին, յետ ժամանակաց՝ երբ-որ ուսմանց համար աւելի հոգ չէին անում, իսպառ կորչում էին: Այստեղէն դուրս է գալիս այն, որ թէպէտ գիր եղել է ևս, սակայն մենք այժմ տակաւ տեղեկութիւն ունինք հին ժամանակի մէկ քանի աշխարհներու, տէրութիւններու և աղգերու համար: Ի հարկէ աւելի վատը այն ժամանակներու բանն է, երբ-որ մարդիկ դեռ գրել կարգալ չէին իմանում: Այդ դարերումը մէնակ բերնով էին մէկ մէկու պատմում նշանաւոր անցքերը, հայրը որդուն էր աւանդում, որդին՝ թոռին, և այս կերպով պահվում մնում էին աւանդութիւններու մէջ յիշատակարաններու (հողակոյտ բլուրների, կանգնեցուցած քարէ արձաններու, սիւներու, հին ծառերու, հին շինուածներու, ա-

ւերակաց մնացորդներու, տեղերու անուն  
դներու մէջ) Տին դիպուածներու յիշատակը:  
Այդ անցքերու պատմութիւնը բերնէ բերան  
անց կենալով՝ քիչ-քիչ փոխաբերակում էր, և  
կամ նուազեցուցած ու կամ աւելացուցած  
էր յետնոց առաջը դրվում, և այն միջո-  
ցումը ժամանակակից մարդոց համար դը-  
ժար և շատ անգամ անկարելի էր լինում  
ճշմարիտ անցքը իմանալ. ապա քանի՞ ա-  
ւելի դժար պիտի լինէր այն, երբ-որ լսե-  
լով իմանանք այն անցքերը, ինչ որ քանի  
հարիւր տարիներով առաջ են քան զմեզ  
պատահել:

Աւրեմն զարմանք չէ, որ մենք այսքան  
սակաւ ենք իմանում այն ժամանակներու  
ստոյգ անցքերը, երբ-որ մարդիկ դեռ չէին  
իմանում դպրութիւն: Այս պատճառաւ կա-  
րելի է աներկբայ ասել, թէ Տին աշխարհ-  
ներու և Տին աղգերու վաղնջուց պատմու-  
թիւնները շատ մթաղին են: Այս պատ-  
մութիւնները ըստ մեծի մասին սկսվում են  
բանաստեղծութիւններով և վիպասանական  
առասպելներով (հեթանոսական), որովհետեւ նո-  
ցա հիմքը են միայն աւանդութիւնները և



վիպասանութիւնները, որ շատ անգամ այն  
անցքերէն քանի հարիւր տարիներով յե-  
տոյ են հնարուած հեղինակներու ձեռքով:  
Շատ ազգեր կան, որ մինչև այսօր ևս չեն  
իմանում դարութիւն (գրել կարդալ), շատն  
էլ կան, որ թէպէտ և իմանում են, բայց  
կան չունին շարագրողներ, կան նոցա շա-  
րագրածները և հեղինակները մեզ անծանօթ  
են. այս պատճառաւ՝ հին ազգերու հին  
պատմութիւնէն մենք շատ քան չենք իմա-  
նում, և շատ անգամ-էլ ոչինչ չենք իմա-  
նում: Այս կարելի է ասել յատկապէս Ա-  
մերիկայի, Ափրիկէի և Հարաւային-Հնդկա-  
ստանի վայրենի ազգերի համար, նոյնպէս և  
ուրիշ հեռաւոր աշխարհներու համար, ինչ-  
պէս են Հնդկաստան, Չինուամաչին, Մոնղո-  
լաց աշխարհք, Եսիոնիա, և այլն:

Քանի որ աւելի բարեկիրթ են ազգերը,  
այնքան աւելի շատ են նոցա մեջ հեղինակ-  
ները, և այս պատճառաւ մենք աւելի ենք  
իմանում հրահանգուած (ընկերակաթ) ազգերի  
պատմութիւնը, քան թէ ուրիշ ազգերու,  
և աւելի այն ազգերինը, որք կան Եւրոպա-  
յումն են և կան նորա մօտիկ տեղերումը:

Քրիստոնէական դարերէն առաջ մեզ ծանօթ ազգերու մէջէն քան զամենը բարեհրահանգ էին Յոյնք և Հռոմայեցիք, և այս պատճառաւ նոցա պատմութիւնը մեզ աւելի ճիշդ յայտնի է :

Նոյնպէս և Հրէից ազգի անցքերու համար մեզ մանրամասն տեղեկութիւն է տալիս Աստուածաշունչ մատեանը : Այլ այսու ամենայնիւ շատ սակաւ ծանօթութիւն ունինք հին ժամանակներու երևելի ազգաց համար, Ասորեստանեաց, Բաբելացոց, Մարաց (Մէդացոց), Փիւնիկեցոց, Եգիպտացոց, Կարթագինեցոց, նաև Գերմանացոց : Գրեթէ իսպառ անծանօթ են Հնդկաց, Չինուամաչինի, Արարներու և այլ ազգաց անցքերը :

Համարեա՛ թէ 1000 տարի քան զայս առաջ պատահած երևելի անցքերը մենք գիտենք ոչ թէ միայն պատմաբաններու գրուածքներէն, այլ և ուրիշ գրութիւններէց, զորօրինակ՝ դաշնագրութիւններէն, պայմաններէն, տէրութիւններու և հեռաւոր քաղաքներու մէջ հաստատած դաշնագիրներէն, երևելի մարդոց գերդաստանական համբաւներէն, նշանաւոր կարգա-



դրութիւններու համար եղած ծանօթութիւններէն կամ լուրերէն, և այլն: Այսպիսի գրուածքները ասվում են վաւերագիր (տօնագրեր), և շատ ծանրակշիռ բաներ են պատմութեան համար, և այս պատճառաւ աւելի խնամքով են պահւում՝ նոցա համար պատրաստած առանձին պահարաններու կամ դիւանատան մատենադարաններու, թանգարաններու կամ հնարաններու (archive) մէջ:

Հարկաւոր են նմանապէս բանաստեղծական առասպելներն-էլ պատմութեան համար և անշուշտ պէտք են ժամանակագրութիւնները և աշխարհագրութիւնները՝ պատմութեան տեղեակ լինելու համար:

ԱՍՈՐԵՍՏՆԵՍՅԵ ԵՒ ԲՍԲԵԼՍՑԻԲ

2

Եսիպի միջավայրի երկիրներումը՝ գետ և վաղնջուց ժամանակներու մէջ կազմակերպուել էին մեծ-մեծ տէրութիւններ: Մենք սակաւ ինչ ենք խմանում նրանց հընադոյն պատմութեան մէջէն. ասացուածքները

սրահել են մեղ համար միայն թերակատար տեղեկութիւններ :

Ասորեստանումը (ուր-որ Տիգրիս գետի վերի հոսանքներն են՝ Պարսից և Տաճկաց բարձրաւանդակներումը , և ուր այժմ բնակվում են աւաղակ ֆիւրդ ազգերը ) մէկ ժամանակ Նինո թագաւորը հիմնել էր Նինուէ քաղաքը , և նուաճել էր Ասիայի երկրի շատ ընդարձակ գաւառները (Քրիստոսէն իբր երկու հազար տարի առաջ) :

Նինոսի կին Եսթրամ թագուհին շքեղաշուք զարդարելով Բաբելոն քաղաքը Եփրատի գետեղերքումը՝ արաւ աշխարքի մէջ գերահոչակ մայրաքաղաք , և Ասորեստանցիք տիրապետում էին 1000 տարիէն աւելի Պարսից բարձրաւանդակին , (Մարաս , Մէրաս աշխարքին) և նորա ամայի դաշտերու մօտ ընկած Եփրատայ և Տիգրիսի առատաբեր հովիտներուն (Բաբելոն) : Սարգանապալ թագաւորի դէմ , որ պարանոցաթաղ էր եղել արքունեաց հեշտաւէր կենցաղավարութեան փափկութեանց խոր տիրմումը՝ աստատմութիւն հանեցին իրա փոխարքաները : Երբ որ Նինուէ կործան-



վեցաւ՝ դուրս եկան նորանոր տէրութիւններ (820 թուին), որոնցմէ ճանաչում ենք միայն Արևմտեան թագաւորութիւնները՝ Հայաստան, Ասորիստան, Մարս և Բաբելոն, որ Հրէից ծայրագոյն թշնամիներն էին: Գեր ևս Ասորեստանեայց թագաւորները՝ Փուլ և Թաշլակապատար յաջողակ պատերազմներ էին արել Հրէից դէմ: Սուլմանապար վերջապէս (722) նուաճեց Իսրայէլացոց թագաւորութիւնը, և փոխադրեց նորա բնակիչներուն Իրանց Յովսիս թագաւորի հետ միասին Ասիայի միջավայրի երկիրները, որով Իսրայէլացոց թագաւորութիւնը վերջացաւ: Քան զայս աւել լաւ չեղաւ Յուդայի թագաւորութեան վիճակն-էլ: Հրէից մէկ մասն գերի դնաց Նաբո֊Գոդոնոսոյն ձեռքով դէպի Բաբելոն. իսկ Երուսաղէմի և նորա ամրոցի և տաճարի քանդուելից 20 տարի յետոյ Հրէից թագաւորը Սեբե֊ն և բոլոր ժողովուրդը նոյնպէս գերի բնկած գաղթեցան դէպի նոյն կողմը (586): Այս է «Բաբելոնեան գերութիւն» ասածը, որ տևեց եօթանասուն տարի: Իրանց հայրենիքէն հեռի՝ Ասորեստանումը, Մարաց աշխարհումը

և Բարիլոնուժը՝ ստացան Հրէայք նոր բը-  
նակութեան տեղեր, և անազան զղջացան  
Տեթանուսաց լուծի տակը՝ իրանց ԵՏովայի  
պատուիրաններուն անհնազանդ դտնուե-  
լու համար:

Հ Ս Յ Բ

3

Արք-որ ջրհեղեղէն ետքը մարդիկ բազ-  
մացան Նոյեայ տապանի նստած սարի չորս  
կողմը այնքան, որ է՛լ նոցա տաւար-ոչխարի  
համար արածելու տեղ չըմնաց, ու սկը-  
տան ցրիւ ընկնիլ աշխարքի ամեն կողմը,  
Թորգոմի որդի Հայն-էլ շատերու հետ միա-  
սին դնաց Միջագետք և այն տեղ բնակուե-  
ցաւ, տան տէր դառաւ և ունեցաւ որդիք՝  
Արֆնակ, Մանասակ, Խոս, և ուրիշ, և Արմե-  
նակն-էլ ունէր ուտոերք՝ Արմայիս, Կարմոս և  
ուրիշ: Աշտարակի կործանուելէն յետ, երբ  
որ Ներրոդ ուզեց ամենի վրայ իշխել՝ Հայկ  
չուղեց նորա ձեռի տակ մնալ, ժողոտեց իւր  
տունը-տեղը և յետ եկաւ էլի իրա բնիկ  
երկիրը, և ճանապարհին բնակուեցաւ Աղ-



Թամարայ ծովի մօտ Հայք գաւառումը՝  
Նահապետ անունով:

Ներքող եկաւ՝ որ Հայկին յետ տանէ.  
մէջերը ընկաւ կռիւ, և Հայկը նետով սպա-  
նեց Ներքողին և հիմնեց նահապետական  
անկախ տէրութիւն, որ նորա անունով  
ասուեցաւ Հայաստան, և նորա ընակիչքը աս-  
վեցան Հայք (Քրիստոսէն 2500 տարի ա-  
ռաջ): Հայկի ժառանգած երկիրը ասուեցաւ  
Մէծ Հայք:

Հայկէն ետքնորդը՝ քաջն Արամ երեք  
յաջողակ պատերազմով Հայաստանի սահ-  
մանները ազատեց թշնամիներէն և լայնա-  
ցուց. Նինոսի աշխարհակալութեան ժամա-  
նակը՝ աւելցուց Մեծ-Հայքի վրայ՝ Փոքր  
Հայքը: Արամի որդի Արայ գեղեցիկ չըկամե-  
նալով Շամիրամին ամուսնանալ՝ Ասորեստա-  
նեայց դէմ պատերազմի մէջ մեռաւ, և Մա-  
սեաց սարը, որոյ ասորոտումը պատահե-  
ցաւ այն կռիւը՝ անուանուեցաւ Արարատ,  
և ճակատամարտի դաշտը ասուեցաւ Արա-  
րատէան, ինչպէս և բոլոր Հայաստանի տէրու-  
թիւնը:

Ասորեստանեայց տիրապետութիւնը շատ

չլուսեց Հայաստանի վրայ: Երբ-որ Հայկաց  
ուղղագիծ սերունդը սպառեցաւ Անուշա-  
ւանի հետ, Հայոց նահապետները տիրապե-  
տեցին մինչև Սկայորդին: Սորա որդին Պար-  
ոյր (646) Սարդանապալի դէմ օգնութիւն  
գնաց Մարաց ու Բարեւրացոց, և Նինուէի  
քանդուելէն յետ սրահուեցաւ երեք թա-  
գաւորաց հաճութեամբ՝ Հայոց Թագաւոր:

Պարոյրի յաջորդներէն մէկը՝ Մէծն-Տեգ-  
րան (570) Կիւրոսի ժամանակակից, դաշնա-  
կից և նիղակակից՝ շատ օգնեց Հայաստանի  
հրահանգութեան և բարեկրթութեան յա-  
ռաջադէմ զարգանալուն: Պարոյրի և Տիգ-  
րանի ժամանակը Հայաստանին կցորդուե-  
ցաւ Մեծագէտ Հայոց:

Այս ցեղի վերջին թագաւորը՝ Վանայ  
որդին Վահէ, Ալէքսանդր Մակեդոնացիի  
դէմ Պարսից Գարեհ վերջին թագաւորին  
օգնութիւն անելով՝ մեռաւ, և Հայկազանց  
թագաւորութիւնը վերջացաւ (Քրիստոսէն  
380 տարի առաջ):



ՓԻՒՆԻԿԵՑԻՔ

4

Այժմեան Ասորիքի ծովափներումը՝ Պալեստինէն դէպի Հիւսիս էր Փիւնիկեացոց բընակութեան տեղը: Երբ-որ Իսրայէլացիք նուաճում էին Քանանացոց աշխարհը՝ Փիւնիկեցիք ունէին այն ժամանակները Ճոխ, Տղոր ծովեղերեայ քաղաքներ: Տեւոս, (որ այժմ ասվում է Սոս), Սեւոն (Սայդէ) և Արսոս (Ռոսոս) քան զմիւս քաղաքները գերազանց էին: Նաւագնացութիւնը և առուտուրը աւելի հռչակել էին այս աղբի անունը. բոլոր Միջերկրեայ ծովի երեսին լեզ էին տալիս սոցա վաճառականաց նաւերը, և իրանք նաւարկութիւն էին անում մինչև հեռաւոր Ատլանտեան Ավիանոսը, որ դեռ այն ժամանակը աւելի ծանօթ չէր. արծաթ ձեռք ձգելու համար՝ մինչև Իսպանիա, անագ կամ կլայելի հաւաքելու համար՝ դնում էին մինչև Անգլիա, սաթ կամ

2\*



14582-58

բաղճագունի գտներու համար՝ հասնում էին  
մինչև Եւրոպայի արևմտեան ծովեղերը :  
Նոյնպէս համարձակ նաւագնացութիւն էին  
անում Փիւնիկեցոց վաճառականները՝ Արա-  
բացոց և Պարսից ծոցերու ճանխաներով  
մինչևի Հնդկաց Ուլկիանոսը, որ Հնդկա-  
ստանի, Ափրիկէի գանձերը (համեմները,  
բամբակագործ պատտառները, ոսկին, փրղ-  
տակը, թանկագին գոհարները, խունկը)  
բերեն հասցնեն Միջերկրեաց ծովի շրջակայ  
գաւառները : Ասում են, և ճշմարիտ էլ է,  
որ նոքա Ափրիկէի շորս կողմն էլ պտըտել  
են. Փիւնիկեցիք բերում էին անգործ աս-  
րանքներ հեռաւոր տեղերէն, ճարտարու-  
թեամբ գործք էին դնում իրանց հայրեն-  
եաց գործարաններու մէջ, և շինում էին  
առուտուրի զանազան նիւթեր, և փոխա-  
նակում էին (որովհետև ամեն առատուր ի  
սկզբանէ լինում էր փոխանակելով) և այն  
փոխանակածն էլ ծախում էին ուրիշ ազգե-  
րու վրայ մեծ շահերով : Այս Փիւնիկեցի-  
ներուն են ընծայում ոմանք զանազան ծան-  
րակշիռ գիւտեր, ինչպէս և ապակի առաջին  
անգամ շինելը :

30  
1

Խ-ԲԲԶԿ





Արկրայութիւն չըկայ, որ Փիւնիկեցիք շատ կանուխ էին սովորել աստեղագիտութիւնը, նաստաշինութիւնը, ոսկի և արծաթի պրահիք հատանելը, և Սողումնի տաճարը ցոյց է տալիս, թէ նորա ո՞րքան հմտութիւն ունէին շինուածների արհեստագիտութեան քան զամենը գերազանց էր այժմեանի (աթուծայք) գիւտը, որն-որ ընծայում են Փիւնիկեցոց: Աւճառահամութեամբ և արհեստներով նրանք հարստացան, ճոխացան, և ուժ առին, զօրացան, և նոցա ծովեղերեաց փոքրիկ երկիրը, որ միայն մէկ քանի մղոն տարածութիւն ունէր՝ շուտով նեղ համարուեցաւ իրոց ժողովրդի համար: Այս պատճառաւ Փիւնիկեցիք սկսան գաղթականութիւններ հիմնել ուրիշ երկիրներումը: Թարջէն կամ Թարշէշ (Տարսոն, Թէրսիս) և Կարէս (Կարթէս) իսպանիայումը և Ռաթիէ Ափրիկայումը՝ այն գաղթականութիւնների մէջ երևելիքն էին. բայց մենք գիտենք, որ Փիւնիկեցիք բնակութիւններ հաստատեցին և Միջերկրեաց ծովի կղզիներումը, Փոքր Ասիայի և Յունաստանի մէջ ևս:

Փիւնիկէ մէկ հատ տէրութիւն չէր, այլ

ամեն մէկ քաղաք իւր շրջակայքով ունէր  
առանձին թագաւոր կամ քաղաքագլուխ  
(նախարար) որոց իշխանութիւնը հաւատա-  
լի է, թէ էր շատ կոպարափակ: Մեր՝ այս  
երկրի համար ունեցած ծանօթութիւնները  
շատ սակաւ են: Փիւնիկէն-էլ ընկաւ վեր-  
ջապէս Ասորեստանեաց աշխարհակալու-  
թեան ցանկութեան տակ: Սալմանասար (720  
թուին) գրաւեց այս երկիրը, բայց Տիւրոսի  
սլաշարումը եղաւ նորա համար անյաջող:  
Միմիայն Բարեւացոց Նաբոփոզոնասար թա-  
գաւորին յաջողեցաւ (580ին) կործանել  
Սիդոնը և Տիւրոսը: Բայց Տիւրոս յետոյ  
աւելի գեղեցկագոյն ծաղկեցաւ մէկ ծովե-  
ղերքին մօտիկ կղզիի վրայ, ուր-որ բնա-  
կիւնները փախել ամրացել էին իրանց ունե-  
ցած շունեցած հարստութիւններովը:

Յիսուս տարի անցնելէն յետ՝ Պարսիկները  
տիրապետեցին այս երկրին, և Փիւնիկեցոց  
ծաղկիլը այնուհետև վերջացաւ. այլ նոցա  
առուտուրը այն ժամանակ նուազեցաւ, երբ  
որ Մէշն Ալեքսանդր Մակեդոնացին (332 թ.  
Քրիստոսէն առաջ) զկնի յամառ ընդդի-  
մութեան՝ կործանեց կղզիանման Տիւրոս



քաղաքը: Այժմ հազիւ հազ են ճանաչում  
այն տեղերը, ուր-որ մէկ ժամանակ կային  
այն մեծ մեծ քաղաքները. նոցա նաւահան-  
դիւտները համարեալ թէ ծովի բերած ա-  
ւաղով խցուած են. նոցա մեծաշուք շի-  
նուածներու հետքը անգամ մնացած չեն.  
միայն նոցա անուներ սրահուել, մնացել է  
դեռ ևս Ասորիքի ծովեղերեայ մանր քա-  
ղաքներու վրայ:

Ե Գ Ի Պ Տ Ը Յ Ի Ք

5

Պարտադրանք. շինուածք. Գիր. մտախմբութիւն:

Եփրեկէի հիւսիսակողմը, Արարիոյ Ծո-  
ցի արևմտեան ծովեղերքի երկայնու թեամբ  
դրուած է Եփրատը: Այս երկրի արևելեան  
մասը բաղկանում է տկրոր ապառաժ սարե-  
րից և աւաղուտ անջուր հովիտներից. ար-  
ևմտեան մասը կազմվում է աւելի տափակ  
դաշտավայրերէ, և մասամբ ևս քարքարուտ  
և աւաղուտ անասրատների: Այս երկու մա-  
սերու մէջէն հոսելով անց է կենում Ար-  
գեստը, որ Գանգէս և այլ գետերու նման,

ամառնային եղանակին, երբ-որ Ափրիկէի  
սարերու վրայ, որոնցմէն-որ այն գետերը  
դուրս են բղխում՝ հասնում են անձրևնե-  
րու ժամանակները, հեղեղում է իւր տե-  
ղիս տեղիս լայնարձակ դաշտագետինները,  
և սրանով դառնում է Նգիպտոսի համար  
երախտապարզև, այն պատճառաւ որ՝ Նե-  
ղոսի ջրերը տալիս են հողին հարկաւոր  
տամկութիւնը, և նորա տիղմը դառնում է  
ամենաուտարեր հող: Նեղոս գետը Միջ-  
երկրեայ ծովին հասնելէն առաջ՝ բաժան-  
վում է զանազան և շատ առաջքներ, որոնք  
չըջապատում են այն երկրի ամենապտղա-  
բեր գաւառը, որ ստվում է Դելտա կամ  
Ստղին Նգիպտոս, որն-որ հաւատալի է թէ  
բաղկացել է ծովի և Նեղոսի բերած սև հո-  
ղէն: Դեռ ևս Քրիստոսի ծնունդէն 2000  
տարի առաջ էին խմացել այն երկրի բնա-  
կիչքը Նեղոսի առատանալու և իւր գետ-  
ափներէն դուրս գալու շահաւէտութիւնը  
և այս պատճառաւ ջանք էին անում, որ-  
որքան հնար էր, աւելի հեռաւոր տեղեր  
դէս ու դէն տանել ջրերը, թէ՛ խրամներով,  
(որոց մէջէն ոմանք երկայնութեամբ լինում



էին մէկ քանի մզոն) և թէ՛ ջրաբարձ սր-  
տուտակներով և ջրահան անխներով: Սառ-  
րին Ազխատոսը աւելի էր սկսասրելի եղած  
բաղմապատիկ ջրանցքով: Այժմ նոցա մեծ  
մասը քարուքանդ է եղած, և ջրի ճանփա-  
ները խցուած են և խլացած, և այս պատ-  
ճառաւ երկիրն-էլ շատ տեղ ամայացել է,  
որովհետեւ Սառրին Ազխատոսի ջուրը էլ  
չունի իւր սակորակած հոսումներ և այստեղէն  
յառաջացել են մեծամեծ լիճեր, և ծովի  
ափունքը ծածկուել են ցամաք աւաղով,  
որն որ առաջ ջրվում էր, և օրրնատօրէ այն  
աւաղակայանները աւելանալով մեծացելն  
այնպէս, որ քաղաքները, որոնք-որ առաջ  
էին ծովեզերքումը, այժմ շատ հեռացած են  
ծովէն:

Ներսի առատարեր հովիտներու և Քել-  
տայի հողագործակէանք, ի հարկէ, էր այն-  
տեղի բնակչաց գլխաւոր բան ու գործքը,  
բայց անապատներու բնակիչքը կարող էին  
ապրիլ միայն ինչպէս վրանարնակ (նոմադ),  
որ սրանդխտական շրջադայելով իրանց խա-  
շինքներու հետ՝ երբեմն այստեղ էին հան-  
դըստանում, երբեմն այնտեղ սրարարտարօտ



մարդագետիներու մը : Իսկ և իսկ այնպէս,  
ինչպէս որ այժմ-էլ է, քաղաքները կային  
միայն Նեղոսի գետեղերքումը, Արարացի  
Քէզուիները վազվզում էին աջ ու ձախ  
անապատներու մէջ :

Մէկ ժամանակ Նեղոսի երկրի բնակիչ-  
քրն էին հզօր, և ծաղկած տէրութիւններ և  
քաղաքներ կային այս գետի հոսած գա-  
լառներու վերի կողմերումը մինչևի Հապէ-  
շիստան (Ս. Բ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ., Խաւիշկաց աշխարհ)  
և այս պատճառաւ Հրէից ազգի առաջա-  
ւորները իրանց կարիքի ժամանակը՝ Եգիպտոսէն  
էին ստանում հացը : (Ս. Ես կարելի  
է թէ ակնարկում է Յակոբ նահապետի որ-  
դոց ցօրենի համար Եգիպտոս երթալուն,  
կամ սուրբարար յետոյ և առաջ վաճառա-  
կանաց երթելելութեան :)

Հին Եգիպտացիք հողագործութեան  
հետ միասին սրարապում էին գեղարհեստ-  
ներով և ձեռագործներով, և նոցա քուր-  
մերը իմանում էին Չափաբեկութեան, Աստի-  
ղաբաշխութեան, Ճարտարապետութեան, Պատմա-  
բանութեան իրանց երկրի և այլ ուսմանք, որն-որ  
կարելի է թէ՛ նոցա նախնիքն էին բերել

Հնդկաստանէն: Եգիպտոսցիք շինուամ էին մեծակառոյց տաճարներ և արքունական ապարաններ, որոյ աւերակները մինչև այս օրերս-էլ մնացել են (3000 տարիէն աւելի) և շարժում են ամենեցուն զարմանքը իրանց մեծակառոյց և շքեղաշուք կերտուածներով. այլ աւելի զարմանալի է Թէբաս՝ Հին Եգիպտոսի մայրաքաղաքի աւերակը, այնքան լայնատարած, որ այժմ նորա մէջ գտնուում են քանի քանի հատ մէկ մէկէ շատ հեռու գեղեր: Քան զամենն աւելի սքանչելի են Բուսիդէսը (պերսիք), որք են քառանկիւնի, մեծ-մեծ քարերէ շինուած կերտուածներ, որ վերի կողմերումը քիչ-քիչ նեղանում են, որոց մեծագոյնը ունի մինչև 450 ոտնաչափ բարձրութիւն, և 700 ոտչ. լայնութիւն. ուրեմն բարձր է քան զամեն Եւրոպայի մէջ գտնուած բարձրագոյն աշտարակները: Անտիէրպէնի աւագ եկեղեցու զանգակատունը ունի միայն 444 ոտչ. բարձրութիւն: Միւնստէր անուանած Ստրազբուրգի աշտարակը ունի 438, Վենայի սուրբ Ստեփաննոսի զանգակատունը ունի 436, Հռոմայ սուրբ Պետրոսի եկեղեցին՝ 408 ոտչ. բարձրութիւն:



Տուրգերը թուով քառասուն հասնեն,  
միասին կանգնած արեմտեան անասլատու-  
մը. սոքա էին բնակարան, այլ միայն թա-  
ղաւորներու յիշատակարան էին, և իրանց  
մէջ ունէին մէկ քանի նեղ ու անձուկ ճան-  
փաներ (հօրհօր) մէկ սենեակ ևս, ուր-որ  
հանգստացած էր մէկ հասն մեռելի դիակ:  
Ս.յն քարերու մեծ-մեծ կտորները, որոնց-  
մէն-որ շինուած էին այն յիշատակարան-  
ները, բերուած են հեռաւոր տեղերէ, շատ  
մեծ դժուարութիւններով: Մնչպէս մեքե-  
նաներ և քանի՞ ձեռք էին հարկաւոր այս  
սարսափելի վէմերը կտորակելու, տաշելու,  
այնքան մղոն հեռաւորութեամբ տեղէտեղ  
տանելու, և այնքան բարձր պատուանդան-  
ներու և շինուածներու վրայ զետեղելու  
համար: Նոյնպէս մեզ աւելի զարմացնում  
են քարիւղները (օճէլի) քառանկիւնի մէ-  
քիչ դէպի վերի կողմը սրածայր բարձրա-  
ցած սիւները, որոնցմէ ոմանք ունէին մին-  
ջև հարիւր ոտչ. բարձրութիւն և շտան-  
էլ կտրած էին միտազաղաղ քարէ: Այսպիսի  
քարիւթոյններ շատ փոխադրեցին Հոռմայեցի  
կայսերք Հոռմ քաղաք, որ մինչև այսօր-էլ



այնտեղ կան, և մէկն-էլ նորերումս բերուեցաւ Փարեզ:

Նդիպատացոյ նշանաւոր շինուածներէն մէկն-էլ էր Նաբիւնիտա, որ հանդիսացած էր իւր հիանալի մեծութեամբ: Հաւատալի է, որ այս Նարիւրինթոսը շինած էր միայն աղիւսակերտ, որովհետև հազիւ թէ ոմանք կարողանում են նշմարել նորա հիւքերու հետքը:

Նդիպատացիք արժանի են նկատման և իրանց գրի առանձին տեսակով: Այս գիրը չէր բաղկացած տառերէ, ինչպէս որ Փիւնիկեցոյ կամ ուրիշ հին ժամանակուայ ազգերու գրութիւնը, այլ կենդանիներու, բոյսերու և այլ առարկաներու ձևակերպութեան էր կազմած, որոնցմէն ամեն մէկը նշանակում էր մէկ բառ, և միայն քուրմերն էին կարող կարգալ: Այս նշանով գրերը ասվում էին Քիւնտարոշ (𐎧𐎡𐎴𐎠𐎵): Ժողովրդեան համար կար ուրիշ ասլորական և ամենեցուն հասկանալի գիր: Նշանագիրները երևում են գծադրած քարկոթողներու վրայ, հին շինուածքներու վրայ, և մեռած մարդ պահելու քարանձաւներու պա-

տերի վրայ, որոնք որ խոր խոր կամարա-  
կապ ճանփաներով փորփրած են ապառաժ  
սարերու մէջ, և որոց մէջ շատ անգամ  
մինչև այս օր էլ դտնում են հաղարաւոր  
Տումանի, այսինքն ճարտարարուեստ հնար-  
ներով չորացրած դիակներ, որովհետև Եգիպտ-  
տացիք չունէին սովորութիւն գեանի մէջ  
թաղել կամ այրել մեռելներուն, ինչպէս որ  
Յոյնք, Հռոմայեցիք և հին Գերմանացիք,  
այլ հանելով մեռելի փորոտիքը՝ զմըռսում  
էին դիակները՝ հողէն բղխած խէժով, քաղց-  
րաբուրեան օժանելիներով, և անուշահոտ  
խոտերէններով, (որոց զանգուածը ասում  
էր Բուլսան) և ցամաքեցնելով՝ կատարեալ  
ասուխտ էին շինում, և երկայն երկղներու  
մէջ փաթթած պահում էին գեանափոր այ-  
րերումը, ուր որ այն դիակները մնում էին  
անփնաս հաղարաւոր տարիներ: Մումիանե-  
րու հետ միասին շատ անգամ դտնվում են  
պատկարասի փաթոյթներ: Այս փաթոյթներու  
մէջ լինում են համառօտ կամ երկար դրած  
նշանագիրներ կամ ուրիշ սովորական տա-  
ռերով դճագրած բաներ, կամ թղթի կը-  
տորտանք, որ Եգիպտացիք շինում էին մէկ



Ջրային շուշանակերտ բոյսի կճեպանման տե-  
րեներէն, որ Նեղոսի գետափներումը էր  
յաճախ բսնում, և ասլում էր սրապիրուս:

6

Առանձնապարմութեան. կրօն. վաճառաշահութեան.  
պարմութեան:

Նկատելու արժանի է ժողովրդի բաժան  
բաժանութիւնը՝ զանազան դասակարգի կամ  
համարուեստութեան վրայ (սասն, առանձ-  
նազարմութիւն), ինչպէս որ մինչև այսօր  
էլ Արևելեան Հնդկաստանումը (Օտտ-Ինդիա)  
երևում են: Ինչպէս որ վերը ասուեցաւ,  
սրաամարաններէն ոմանք կան, որ կարծում  
են թէ՛ Եգիպտացոյ քասթերը էին չրմայ,  
զինուորաց, հողագործաց և արհեստագորաց ա-  
ռանձնազարմութիւնք: Ո՛չ ոք չէր կարող  
իւր սեփական հակամիտութեամբ ընտրել  
իրա համար իրա ուղեցած բանուգործը,  
այլ ամեն մարդ պիտի մնար իւր առանձ-  
նազարմութեան համարուեստի մէջ, այս-  
ինքն՝ իւր բանուգործը այն էր, ինչով որ  
իւր հայրն-էլ էր սլարապել: Միմիայն քուր-  
մերն էին աստեղաբաշխ, ուսումնական,

բժիշկ, օրէնագէտ, ընդհանրապէս՝ միմիայն  
ուսումն առած հիպոկրատն, և այս իսկ պատ-  
ճառաւ ունէին նորա բնականաբար մեծ  
տղղկեցութիւն բովանդակ ժողովրդեան վը-  
րայ: Քայլոր իշխանութիւնը էր զինուորնե-  
րու ձեռին, որոնցմէն էին լինում թագա-  
ւորներն-էլ: Մնացած ժողովուրդն էր ճոր-  
տի նման: Քան զամենը անպատիւ էին հո-  
վիւները: Սրամով է բացատրուիւմ այն հա-  
լածանքը, որոյ մէջ որ կային սկզբումը թա-  
փառական խորայէլացիք:

Ազիպտացոց կրօնի համար միայն այս-  
քան զիտենք, որ նորա շատ աստուածու-  
թիւններ էին պաշտում՝ Ոսկրանն, Իզեթայնն,  
և այլն, և սրբազան էին համարում մէկ  
քանի կենդանիներու, եղջերաւոր անասուն-  
ներուն, հաշտհատին և ուրեք ուրեք՝ մինչև  
հոշորակրաններուն էլ, և շունկորանն, և այլ էրէ-  
ներու, այսինքն աստուծու տեղ պաշտում  
էին նորա մէկ ցուլ՝ Ապի անունով, որ  
պիտի ունենար սրայմանեալ գոյնը և նշան-  
ները, և բաց յայսմանէ նորա հաւատում  
էին հոգի-փոխութիւնն, իբր թէ մարդու մեռ-  
նելէն յետ, երբ որ քիչ ժամանակ անց է



կենում՝ հողին մտնում է մէկ ուրիշ կեն-  
դանի մէջ:

Աւելի հին ժամանակները նորա խորշում  
էին այն ազգերու հաղորդակցութենէն, ո-  
րոնք որ ծովային առուտուր էին անում,  
այլ սորա փոխանակ անընդհատ շարունա-  
կում էին ցամաքային (կարաւանական) վա-  
ճառաշահութիւնը, ինչպէս այժմ ևս՝ հա-  
րեան ազգերու հետ: Ամենեցուն յայտնի  
է, որ Յովսէփին երբ որ ծախեցին իւր եղ-  
բարքը՝ Եգիպտոս բերին վաճառականները:  
Այլ Ալէքսանդր Մակեդոնացիէն յետոյ այս  
փոխակցաւ, որովհետև յետին երեք դարե-  
րումը Եգիպտացոյ ծովային առուտուրը էր  
գերազանց քանզ ուրիշ տեղերու վաճա-  
ռաշահութիւնը: Սուէզի կիրճումը Նեղոս  
գիտը միացրած էր Արաբացոյ ծովի հետ  
(Կարէի Ժովէ):

Հին ժամանակներումը Եգիպտացոյ աշ-  
խարհի մէջ կային շատ թագաւորութիւն-  
ներ, որոց մէջ Թերասի թագաւորութիւնը  
էր քան զամենը հզօր, յետոյ Մէմփոս (այժ-  
մեան Քայիրոյէն մէքիչ հեռու) դառաւ գլխ-  
խաւոր մայրաքաղաք այս աշխարհի, որ այն

Ժամանակը ունէր մէկ թագաւորութիւն :  
Հին թագաւորներու մէջ յիշատակի արժա-  
նի է Մէնէս, Սէղոսայիս, որ Տաշակլաճ է իւր  
աշխարհակալութիւններով Ափրիկէի և Ա-  
սիայի մէջ, և Քէոպս՝ որ շինեց քան զա-  
մեն աւելի բարձր մահարձանը: Այս երեք  
թագաւորները էին Քրիստոսէն 2000 և 1000  
տարի առաջ: Պատմէտիքոս միւսորեց բոլոր  
Եգիպտացոց թագաւորութիւնները 650  
տարի Քրիստոսէն առաջ: Վերջին թագա-  
ւորն էր Պատմէնխոս, որ 525 թուին յաղ-  
թուեցաւ Պարսից Կամբիսէս թագաւորէն  
(Կիւրոսի որդի) և Եգիպտոս խալառ ընկաւ  
նորա իշխանութեան տակ:

ՀԻՆ ՍԶԴԵՐՈՒ ՄԷՋ ԵՐԵՒԵԼԻՆԵՐԸ

7

Նախնի աղգերը, որոնց որ մեզ ցոյց է  
տալիս Պատմութիւնը՝ են Ասիայի մէջ Ա-  
սորեստանեացք, որն որ վերը ասուեցաւ,  
յետոյ են Հայք և Մարք, Բաբելոնցիք,  
Հրէայք, Փիւնիկեցիք, ՓորքԱսիացումը՝



Փոխադասիք և Տրոյացիք. Ափրիկայումք՝ Ե-  
գիպտացիք և Կարթագինացիք. Եւրոպայու-  
մք՝ Յոյնք: Հնդկիք առանց երկբայու թեան  
էին սոցա ժամանակակիցք և սոցամէն առաջ  
ևս կրթուած աղք, ունէին լաւ լաւ թա-  
գաւորական կառավու թիւններ, սլարասլում  
էին վաճառաշահաւ թեամք և արհեստներով,  
և էին ծանօթ գեղարհեստներու և գիտու-  
թեանց. բայց այն աղղի վաղընջուց վիճակը  
մեզ անյայտ է իսպառ, բայ ի բանաստեղ-  
ծական զրոյցներէն: Նոյնը սկիտի ասել և  
Չինումացիներոց համար:

ԵՐԲՅԵՑԻՔ ԵՒ ԵՐԲՆՆԱՄ

8

Այնաժառաղ անաստատներումք, որ տա-  
րածվում է Տիգրիսի և Եփրատի դաշտա-  
վայրներէն մինչի Ասորի-Արարիացի բարձ-  
րաւանդակը, կենում էին թափառական աղ-  
ղեր Արարացի ցեղէն: Սորա չունէին հաս-  
տատուն բնակարան, և միայն այս երկու  
գետերու ափներումք կազմվեցան յետոյ ա-  
ռուտուրի սլատճառաւ քաղաքներ, ինչպէս

որ այժմ էլ է պատահում: Այս թափառա-  
կան ազգերու մէկի գլխաւորն (Շէյխ կամ  
Էֆէ) էր Ահմէտ Թարայի որդին: Այս  
բոլոր ազգերու կրօնն էր հեթանոսութիւն:  
Այլ Աբրահամ հաստ ճշմարիտ Աստուծոյ  
ճանօթութեան, որոյ պաշտօնն-էլ մշտնջենա-  
ւորեց իւր սերնդոց մէջ: Հրէեց ազգը իւր  
նահապետ կամ նախահայր էր խոստովա-  
նում Աբրահամին, և նորա կրանելի յետ-  
նորդաց, որոց յիշատակը շատ է մեծար-  
վում նաև Մահմէտականներէն:

Աբրահամ (1900 կամ 2000 տարի Քրի-  
ստոսէն առաջ) դուրս եկաւ իւր եղբոր-  
որդւոյ Ղովտի (Աբէ) և իրանց խաշինքնե-  
րու և ծառաներու և աղախիններու հետ  
միասին Միջագետքէն (Ուր, Ուրհայ՝ Քաղ-  
ղէացոց երկրումը) և ճանփաց ընկաւ դէպի ա-  
րևմուտք, առաջ՝ Խառան, ուր որ մեռաւ  
նորա հայր Թարան, և այն տեղէն-էլ դէպի  
Քանանացոց աշխարհ:

Առեւելակերքի պակասութիւնը ստիպեց  
Աբրահամին երթալ դէպի առատաբեր Ե-  
գիպտոս, ուր-որ նա շատ պատիւ ստացաւ  
այն տեղի թագաւորէն (Փարաօնն) ինչպէս



մեծատուն աղգապետ: Յետ սակաւատե ժամանակ մնալոյ Նգիտոտոսումը՝ նա վերադարձաւ դէպ ի Քանանացոց երկիր: Նորա և Ղովտայ մեծ. մեծ հօտերը արդէն չէին բովանդակվում այն դաշտերի մէջ. և այս իսկ պատճառաւ երկուսի-էլ յօժարու թեամբ բաժանվեցան մէկ զմէկէ, որ մէջերը տարաձայնութիւն չընկնի: Ղովտ դնաց դէպ-ի Յորդանան՝ որ Տէճէր-մէն թովէն անցնելով մըտնում: Մէն-մէն թովէն՝ որ այն ժամանակները ձևացաւ մէկ զարհուրելի երկրաշարժէ. իսկ Աբրահամ մնաց Քանանացոց աշխարքումը: Մեծ էր Աբրահամի կարողութիւնը, որ պատերազմի վրայ հասնելով՝ կարճ միջոցումը կարողացաւ հաւաքել 300 ծառաներէն աւելի, երբ-որ ազատեց Ղովտին՝ ուրիշ աղգապետներու ձեռք դերի ընկած տեղէն. (Աստուածաշունչ Քիրքի մէջ այս աղգապետները ասվում են Թ. 4. 31. 32. 33.) Նոյնպէս պատուելի էր Աբրահամ և ուրիշ աղգերի առջև, այն պատճառաւ՝ որ արդարախոհ էր և վիհանձն: Աբրահամ մնաց հաւատարիմ իւր Աստուծուն, որուն հաստատուն պընդութեամբ ապաւինած էր, և որոյ օրհ-

նութիւնը ճաշակում էր երկրաւոր բարեկաց առատութեամբ: Սա վախճանեցաւ խորին ծերութեան մէջ՝ կեանքի քաղցրութիւնը վայելելէն յետ:

ԻՍՍՀՍԳ ԵՒ ՅՍԿՈՐ

9

Արրահամի որդեքը Իսահակը, և թոռները Յակոբ և Եսաւ մնացին անխախտ իրանց նախնեաց կենցաղաւարտութեան տարազի մէջ: Յակոբ, որոյ որդոցմէն Հրէայք դուրս են բերում իրանց երկոտասան ցեղերու ազգաբանութեան ծագումը, իւր դէպի Եգիպտոս ճանախորդութիւն անելով պատճառ դառաւ իրանց բնակութեան տեղը փոխելուն, այս ունեցաւ մեծ ազդեցութիւն բովանդակ աղգի վրայ: Քերդաստանի մէջ պատահած մէկ անսովոր անցք ստիպեց նրանց դէպ ի այս ճանախորդութիւնը: Յակոբի որդի Յովսէփը, որին որ իւր կըրացրները ասում էին այն մասին, որովհետեւ նա սիրելի էր իրանց հօրը, ծախվեցաւ անաստի մէջ անց կեցող կարաւանին և տարվեցաւ ինչպէս դերի՝



Եգիպտոս, և այն տեղ ընկաւ արքունական  
պաշտօնի մէջ: Երբ որ հայի պահապան թեան  
ժամանակը նորա հայրը՝ Յակոբը իւր նախ-  
նեաց սովորաւ թեամբ աստիճանեցաւ Եգիպ-  
տոսին, միւս եղբայրները ճանաչեցին ու գը-  
տան իրանց եղբորը Յովսէփին: Բազդն և  
խմաստութիւնը, ինչպէս որ այժմ էլ շատ  
անգամ է պատահում արևելքումը, ոչ թէ  
միայն պատեցին նրան ծառայութենէն, այլ  
և օգնեցին նրան գտնել մեծ մեծ պատիւ-  
ներ՝ ինչպէս հզօր սիրելի և խորհրդակից  
Թագաւորի (Փարաւոնի): Յովսէփը որ վեհանձ-  
նութեամբ մտապահան տուեց եղբայրներու՝  
իրան արած շարիքը՝ հրաման խնդրեց իւր  
հօր համար՝ գողթիլիլ դէպ ի առատարեր  
Սփորին Եգիպտոսը (Երևելքի Գեղեղ) իւր ըն-  
տանեաց հետ (1800 տարի Քրիստոսէն ա-  
ռաջ):

Նախահայրը Հրէից.

Թարայ.

Առան.

Նաբոր.

Աբրահամ:

Ղովտ.

Խահակ.

Խամայել:

Որդիք Իսահակայ

Յակորբ.		Եսառ.
Քուրբն.	Մար.	Մար.
Շմառն.	Սահր.	Մար.
Յուգայ.	Խաւքար.	Մար.
Գան.	Չարուզն.	Մար.
Կեփթաղիմ.	Ղևի.	Մար.
Քար.	Յուկեփ.	Մար.
Սահր.	Բնեխաղիմ.	Մար.
Խաւքար.		
Չարուզն.		
Ղևի.		
Յուկեփ.		
Բնեխաղիմ.		

Մանասէ. Եփրեմ.

ԵՐԻՍՅԵՑԻՔ ԵԳԻՊՏՈՍՈՒՄԸ. ՆՈՑՍ ԳՍԼԹՈՒԻԼԸ.  
ԹՍՓՆՈՍԿՍՆ ԿԵՍՆՔԸ ՍՐԱԲԻՍՏՍՆԻ  
ՍՆՍՊՍՏՈՒՄԸ.

10

Եգիպտոսումը՝ Յակորբի տասնուերկու  
որդւոց սերունդը՝ իրանց նախնիներու սո-  
վորութեամբ անցուցանում էին նոճադաշան  
(խաշնադարման) կեանք: Եգիպտացիները  
միշտ արհամարհանօք էին մտիկ անում  
այս սրանդուխտներու վրայ, որովհետև նոքա  
ո՛չ ծագումով էին նրանց նմանում, ո՛չ լե-  
զուով, և ո՛չ կրօնով, ո՛չ կենցաղավարու-  
թեան եղանակով, ո՛չ բարքերով, և ո՛չ եր-



բէք կամենում էին Եգիպտացոց կենաց և վարուց ձևերը իրանց մէջ ընդունիլ: Եբրայեցիներուն սկսան ատել, երբ որ երեք չորս հարիւրամեակ (քառ) անց կացան, և նոքա այնքան շատացան, բազմացան, որ նոցա բազմութիւնը սկսաւ երկրի համար վտանգաւոր երևիլ: Այս աչքէ գծած օտարականներու հետ սկսան ինչպէս գերիներու կամ ծառաներու հետ վարվիլ: Նրանց նեղութիւններ էին տալիս ծանր և խիստ ծառայութիւններով: Այս խաշնարած աղբի վրայ, որ սովոր չէր երկարատև և ուժէ վեր աշխատանքի, դնում էին ծանր աղիւտարկութեան արքունական սակ, և նրամով ուղում էին, որ նոքա թողնին իրանց նախնեաց կենցաղավարութեան ձևը, որ Եգիպտացոց աւելի ատելի էր: Այն ժամանակ դժկամակութիւնը տիրապետեց բոլոր Հրէից ազգին. նոքա միտք բերին իրանց նախնի բնակարանները (Քանանացոց երկրի սարարտ դաշտերը), նոցա սրտերու մէջ զարթեցաւ անսորաաներումը ազատ սպրեւտու ցանկութիւնը, և խորայէլացիք յօժարութեամբ միտքերը բերին իրանց վաղնջուց ժողո-

վրդեան մէջ տարածված աւանդու թիւնը,  
որով հաւատում էին թէ իէհովան իրանց  
նախահօրը Աբրահամին և նորա զաւակնե-  
րուն խոստացել է Քանանացոյ սրտագրեր  
դաշտերը և հովիտները:

Աբրայեցոյ մէջ դուրս եկաւ մէկ մարդ, որ  
շատ ցաւակից էր ժողովրդեան թշուառու-  
թեանց: Ամբամի որդի Մ<sup>ո</sup> + Է + Բ, որ իւր  
ճննդեամբ և իւր անդեամբ Հրէից ուշքն  
ու միտքը դարձրել էր դէպ- ի ինքը, մըտ-  
քումը մէկ դադախար շինեց՝ իւր հայրենա-  
կիցներուն դուրս բերել Եգիպտոսէն:  
Իւր Աստուծոյ յուսով սիրտը լիքը ունե-  
նալով, ինքն-էլ քաջ ու խելօք լինելով,  
Մոսէս ստացաւ վըշտացած համադրաների  
վստահութիւնը, և թագաւորի սրախ մէջը  
սերմանեց՝ որ իէհովայէն երկխղ քաշէ, և  
ստացաւ հրաման՝ որ ժողովուրդը դուրս գայ  
ու երթայ Եգիպտոսէն: Փարաւօն ի դուր  
տեղն էր աշխատում հարկադրել որ փախ-  
չող ժողովուրդը յետ դառնայ: Մոսէս ամե-  
նեցուն կամքով ճանաչեցաւ առաջնորդ-  
բայց նա քան զառաջնորդը աւելի էր: Իս-  
րայէլացիք երախտասիրտ են նրան օրէնքնե.



րու պատճառաւ, որոնք որ դառան հիմն  
Հրէից ասպագայ կարգաւորութիւններու,  
նորոգեցին և կազդուրեցին ճշմարիտ Աս-  
տուծոյ հաւատքը, որն-որ յողգողվել էր  
Եգիպտացոց կռապաշտութիւնէն և կոշա-  
ու կոսպիտ Հրէից աղգին ցոյց տուին բարձ-  
րագոյն հրահանգութեան ճանապարհը:

Մոսէսի առաջին գործը այն եղաւ, որ  
իւր ժողովրդեան սովորեցնէ հնազանդվիլ  
Աստուծուն, և յոյս դնել նրան և նրայ  
խոստմունքներուն: Իսրայէլացիք ունէին  
անյողգողգ վստահութիւն Աստուծոյ վրայ,  
և ասպագայ դարերու անյաջողութիւնները  
բնաւ չկարողացան ստիպել որ նրանք բոլո-  
րովին ուրանային օրինադրած կրօնը, այն  
պէս՝ որ Հրէաները շատ անգամ անարգվե-  
լով և վշտանալով ուրիշ աղգերէ, իրանք-էլ  
էին արհամարհութեամբ մտիկ անում Իէ-  
հովայի ատեցողների վրայ, անօրինակ յա-  
մառութեամբ հրաժարվում էին հեթանոս-  
ներու լուծը քաշելէն. պարծենում էին իւր  
նախահարց փառքով, ինչպէս անգամ Աս-  
տուծոյ ընտրած աղգի, և ո՛չ երբէք չէին մը-  
նում անյոյս Մեսիայի գալու համար: Մոսէս

այն ժամանակ հրատարակեց իւր նշանաւոր  
օրէնքները, որ ունին զօրութիւն 3000  
տարի անց կենալէն յետոյ-էլ, երբոր Հրէ-  
այք էին Արարիստանի անապատի այն տե-  
ղումը, որն-որ Արարիստանի ծովի երկու  
ծոցի մէջն ձևացնումէ Սինայի Թերակղզին՝  
ըստմեծի մասին անջուր և ապառաժ ժայ-  
ռերով ծածկւած : Մովսէս բաժանեց իւր  
ժողովուրդը Յակոբայ որդւոց և թոռներու  
ճագմամբ ասան ու ելէ՝ զէն : Ղևիի ցեղը նշա-  
նակեց որ քահանայական ասպիճան կրէ, տուեց  
նրանց մեծ արտօնութիւններ : Ղևտայիք,  
(Ղևիի ցեղը) ապրում էին միայն զոհերից  
և տասանորդներից : Մովսիսի եղբայր Ա-  
հարոնը իւր դերդաստանով ասացաւ քա-  
հանայապետութեան սրաշտօն, որ ինչպէս  
երեւափախան Իէհովայի՝ առաջնորդում էր  
բոլոր ժողովրդեան : Քառասուն տարի տեւեց  
Հրէից թափառիլը Արարիստանի անապա-  
տի մէջ. այնուհետև Մոսէս մտքումը դրեց  
տանել նրանց Արրահամին խոստացած եր-  
կիրը, սակայն ինքը մեռաւ և չկարողա-  
ցաւ իւր դիտաւորութիւնը կատարել :

Հետոյ Մովսէսը զոհերից զոհեց իւր ժողովուրդին



ՆՈՒՆՃՈՒՄՆ ՔԱՆՍՆՍՅՈՑ. ՄԱՐԳՍՐԷՔ.

ԹՄԳՍԻՈՐՔ.

11

Քանանացոյ աշխարհք կամ Պաղեստին, որ  
Աւետեաց երկիր-էլ է ասլուս, Միջեր-  
կրեաց ծովի մօտ է, Արարիատանի և Աս-  
րիքի մէջ, շատ աւելի պտղաբեր հող  
է, և լիքն է ասպառած ժայռերով, ունի 30  
մղոն երկայնութիւն, և 6-18 մղոն լայ-  
նութիւն: Այս աշխարքի գլխաւոր գետն է  
Յորդանան (Իորդան) որ դուրս է դալիս Տե-  
բեբեայ Ծովանէն (Քալիլիայի ծովէն) և թափ-  
վում է Մեծ-Ծով: Այս տեղ կենում էին  
առաջ շատ ասորի- արարացի ազգեր, բայց  
յետոյ բաժնվեցաւ այս երկիրը Հրէից 12  
ցեղերու մէջ: Իսկ Քրիստոսի ժամանակը ու-  
նէր 1) Քալիլիայ (հիւսիսակողմը) որի  
մէջ կան Տիրերիադա և Նազարէթ.  
2) Սամարիա ուր որ կան Սամարիա  
և Սիւքէմ քաղաքները.  
3) Հրէաստան կամ Յուդա (Հրէից  
աշխարհք), որին մէջ կան Երուսաղէմ,  
Երիքով և Յոպպէ (Եսթ) քաղաքները.  
4) Պերէա (Յորդանանի միւս երեսին:

Յետու՝ Նաւեայ օրդին՝ առաջնորդեց Խորայէլացոց այս երկիրները նուաճելու ժամանակը, (Քրիստոսի ծնունդէն 1500 տարի առաջ): Հեշտու թիւնով չեղաւ այս տեղի ազգերու հնազանդեցնելը, և միայն արիւնայեղձ պատերազմներէն յետ՝ քանանացոց երկրի մրցակիրթ բնակիչները բնաջինջ եղան, կամ բռնադատուեցան անձնատուր լինել: Նոցա մէկ քանի ազգերը երկար ժամանակ կենում էին անկախ Խորայէլացոց միջումը: Յորդանանը ասվեցաւ արևելեան սահմանագլուխ Յուդայի ցեղի նոր վիճակին, որ երբեմն լայնանում էր, երբեմն նուազում, համեմատելով իրանց ունեցած պատերազմներու յաջողակ կամ անյաջողակ վերջանալուն: Հրէից թագաւորութիւնը երբէք այնքան բնդարձակ չէ եղել, ինչպէս Գաւիթի և Սողոմոնի օրերը:

Այս տիրապետած երկիրները բաժին բաժին եղան Յետուի կառավարութեան ժամանակը ասուր և Կէս ցեղերու մէջ. Երկու և Կէս ցեղերը մնացին Յորդանանի արևելեան կողմը. ինչպէս այժմ էլ հին քաղաքներու բազմաթիւ աւերակները ցոյց են տալիս,



Թէ այն երկիրը, որ այժմ ըստ մեծի մասին  
անապատ է, մէկ ժամանակ էր շէն և մար-  
դարնակ: Իսկ Ղևտացիները բնակված էին  
48 քաղաքներու մէջ և ցրուած էին բոլոր  
ցեղերումը: Ամեն մէկ ցեղը կենում էր ա-  
ռանձին, և կառավարվում էր իւր իշխանի  
կամ առաջնորդի ձեռքով. միայն Քահանայա-  
պետն էր ընդհանրական գլուխ: Հեթա-  
նոսներու դէմ պատերազմը չէր վերջանում.  
Երբեմն մէկ ցեղը ընկնում էր կռապաշտու-  
թեան մէջ. բայց հզօր անձինք (Գոհարաւորք)  
ժամանակ ժամանակ դուրս էին գալիս,  
տանում էին ժողովուրդին թրշնամիներու  
դէմ, (Փղշտացոց, Մովաբացոց, Յեբուսացոց, Ա-  
մոնացոց, և այլն) և շատ երախտաւոր էին  
լինում Իսրայէլացոց՝ խաղաղութեան ժամա-  
նակներումն էլ: Գատաւորներու մէջ նշա-  
նաւորք էին՝ Բարսի, Գեդեոն, Յեմօնայէ և  
Սամբոն: Քահանայապետներն-էլ երբեմն զօ-  
րավարութիւն էին անում: Մեծ յարգ  
ունէին ժողովրդեան դաստիարակները (Տար-  
գարէք), որ իրանց երգէրով և ճառերով ազգին  
խրատում էին, քաջալերում էին, մխիթա-  
րում էին և կազդուրում էին հաւատքը և

յոյսը առ Աստուած. բայց մարդարէնքու  
խրատին չընայելով՝ ցեղերու մէջ տիրապե-  
տում էր անմիարանութիւն և թշնամու-  
թիւն. այս պատճառաւ թշնամիները շատ  
անգամ նոցա ջարդում էին, և իրանց դիւց-  
ազն դատաւորներու ժամանակն-էլ քաշում  
էին սաէպ հարուածներ: Ամենքը ցանկացան  
թագաւոր ունենալ: Սամուէլ ֆահանայապետը  
յանձն առաւ ժողովրդեան պահանջը, և օժեց  
(1100 տարի Քրիստոսէն առաջ) Սամուէլին,  
որ Կիւի որդի էր Բենիամինի ցեղէն, և դրեց:  
Սաւուղ մէկ քաջ մարդ էր. իսրայէլացոց  
թշնամիներուն խորտակեց, և նոցա սրտի  
մէջ երկիւղ գծեց, որ նրամէն վախենան.  
բայց ինքը չկարողացաւ աւելի հաճոյ լինել  
ֆահանայապետին, որովհետեւ չէր նրան ա-  
մեն գործերու մէջ հնազանդում. այս պատ-  
ճառաւ Սամուէլն-էլ, Սաւուղի կենդանու-  
թեան ժամանակը, Իէհովայի անունով թա-  
գաւոր օժեց Յեսաէի որդի Գաւիթին՝ Յու-  
դայի ցեղէն: Սաւուղ շատ տրտմեցաւ  
Սամուէլի արարմունքէն. բայց որովհետեւ  
ազգը սիրում էր նրան, Սաւուղ ժողովրդեան  
ջերմեռանդ մտերմութեան օգնութեամբ՝



փոխադրեց Վիսյու-Լիան Խորանը, որոյ մէջ  
որ սրահվում էր Տաղանի Ա-խան՝ ազգա-  
յին սրբութիւնը, որ այն երկրումը պա-  
տահած անընդհատ սրտերազմներու պատ-  
ճառաւ՝ մէկ սահմանած տեղ չէր մնում:  
Գաւիթ ձևակերպեց մեծավայելուչ Տաճարի  
չինութեան դադարաւորը, այլ միայն կարողա-  
ցաւ այս գործի պատրաստութիւնը հան-  
դերձել, որովհետեւ մահը հասաւ նրան 40  
տարի թագաւորելէն յետ: Թէպէտ սորա  
թագաւորութիւնը յաջողակ էր, բայց չկար-  
ողացաւ չըտեսներ իւր հարազատ որդւոյ  
Աբի-ու-հո-ի ապստամբութիւնը, և պատե-  
րապէս մէջ նորա մահը: Թէ որքան ջանք  
էր անում Գաւիթ, որ իւր նախնեաց Աս-  
տուծոյ հաւատքը լաւ պահպանէ, ապացու-  
ցանում են նորա վերամբարձ երգերը, որ  
Սահ-հո-ս անունով հռչակված են:

Գաւիթին յաջորդեց նորա որդին՝ Սոդո-  
հան, որ հռչակվեցաւ իւր իմաստութիւնով  
և տաճարի շինութիւնը դլուխ բերելով:  
Այս գործի մէջ նրան շատ օգնութիւն  
էր անում Փիւնիկեցոյ Թագաւորը Քէր-ս-հ  
(որովհետեւ չրէպք չունէին Սիդոնացոյ

պահեց իւր ձեռին իշխանութիւնը: Սա-  
ւուղի մահն-էլ, որ անձնասպան եղաւ Փը-  
ղըշտացոց դէմ ունեցած անյաջող պատերազ-  
մէն յետ, Գաւիթի համար չբացեց իսկոյն  
դէպ-ի աթոռը ճանապարհ. որովհետեւ մէ-  
նակ առաջ Յուդայի ցեղը նրան ընդունեց  
թագաւոր: Միմիայն յետ այնորիկ, երբոր  
Յերուսթէ՝ Սաւուղի որդին, որին որ հաւա-  
տարիմ մնացին տանու մէկ ցեղերը, իւր  
զօրապետներէն խողխողլեցաւ, Գաւիթ կա-  
րողացաւ տիրապետել բովանդակ Խորայէ-  
լացոց, Քրիստոսէն 1050 տարի առաջ:

Շրէայք իրանց փառաւոր թագաւորնե-  
րից ո՛չ մէկին-էլ այնպէս չեն գովել, ինչ-  
պէս Գաւիթին: Սա տիրապետեց իւր շըր-  
ջակայ ազգաց երկիրները բոլոր Ասորիքի  
մէջ, արևելքի կողմը՝ մինչև Եփրատ, հա-  
րաւային կողմը՝ մինչև Արարիոյ ծոցը: Մինչև  
հզօր Գամասիոսն-էլ հպատակեցաւ նորա իշ-  
խանութեան: Գաւիթ իւր այս ընդարձակ-  
ված թագաւորութեան մայրաքաղաք հըռ-  
չակեց Երուսաղէմ, որ Բենիամինի ցեղի  
վիճակումն էր և դառաւ նորա աթոռանիստը:  
Նա շինեց Անն վերնաբերդը, և այն տեղ



նման քաջահամուտ ճարտարագետներ և ար-  
հեստագէտներ): Այս տաճարը՝ որ շինուած  
էր Մ<sup>ո</sup> շ<sup>ի</sup> (Սմորիա) սարի վրայ, էր ա-  
ռաջին մեծաշուք կերտուածը՝ ճշմարիտ Աս-  
տուծուն նուիրած: Սողոմոնի վարքը աւելի  
չկարողացաւ նորա իմաստութիւնը ցոյց տալ:  
Արևելեան թագաւորներու սովորութեամբ  
Սողոմոն վարում էր շոյլ և անառակ կեանք,  
որ եղաւ պատճառ ծանր ծանր հարկերու,  
ղրկեց նրան ժողովրդեան համակրութիւնէն  
( սիրոյն ) և ինքն-էլ վերջապէս դարձաւ  
դէպ-ի օտար ազգաց կուռքերու պաշտօնը:  
Այս պատճառաւ իւր թագաւորութեան  
վերջին ժամանակներումը՝ Սողոմոն զգաց  
իւր անխելք կառավարութեան հետեանքը.  
դաւառները ողջ ողջ ոտքի վրայ էին կան-  
գնում նորա դէմ: Արժանի նկատման էր  
այս, որ Սողոմոն Փիւնիկեցոց հետ միասին  
ժողովին առուտուր էր անում Էլաֆի և Գաֆին  
Գաֆիւրայ նաւահանգիստէն՝ Արարացոց ծո-  
վի վերայ:



ԿՈՒՐ ԱՆՈՒՄՆ ՔՍԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ ՀՐԷԻՑ.

ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՅՔ ԵՒ ԲԱՐԵԼԱՅՈՒՔ:

12

Արք որ ժողովուրդը սաստիկ նեղութիւն քաշելով Ռոմէոսին, որ Սողոմոնի որդին և յաջորդն էր, խլուր տեղը խնդրում էր թեթևութիւն ծանր հարկերից, և մինչև սպառնալիք-էլ լսեց նրամէն՝ որպէս ցեղերը բաժնորկեցան նրամէն, և Քրիստոսէն 975 տարի առաջ իրանց համար թաղաւոր ընտրեցին Յէրոմէոսին՝ որ Եփրեմի ցեղէն էր: Այս կերպով ձևացաւ երկու թաղաւորութիւն՝ Հրէեց կամ Յուսայե և Իսրայէլացի:

Ոտրովամ, որին որ հաւատարիմ մնացին միայն երկու ցեղերը՝ Յուդայի և Բենիամինի, թաղաւորեց Յուսայե երկրումը, և բընակիւում էր Երուսաղէմի մէջ իսկ Յերոբոամ դառաւ Իսրայէլացոց թաղաւոր, որոյ աթոռանիստն էր առաջ Սիւսէմ, և ապա Սամարիա: Միութիւնը արդէն կորել էր Հրէից մէջէն.



տարածայնութիւնները և թշնամութիւնքը  
որ ըստ օրէ աւելի էին օտարացնում մէկ  
թագաւորութիւնը միւսէն : Մէկ քանի ան-  
գամ Իէհովայի պաշտօնը Երուսաղէմի տա-  
ճարի մէջ, և երեք մեծ տօներու (Պատէքի,  
Պենտէկօստէից և Տաղաւարահարաց) հան-  
դէսները կատարուեցան միաբանութեամբ .  
բայց Իսրայէլացոց թագաւորութեան ժողո-  
վուրդքը շնեցին իրանց համար առանձին  
տաճար Գարիզիմ սարի վրայ, Սիւքէմի մօտ,  
և մէկ քանի կերպով կապալաշնութիւնք-էլ  
ներս բերին իրանց մէջ : Նոցա երկիրնե-  
րումը շատ անգամ վատթար թագաւորնե-  
րը ևս առաւել էին անբախտ անում այս չա-  
րաբարոց ազգին : Աղուք էին մարգարէները  
գուշակում բոլոր ազգի կործանումն . իզուր  
էին հրաւիրում նրանց, որ միաբանուին և  
Իէհովայի պաշտօնի մէջ հաստատ մնան .  
ամեն միութարութիւնները և ամեն ստառ-  
նալիքները մնացին չըլտուած : Էլ զարմանք  
չէ՛, որ վերջապէս երկու թագաւորութիւն-  
ներն-էլ հզօր թշնամիներու աւար դառան :

ՄՍՐԳ ԵՒ ՊԱՐՍԻԿԳ. ԿԻՒՐՈՍ.

13

Մայր կամ Միջոցի կենում էին այժմեան Պարսկաստանումը (Իրան Աջի գաւառումը) և նոցա մայրաքաղաքն էր Եկրատան, (այժմ Համադան): Նոքա էին հալատակ Ասորեստանցոց տէրուք. այլնրանց անվիհեր ազգապետ Վարդանիսը վտարանջեց ուրիշ գաւառներու կառավարչաց հետ՝ Սարգանսուղա թագաւորի դէմ, որ, ինչպէս աւանդութիւնն է ստում, երբոր կործանվեցաւ նորա մայրաքաղաքը Նինուէն՝ ինքն իրան այրեց իւր ամեն գանձերու հետ միասին, և այսպէս Մարաց աշխարհը դառաւ առանձին թագաւորութիւն, և Վարդակէսը՝ նորա թագաւոր (880 տարի Քրիստոսի ծնունդէն առաջ): Ուրիշները պատմումեն թէ Գովէկ թագաւորը ազատեց այս երկիրը Ասորեստանեայց տիրապետութիւնէն (700 տարի Քրիստոսէն առաջ): Հարեան ազգերու դէմ շատ և ստէպ պատերազմներ էին ունենում. Կիաքսար թագաւորը Ասորեստանն էլ նուաճեց: Պարսկաստան



և ներքին Ասիայի գաւառները հպատակե-  
ցան նրան: Մարտից վերջին թագաւոր Ափրա-  
հաշը (Աստիագէս) ունէր մէկ դուստր, որ  
տուած էր Կամբիւս Պարսիկ իշխանի կնու-  
թեան: Կասկածելով թէ նորա դստեր որդին  
մէկ օր կարող է նորա աթոռը պահանջել  
նրամէն, հրամայեց՝ արևելեան բռնաւո-  
րաց սովորութեամբ, որ մինչև այժմ էլ  
պահպուլմ է, սպանել նորածին երեխին:  
Արբակ՝ Մարտի դրանիկը որուն որ յանձ-  
նուած էր այս, չըսպանեց նրան, այլ ինչպէս  
որ ասում է աւանդութիւնը՝ տուեց մէկ  
հովիւի, և հովիւն-էլ սնունդ տուեց և զար-  
գացուց այն երեխին ինչպէս իւր զաւակ:  
Կիրոս (այսպէս էր այն հովիւի որդի կար-  
ծուած տղի սնունը, որին որ սուրբ Քիրքը  
Հրէից Աստուածաշունչի մէջ Կիրոս է կոչում.)  
մէկ օր խաղալու ժամանակը պատժեց մէկ  
աւաղանւոյ որդւոյ և այս երևելի մարդը թա-  
գաւորին դանկատ անելով խնդրեց, որ  
հովիւի որդուն պատիժ տան: Այս պատ-  
ճառ տուեց՝ որ Աթաշակ ճանչցաւ իւր  
թոռնին, և դաստիարակեց երբեմն իւր դրանը  
պահելով և երբեմն-էլ նորա հայրենիքումը

Պարսկաստանումը (Տարսիստանի Գասասի մէջ)։  
Կիւրոս միշտ մտքումը ունենալով այն, ինչ  
որ իւր սրապը սրատրաստել էր նորա համար՝  
մեծանում էր, և միշտ բարկանում էր՝ որ  
Պարսիկք Մարաց լուծը քաշում են, և կանդ-  
նելով իւր ապստամբեցրած Պարսից գլուխ՝  
ոչ թէ միայն աղատեց (520 տարի Քրիս-  
տոսէն առաջ) Պարսկաստանը իւր սրապի իշ-  
խանութեան տակէն, այլև տիրապետեց և  
Մարաց աշխարհը։ Եւ այսպէս Կիւրոս դա-  
ռաւ հիմնադիր Պարսից տէրութեան, և  
հարատակեցուց իրան բոլոր շրջակայ երկիր-  
ները, միջամուխ եղաւ նա և գէսլ ի արե-  
մուտք, և ձգեց Առաջաւոր Ասիան (որ այ-  
ժամ Օսմանցոց երկիր է), իւր ձերքի ներքոյ։  
Այն տեղ՝ Կիւրոսի արած սրատերազմնե-  
րից քան զամենը նշանաւորն էր Կրեսոսի  
գէմ ունեցած կռիւր։ Կրէսոս նուաձել էր  
համարեա՛ թէ բոլոր Փոքր Ասիան, (որ այժմ  
ասւում է Ասսուշլու, Նասուլիս)։ Այս Լիւդա-  
ցոց թագաւորի ձոխութեան համբաւը (Ար-  
փիս էր Փոքր Ասիոյի մէկ արեւմտեան գա-  
ւառ, որոյ մէջ կար Սարդէս աղատ քաղա-  
քը) հռչակուած էր բովանդակ աշխարհի



երեսին: Այլ նա ինքն Արեսոս այնքան կու-  
րացել էր իւր հարստութեամբ, որ մեծա-  
մտուելով իւր զօրութեան վրայ, չհասկա-  
ցաւ, որ Սողոն չըկամեցաւ անուանել նրան  
քան զամեն մարդ երջանիկ: Արեսոս դուրս  
եկաւ Աիւրոսի դէմ, այլ մէկ սլատերաղմի  
մէջ յաղթուեցաւ, և ձերբակալ եղաւ, ընկաւ  
գերի: Երբ որ ի մահ դատաստարտուած  
սլառել էր կասկարայի տառակի վրայ,  
միտքը բերեց Սողոնի խօսքերը: Աիւրոս  
լսելով Սողոնի անունը Արէսոսէն, և ուրիշ  
սրտաշարժ խօսքեր այն դժբաղդ թագաւորի  
բերնէն՝ շարժեցաւ նորա կարեկցութիւնը,  
և նոյնպէս միտքը բերեց, որ իւր բաղդն-էլ  
կարող է մէկ օր փոխուիլ, և այն սլատա-  
ռաւ այն գերի ընկած թշնամու կեանքը  
իրան սարդկեց: Սակայն այս օրինակը չը  
վացուց նորա սրտի մէջ աշխարհակալութեան  
եռանդը: Բարիլոնն-էլ (այժմեան Իցուս-Ալաթի,  
և Միջագետի մասն՝ ուր-որ կան Բողոբոս և  
Բասրայ մեծ մեծ քաղաքները), մէկ քանի  
ժամանակներէ յետոյ ստիպուեցան իրանց  
վերայ ընդունիլ Պարսից թագաւորի տէրու-  
թեան լուծը:

ՅՈՅՆՔ

14

Այժմեան Յոսմասպանուն, Օսմանցոց տէրութեան հարաւային դաւառներումը, և Արշիպեղատոսի (որ այն ժամանակ Եփէն թիւ էր ասւում) կղզիներումը, Քրիստոսի ծնունդէն 1500 և 1000 տարի առաջուան միջոցներումը, կենում էին Գաւէս կամ Յոյն աղբի ցեղերը, որ առաջ էին վայրենի խաժամութներ, և մեկըմէկու նուաճում էին և բնակուած տեղերէն հանում :

Արծ-մեծ անտառներ ծածկած ունէին այն ժամանակ այն սարերով ճոխացած երկիրը. սակայն քիչ տեղեր կային, որ կարող էին սրտղարեր լինել : Այն սրտաճառաւ երկիրը չէր կարողանում վերջապէս կերակրել այնքան ժողովրդեան բազմութիւնը, որ միշտ աւելանում էր և բազմասրտակվում : Իսկ նոցա կռիւ անելու և տեղէ-տեղ դաղթուելու սէրը, որով երեւելի էին հանդիսացած Յոյնք, (որոց մէջ Պէլասգէանս և Հելլէնս համարուած էին հին և դիւսաւոր ցեղեր), նը-



րանց հայրենիքը անում էր նոցա բնակութեան համար նեղ : Հազարաւորք թողնում էին իրանց ծնած երկիրները, և հիմնարկում էին համարեա՛ թէ Միջերկրական ծովի բոլոր կղզիներու մէջ և ծովեզերքումը նորնոր գաղթականութիւններ (հողմնիս) , և այսպիսի քաղաքներ կային մանաւանդ Փոքր Ասիայումը, Իսապխանումը և Սելևկիայումը :

Վաղնջուց Յոյները էին կոշտ ու կռաւիտ ազգ . բայց նոքա քիչ-քիչ կրթութիւն ստացան՝ ուրիշ երկրաց կրթութեամբ ազգերու հետ յարակցութիւններ ունենալով , որոցմէն մէկ քանիսն-էլ նոյնպէս հիմնեցին նոցա մէջ քաղաքներ, և սովորեցուցին մէկ քանի գիտութիւններ : Այսպէս Կէլսոս Եգիպտացին սովորեցուց Յունաց Էրիտոֆոթոսկան և Յէլենի աստուծոյն . Կարմոս Փիւնիկեցին սովորեցուց Գեր , այսինքն՝ Գրեւհարդալ . Գամալոս Եգիպտացին-էլ դուրսէ եկած օտարական էր, և Փոքր Ասիայէն Պելոպոս, որոմէն այն թերակղզին ստացաւ Պելոպոնէսոս անուն, (այսինքն՝ Պելոպոսի-իղլի , որ այժմ առկում է Մորէս, Մօսսայ) : Յունաստանումը շատ քաղաքներ կային շինած : Այս քաղաքներէց՝

յետ ժամանակաց ձևացան թագաւորութիւններ, որ սակայն սկզբումը շատ սակաւ տարածութիւն էին գրաւում: Այս քաղաքներէն հնագոյնները և աւելի նշանաւորները էին՝ Արֆոս, Կորնէոս և Սոլորոս: Պէլոպոնէսումը, Ալեքս՝ Ատտիկէ գաւառումը, Թէբաս՝ Բելլոլիա երկրումը: Այս տեղերումը թագաւորութիւն էին անում այնպիսի թագաւորներ, որ առաջացել էին հռչակաւոր ազգատոհմներից, որոնց-որ աւանդութիւնը ընծայում է զանազան սքանչելի դիւցազնական մեծագործութիւններ: Այս աւանդութիւններու մէջ սխառմիւում է թէ՛ ինչպէս այս դիւցազնները (հսկաները) մէկգմէկու դէմ պատերազմել են, ինչպէս նուաձել են հրէշներուն, բնաջինջ են արել ելուզակներուն, տիրապետել են և քարոքանդ են արել շատ քաղաքներ, ձեռնամուխ են եղել դէպի հեռաւոր աշխարհներ ճանփորդութիւններ անելու, և սոցա նման բաներ:

Քան զամենն աւելի յայտնի էր Յունաստանի բոլոր երկիրներումը՝ նոցա երկումեծ ձեռնարկութիւններու աւանդութիւնը, որոց մէջ այն ժամանակներու դիւցազունք



խառնել էին իրանց քաջամարտիկ զօրքը:  
Այս անցքերն են Արժնատուրքաց արշաանը  
և Տրոյեայի պատերազմը:

ՄԲԳՈՆՍԵՒՈՐԻ ԳՆԵՐՈՒ ՄԲՂՍԻՍՆԸ

15

Արժնատուրքաց Արշաանի համար աւան-  
դու թիւնը սլաւմում է այսպէս: Բիւլտիա  
աշխարքի Թերաս քաղաքի Ամասա թագա-  
ւորի զաւակները Հելլոս և Փրէսոս, իրանց մօ-  
րուի (խորթ մօր) Ինայի դարանակալութենէն,  
ասիէ-Գէղճի խոյի վրայ նստած՝ վախան: Գոր-  
դանէլէան նեղուցէն անց-կենալու ժամանա-  
կը՝ Հելլոս դշտոյն այն ոսկերուրդ ոչխարի  
վրայէն ընկաւ ծով, որ այս իսկ սլաւմա-  
ռաւ կոչուեցաւ Հելլոսդանաս, այսինքն՝ Հել-  
լայի ծով: Իսկ Փրէսոս արքայորդին ողջամբ  
հասաւ Կողջի աշխարք, այժմեան Կովկասու  
երկրի Սեւ ծովի ափը (Մեհրէլէ երկիր):  
Այս տեղ Փրէսոս այն ոչխարին մատաղ ա-  
րաւ, իսկ նորա մորթին կախեց նուիրական  
սրբազան անտառի մէջ: Այս միջոցներումը

Թէաստլիս աշխարքի Երչոս քաղաքումը թա-  
գաւորութիւն էր անում Պելլոս, որ իւր  
եղբօրը Եղոնի թագաւորութեան աստուէն  
ցած էր գլորել: Եղոնի որդին՝ Յասոնը պա-  
հանջում էր իրայ հօրեղբօրէն՝ Պելիասէն  
իւր սեփական ժառանգութիւնը, այլ խո-  
րամանկ Պելիասը առաջարկեց նրան, որ  
առաջ նա կողքիսէն բերէ սիւղի մօրթին:

Յասոնը յանձնառու եղաւ կատարել  
այն. հրաւիրեց Յունաստանի քաջ հսկա-  
ներին, որ նորա-էլ օգնեն նրան այս վտան-  
գաւոր դործի մէջ, որովհետեւ այս ճան-  
փորդութիւնը՝ այն ժամանակի մարդոց, աշ-  
խարհագրութեան սակաւ տեղեակ լինելու  
պատճառով, կարծւում էր թէ՛ գէտի շատ  
հեռու և խաղառ անյայտ երկիր պիտի լինի,  
և զանազան փորձանքներու պիտի հանդի-  
պեցնէ: Այն ժամանակը եկան հաւաքուե-  
ցան Հերքուլէս, Կաստոր, Նեստոր, Պելլոս, Թէ-  
դէոս և այլք, նաև հռչակաւոր երգարանը  
Ուրթոս էր նրանց մէջ: Այս ամեն զինուոր-  
ները մտան մէկ մեծ նաւ, որ Սքէոս էր աս-  
վում, և այս պատճառաւ այն ճանփորդ-  
ները ասուեցան Սքէոնաստորոս, այսինքն Արգոյ



նաւով ծովային ճանփոյ դնացողներ, և Յասովնի առաջնորդութեամբ թողին Եղբօսի նաւահանգիստը: Ետ դիպուածներու հանդիպելից յետ՝ վերջապէս հասան Կողքիս, ուր որ թաղաւորութիւն էր անում Սյեղաս: Միմիայն օգնութեամբ թաղաւորի դասեր Մեղիս վհուկի՝ յաջողեցաւ Յասովնին ձեռք դնել ոսկեղեղմն մորթին: Մեղիս ամուսնացաւ Յասովնին, և նորա հետ միասին ճանփոյ ընկաւ, և շատ երկար ժամանակ թափառական շրջելէն յետ՝ հեռաւոր գետերու և ծովերու վրայ, և շատ վտանգներու և հրաշքներու պատահելէն յետ, այս դիւցազանց համախմբութիւնը վերջապէս միւսանգամ դարձան իրանց հայրենիք:

Եւելի նշանաւոր էին Տրոյաչան Պարիսպի վրայ առած զրոյցները: Փոքր Ասիայի արեւմտեան ծովեզրումը՝ Տրոյիս քաղաքումը, Քրիստոսի ծնունդէն 1200 տարի առաջ՝ թաղաւորութիւն էր անում Պրիսան, որոյ շատ որդւոց մէջ կային Հելիոսը ու Պարիսը: Պարիսը եկել է Սպարտացոց թաղաւորի՝ Մեղիսոսի տուն, և յափշտակել է նորա կնոջ Հելենէն, որ Կատարի և Պոլլիսքսի քոյրն

էր: Այս անիրաւութեան վրէժը պահանջելու համար՝ բովանդակ Յունաստանի գլխաւոր դիւցազունքը միաւորուեցան, որ արշաւեն Տրոյիայի դէմ: Մենեչայոսի եղբայր՝ Ագամեմոնը, Միկենայ թագաւորը Պելոպոնէսոսի մէջ, ընտրուեցաւ առաջնորդ: Նորա հետ միասին ճանփայ ընկան Արգոսի թագաւոր՝ Քլեոկոսը, Իֆամե (այժմ Փէպիս՝ Յունական կղզիներու մէկը) թագաւոր Յուլա կամ Ուրիսթաս, որ քան զամենը գերազանց էր հնարագիտութեամբ և խելքով, Այաքս՝ Սպարթնայ կղզիէն, ինքն Մենեչայոս, Նեստոր՝ Մեսսենայէն, ծերունի՝ որ հանդիսացած էր քաջափորձ հասունութեամբ, և զգօն խորհուրդներով, և այլքբայց քան զամենը հռչակաւոր էր Աթլլէոս, որոյ ուղեկից էր նորա բարեկամ՝ Պարպոկլէ: Թէսալիայի Ալքիոսն նաւահանգիստէն դուրս եկաւ նաւատորմիղը, որ Յունաց զօրքը հասցրուց Փոքր Ասիայի ծովեզերքին 1200 նաւերով: Սկսաւ երկարատև պատերազմ Տրոյացոց դէմ: Տրոյացոց առաջնորդ էին՝ քաջն Հեկտոր, Ենէաս, Հայոց նահապետ Չարմայր, և ուրիշ դիւցազունք: Իզուր Յոյնք



ինը տարի լարեցին իրանց բոլոր ուժն ու  
զօրութիւնը, որ առնուն Տրոյիա: Հաղի-  
թէ տասներորդ տարին յաջողեցաւ Յունաց,  
այն-էլ հնարներով, տիրապետել քաղաքին,  
երբ որ արդէն Հեկտոր Ա. քիւլէսի ձեռքով  
սպանուել էր: Տրոյա քաղաքը հիմնայտաակ  
քանդեցին: Յոյնք շտապում էին դառնալ  
դէս-ի իրանց հայրենիքը, այլ ալէկոծու-  
թիւնը դժուարացնում էր նոցա վերադարձ  
ճանփորդութիւնը, և այն դիւցազանց մեծ  
մատը դտան իրանց հայրենիքումը տեսակ  
տեսակ վիշտեր: Ագամեմնոն՝ որ յետ դար-  
ձաւ՝ խողխողուեցաւ: Մենեւայոս հեռաւոր  
երկիրներ տարուեցաւ նաւակոծութիւնով:  
Իսկ Յուլիա տասը տարի մոլորուած թա-  
փառեցաւ, մինչև որ հասաւ Իթաք: Տրոյա-  
կան պատերազմի անցքերը այնքան համբա-  
ւաւոր էին, որ բոլոր յետագայ դարերումը  
Յոյնք սիրելով էին պատմում, իսկ բանա-  
ատեղծները երգում էին նոցա նախնեաց դիւ-  
ցազնական մեծագործութիւնների վրաքը,  
նոցա քաշած դժբաղդութիւնները, նոցա  
վիշտերը և տառապանքը: Մենք ունինք եր-  
կու գեղեցիկ բանահիւսիսթիւն՝ Աղիական

և Ողիաական (Իլլիուրա և Օրիսակա), որոց  
համար ասում են թէ՛ շարադրել է Հոմերոսը:

ԿՈՒՐՈՍ ԵՒ ԱԹԷՆՍՅՈՒՔ.

16

Յունաստանի բազմաթիւ փոքրիկ փոք-  
րիկ թագաւորութիւններու մէջ երևելի էին  
Աթէնք և Սպարտա (Լակեդեմոն). այս պատճա-  
ռաւ սրատմութիւնը քան զամենն աւելի  
աւանդում է մեզ այն անցքերու ստորա-  
գրութիւնը, որոնք որ պատահել են այս  
գաւառներու մէջ:

Յձպէտ բոլոր Յոյնք բաղկացնում էին  
մէկ ազգ, և միաշունչ էին պատերազմում  
Տրոյացոց պատերազմի մէջ ուրիշ թշնամի-  
ներու դէմ, սակայն նոքա չկարողացան պահ-  
պանել իրանց միջ հաշտութիւն և միաբա-  
նութիւն: Մէկ ցեղը նեղութիւն տալով միւ-  
սին՝ հանում էր իւր տեղէն, և մէկ թագա-  
ւորութիւն ջանք էր անում տիրապետել,  
իշխել միւսի վերայ: Այսպէս՝ Տրոյակամե  
պատերազմէն յետ երբոր անցաւ մօտ հար-



իւր տարի, պատահեցաւ որ՝ Յունաց մէկ  
ցեղը՝ Գոթացիք համարեալ թէ բոլոր Պելո-  
պոնէսը տիրապետեցին և արշաւեցին Աթէ-  
նացոց դէմ, որ Յոնիան ցեղէն էին: Այն  
միջոց Աթէնքումը թագաւորութիւն էր ա-  
նում Կոդրոս (1060), որ փառաւորուեցաւ իւր  
մեծահոգի անձնազոհութիւնով հայրենիքի  
համար: Մէկ դարերաց գուշակել էր Աթէ-  
նացոց, թէ այն կողմը կը յաղթանակէ, որոյ  
ղօրաւարը սպանուի թշնամիներու ձեռքէն:  
Կոդրոս լրասպասար բարետոհմիկ ցան-  
կութեամբ՝ յաղթութիւնը հասցնել Աթէ-  
նացոց ձեռքը, ինքնայօժար զոհ մատուցա-  
նելով իւր կեանքը, սոսկական սորուկի հա-  
գուստ վրէն զգեցած՝ դնաց թշնամիներու  
բանակ, և սկսաւ վէճ գրգռել՝ դիտաւո-  
րութեամբ, և կռուի բորբոքուած ժամա-  
նակը՝ խողխողուեցաւ իւր հակառակորդէն:

Մեծ վհատութիւն տարածուեցաւ Գո-  
թիացոց մէջ, երբ որ լսեցին նոցա զօրքը  
Կոդրոսի մահը. երկիւզը և կասկածը ստի-  
պեցին նրանց յետ դառնալ: Աթէնքը աղաւ  
մնաց այն վերահաս անգերծ սպառնական  
վտանգէն:

ԼԻԿՈՒՐԳՈՍ.

17

Սրամէն յետ, երբ որ Յունաց ցեղերը  
բնակուեցան հաստատուն բնակարաններու  
մէջ, և սկսան էլ մէկզմէկ դուրս չանել  
իրանց դաւառներէն, ամեն մէկ առանձին  
թագաւորութիւնները սկսան հողս քաշել  
անյողղողղ օրէնքներու և կարդաղբութիւն-  
ներու համար, առանց որոց ոչ ոք այն աշ-  
խարհներում չէր կարող միամիտ վստահ լի-  
նել իրայ կեանքի, ազատութեան և սեփա-  
կանութեան վերայ: Ամեն մէկ թագաւո-  
րութեան մէջ դուրս եկան խելօք մարդիկ,  
որոնց-որ յանձնուեցաւ իրանց քաղաքացի-  
ներէն այս օրէնքները և այս կարդաղբու-  
թիւնները սահմանել: Այսպէս՝ Ստարտա-  
յումը յայտնուեցաւ Վիտորիոսը (880), որ  
իւր արդարակորով անշահասիրութեամբ և  
ճշմարտութեամբ ստացաւ բոլոր ժողովրդեան  
վստահութիւնը: Վիտորիոս էր եղբայր թա-  
գաւորի, որ մէկ շփոթի մէջ սպանուել էր,  
և չէր թողել զաւակ, և ստացաւ ժառան-



դուժեան իրաւունքով տէրութեան կառա-  
վարութիւնը: Քայց սրամէն յետ շուտով  
այրի թագուհին, սպանուած թագաւորի կի-  
նը, որդի ծնաւ: Այն ժամանակ Աիկուրդոս  
խակոյն իրմէն յետ-դրեց իշխանութիւնը,  
թէպէտ և Սպարտացիք շատ ցանկացան, որ  
նա լինի ու մնայ նրանց վրայ թագաւոր:  
Շատ ջանադրութեամբ մտածում էր նա,  
որ այն երեխին այնպէս դատարարակէ, ինչ-  
պէս որ արժան է ապագայ թագաւորացու-  
ին. բայց նորա վրայ դրին զսպարտութիւն,  
որպէս թէ նա ուղում է իւր եղբօր որդու-  
մէն խել իշխանութիւնը: Աամենալով հե-  
ռացնել իրմէն ամեն տեսակ կասկածանք,  
որ մէկ տարաձայնութիւն չըծնի, Աիկուրդոս  
խակոյն թողեց իւր հայրենիքը, ուր որ միայն  
այն ժամանակ՝ քանի որ դեռ թագաւորը  
չափահաս էր՝ սկսան երեխ խակական շիտթ-  
ներ և խռովութիւններ: Տասը տարի ան-  
ցուց նա օտար թագաւորութիւններու մէջ,  
Եգիպտոսումը և Արեւտէ կղզիումը, որ համ-  
բաւուած էին իմաստալիր թագաւորական  
կարգադրութիւններով. յետոյ դարձաւ յետ  
դէպ ի Սպարտա, որ շատ ժամանակէ վեր

զգում էր, հասկանում էր արդարակորով  
բարեկամի հեռաւորութիւնը:

Ստարտացոյց խնդրանօք այս մարդը բաղմ-  
ամեայ փորձերով դաստիարակուած՝ յանձն  
տաւ տալ իւր հայրենիքին բարեկարգ  
օրէնք: Ախուրդոս քաջ տեղեկացել էր, թէ  
ոչինչ այնպէս փաստակար չէ տէրութեան,  
ինչպէս անչափ մուսխը, կենցաղավարութեան  
շուայլ ձեր, և նորամէն դուրս եկած հեշտա-  
սիրութիւնը: Այս պատճառաւ նա նորոգեց  
վաղեմի օրէնքները, որ ինչպէս երևում էր՝  
արդէն չէին պահպանուում: Հրամայեց որ  
բոլոր հողերը հաւասար բաժնուին, որ մէկը  
չլինի շախաղանց ձոխ և հարուստ, և միւս-  
ները չը մաշուէին աղքատութեան նեղու-  
թեան մէջ: Եւ այս իսկ պատճառաւ ար-  
գելեց Ախուրդոս ոսկու և արծաթի գործ-  
ածութիւնը և ամեն գեղարհեստական գոր-  
ծուածք: Առհասարակ պիտի ոչ ոք քան  
դմիւսները բաւ չապրէր. այս պատճառաւ  
հրամայեց, որ ամենքը միասին կերակուր  
ուտեն անձամբ շինութիւններու մէջ, և  
կարգադրեց մէկ սարգ կերակուր (և արիւնէ  
եփած ապուր): Օտար գաւառներու հետ հա-



ղորդակցու թիւնը արդեւ լուած էր. չէր ուզում,  
որ օտարազգիք դան ու բնակուին Սպար-  
տայումը, և ոչ՝ որ Սպարտացիք երթան  
ճանխորդու թիւն անեն ու բիշ երկիրներումը,  
որ ժողովրդեան սրբող կենցաղավարու թեան  
տարազը քիչ քիչ չփոխուի օտարներու օրի-  
նակներէն: Աիկուրդոս միայն ուզում էր որ  
Սպարտացիք իրանց ճարձմանը այնպէս ամրացնեն,  
որ կարողանան դիմանալ ամեն դժուարու-  
թիւններու և ծանրութիւններու. լինին  
չափ և սոխ. իրանց ամեն աւելի բարակ զգաց-  
մանքները բժայնեն. ցաւերը և ճակը արհա-  
մարհեն. որոտոտ լինին հայրենեաց համար  
խրեանց արկանը և սասցոտա՞նը զոհուի: Այս  
էր ցանկանում, և արդարև հասաւ իւր  
ցանկութեան՝ վաղնջուց հին օրէնքները նո-  
րողելով: Սպարտացիք մէկ այնպէս փառա-  
ւոր համբաւ ստացան, որ ամեն տեղ սկսան  
ներանց դովել, թէ բնաւ երբէք չեն վախե-  
նում մահէն, և ունին դիւցաղնական քա-  
ջութիւն: Բայց այս-էլ սխալի խմացուի, որ  
միայն այս էր այն օրէնքներու արդասիքի  
մէջ լաւը: Սպարտացիք սրահեցին այս օրէնք-  
ներու հետ կոշտ ու կոպիտ բնաւորութիւն-

ները, և էին բոլորովին անկիրթ և անհրահանգ այն բաներու մէջ, որոնք որ մարդուս խելքն ու միտքը զարգարում են:

Գիտութիւններու, ուսմանց և ճարտարութեանց համար մտածելու բան էլ չկայ. նոցա ուսումն էր միայն մարմնական մարդութիւն, որ շատ քաշքշուելով ջլերու ուժը աւելանայ և սնդանայ, մարմինը ամբանայ, և իմանան իրանց հայրենեաց օրէնքը, որն որ անգիր սովորեցնում էին կարճ կարճ խօսքերով: Հարկաւոր և շահաւետ պարասումնքն-էլ չունէին յարգ:

Արդելուած էր երկրագործութիւնը, որովհետև այս էր միայն ճորտերու (սլէֆ) պաշտօն. և այս ճորտերու հետ վարվում էին մեծ արհամարհութեամբ և անգթութեամբ. թէպէտ և ինչ որ ասվում է նոցա հետ վարուելու համար, այն ասածներէն շատը ի հարկէ պիտի աւելցրած կարծուի: Արեւսանց սնունդը ու դաստիարակութիւնը էր չափազանց խիստ, և միայն այս նպատակը ունէր, որ կրթուն հայրենիքի քաջ պաշտպաններ. տկար երեխէքը դուրս էին հանվում. մինչև աղջկերքին-էլ ստիպում էին որ



մարմնամարդութիւններ անեն, (գօտեմարտութիւն, ըմբշամարտութիւն, արշաւաճանդէսներումը վաղել, և այլն): Սպարտա չունէր սլարիսպ. միայն Սպարտացոց քաջութիւնը սխտի սաճտանէր քաղաքը: Սպարտացիք երկար ժամանակ սաճեցին Աիկուրգոսի օրէնքները: Նոցա տէրութիւնը վայելում էր ներքուստ խաղաղութիւն. իսկ ներանց քաջութիւնը ամեն տեղ հռչակուած էր և ընդունված, այնպէս որ՝ միւս Յոյները Հասարակաց սրտերաղմներու և բանադնացութեան ժամանակը յօժարութեամբ էին նրանց ընծայում նախադասութիւնը և առաջին տեղը:

---

Ս Ո Ղ Ո Ն.

18

Սպարտացիներուն կատարեալ դիմադրութիւն էին Ալէքնոսոց շատ հանդամանքները: Բայց և նոքա-էլ բարձր մեծարանք էին ընծայում մարմնական զօրութեան փթթելուն, ճասպուկ և արադաշարժ լինելուն, և կանուխ

էին ձգում իրանց մատաղահասակ զուակներուն՝ մարմնոյ մարդերու մէջ. բայց նորա չէին մտանում թէ մարդու սպինու և բարեւաստիկ ստացուածը է նորա անմահ հողին:

Նարտարարհետառ թիւնը և ուսմունքը մեծ յարգ ունէին նոցա մէջ, և ո՛չ մէկ ազգի միջէն չեն դուրս եկել այնպիսի լաւ անդրիադործներ ճարտարապետներ, նկարիչներ կամ կենդանագիրներ, ասե՛նարաններ, պատմաբաններ և բանաստեղծներ, ինչպէս որ Աթենացոց մէջէն: Բարձր էր դիւցապնիւս պատերազմի լայնարձակ դաշտերու մէջ յաղթողի փառքը. այլ աւելի բարձր գին ունէր այն մարդը, որն որ ուսմանց ու գեղարհետներու մէջ էր հանդիսացած: Աթենացիք-էլ հասկացան թէ որքան անշուշտ հարկաւոր է ունենալ լաւ օրէնք: Գրաւորն (դեռ 600) արդէն ունէր շինած օրէնքի գիրք, որ այնպիսի խստութիւնով էր պատժում ամեն սխալմունքները և ամեն յանցանքները, որ ասում էին թէ «նորա օրէնքները արիւնով են գրած»: Աթենացոց ողջամիտ խելքը, դատողութիւնը չկարողացաւ այս ևս աւելի երկար սանիլ ու համբերել: Նոցա մէջը կար մէկ հատ շատ աւելի



պատուած ու մեծարած մարդ, որոյ անունն էր Սողոմ: Սրան ապսպրեցին (մօտ 600), որ նոր և աւելի կակուղ օրէնք դրէ, և տէրութեան մէջ նոր կարգադրութիւն սարքէ: Սա այս գործը այնպիսի խմաստութիւնով արաւ, որ նորա կարգադրութիւնները և հրամանները ուրիշ ազգերն-էլ էին ընդունում ինչպէս բարեկարգութեան օրինակ:

Երբոր Սողոմ աւարտեց իւր այս մեծ գործը, խնդրեց հասարակութենէն և բոլոր ժողովուրդէն որ իրան խօսք տան, խոստանան, իւր օրէնքներու մէջէն ոչինչ չփոխել տասը տարի ժամանակ, որ նրանք երկարատեւ փորձերով ճանաչեն և միամտութիւն նորա կարգադրութիւններու արժանաւորութեան վրայ: Յետոյ ինքը թողեց Աթէնքը, և սկսաւ երկարատեւ ճանփորդութիւններ անել դէպ ի Եգիպտոս և դէպ ի Փոքր Ասիա: Լիւդիա դաւառումը եկաւ Արշտոտ թագաւորի մօտ, որ մեծ պատուով ընդունեց այս երևելի մարդուն: Թագաւորը մէկ օր հարցուց նրան թէ՛ «ո՞վ է աշխարքի երեսին ամենէն աւելի երջանիկ մարդը» — Սողոմ պատասխան տուեց թէ՛ «ո՞չ ոք չէ կարող իրա մահէն

առաջ ասուիլ կատարեալ երջանիկ, որովհետեւ երկրաւոր փառքը և ճոխութիւնը շատ կարճատեւ են», այս մէկ այնպիսի ճշմարտութիւն էր, որ Արեւոտը հասկացաւ միայն այն ժամանակ, երբոր դերի ընկաւ Ախւրոսի ձեռքը, և դատակնիք մահու ստացաւ, որ խարոյկի վրայ մեռնի:

Աթէնքումը՝ որ տեղ որ Սողոն վախճանեցաւ խորին դառամութեան մէջ, տեսաւ նա, որ իւր դրած իմաստալիւր կարգադրութիւններուն չը նայելով՝ փառամուլ մարդիկ տակնուվրայ են անուժ տէրութեան անդորրութիւնը: Այսպիսի ոմն էր Պիլիպպոսոս մէկ վեհագոյն տոհմէ առաջացած մարդ, (սա ասում էր թէ՛ Կողրոս թագաւորի ցեղէն է ծագած), որ ժողովրդին հաճոյանալով ջանք էր անում գլուխ բերել իւր մտքի մէջ հաստատած փառամուլ խորհուրդը, այն է՝ կոնգնիլ տէրութեան գլուխը: Ատուամիտ և չարահնար մարդելուզութիւնով ազգային ժողովքի մէջ ստացաւ առաջ հրաման, որ թիկնապահ ղօրք ունենայ. յետոյ հնարիւք Աթէնքի գղեակը դրաւեց, և շուտով սկսաւ հրամանատուութիւններ անել



քաղաքի-էլ, և տէրութեան վրայ-էլ, սակայն ուղղակի թագաւորութեան կարգադրութիւններէն և օրէնքներէն ոչինչ չէր փոխիխում: Մինչև ինքը Սողոմոն-էլ, որ կարողանում էր տեսնել թէ Աթէնքը նորա իշխանութեան տակը չէ տանջւում, օգնականութիւն էր անում նրան իւր խրատներով: Բայց երբ որ մեռաւ նորա խորհրդատուն (560) դուրս եկան ուրիշ մարդիկ, որ քան զնա սրտկաս գահասէր չէին, (Մէգառէս և Արտաքսաս), և տարադրեցին նրան քաղաքէն: Թէպէտ և յաջողեցաւ Պիղիատրատոսին կրկին ձեռք բերել նախկին իշխանութիւնը՝ կոշտակոսւիտ դարանակալութիւնով, որով որ նա անակնկալ կերպով խաբեց բիրտ ժողովրդին, սակայն նորա ատոյցներ, Մէգառէսը, որին որ Պիղիատրատոս վշտացուցել էր չափազանց երախտամոռութեամբ, հասաւ իւր այն նպատակին, որ Պիղիատրատոս նորէն պարտաւորուեցաւ Աթէնքէն հեռանալ: Միայն տասը տարի անցնելէն յետ այս իշխանասէր մարդը կարողացաւ վերստին, զէնքի զօրութիւնով, տիրապետել իւր հայրենի քաղաքին: Ժողո-

վուրդը այսու ամենայնիւ էլի սիրում էր նրան, և այս իսկ սրատձառաւ Պիղիատրատոս մինչև իւր մահը (528) սրահեց իւր ձեռին այնքան դժուարութեամբ ստացած իշխանութիւնը, որն որ նա, արդարև, չէր դորձածում դէսլ ի վատ կողմը : Աթէնացիք այնքան քիչ դժկամակու թիւն էին ցոյց տալիս նորա հեղահամբոյր իշխանութեան դէմ, որ նոքա չէին անդամ մտարերում ընդդէմ կենալ, երբոր Պիղիատրատոսի որդիքը Հիւսիս և Հարդասոս իրանց հօր նման սրահեցին իրանց ձեռքումը տէրութեան իշխանութիւնը, որովհետև նոքա-էլ քաջութեամբ և հեղահոգիութեամբ էին ջանք անում սրահարանել տէրութեան մէջ խաղաղութիւնը : Երկու սրատանիներու Հիւսիսիսի և Արիստոֆիլոսի վրէժխնդրութիւնը, որ իրանց կարծում էին վշտացած, անարդութիւն կրած Հիսապարքոսէն, տասնուչորս տարի անցնելէն յետ՝ փոխեցին այս սրահարաները : Այն երկու տղէքը դաւաճանութեան խորհուրդ սարքեցին այս երկու եղբարց դէմ : Մէկ տօնի հրապարակական հանդիսի մէջ՝ սոքա յարձակեցան այս երկու իշխաններու վրայ, և



Հիպարքոսին սպանեցին, և ինքնայօժար  
մահով փրկանաւորեցին իրանց յանցանքը.  
բայց իրանց այս արարմունքով մեծ փրաս  
բերին Աթէնքին. որովհետև Հիպարիաս այս  
չարադործութիւնէն դրդովելով սկսաւ ցոյց  
տալ խստասրտութիւն իշխանութեան կառա-  
վարութեան մէջ. և այս սխառճառաւ հրա-  
ւիրեց իւր վերայ ժողովրդեան ատելութիւնը,  
և մէկ քանի տարիէն յետ՝ աքսորուեցաւ  
Աթէնքէն սպարտացոց ղօրքի օգնութեամբ,  
և դնաց Ասիայի կողմը, ուր որ նա վրէժ-  
խնդրութեան ցանկութիւնով բորբոքուած՝  
վերջապէս միաւորուեցաւ Պարսից հետ և  
նրանց օգնութիւն էր անում, երբոր նոքա  
հնարներ էին հայթայթում նորա հայրենիքը  
ճառայութեան տակ դնել:

---

ՊԵՐՍԻՑ ՊԵՏԵՐՆԶՄՆԵՐԸ.

19

Առաջին Առշառանք:

Աիւրոս Պարսից թագաւորի մահէն յետ՝  
թագաւոր նստաւ նորա որդին Կամբիսը, որ  
նոյնպէս տիրապետեց Եգիպտոսը: Նրա յա-

Ջորդէն յետ ակտու նստաւ Գաղիէ Հեշ-  
ասսպը, որ իւր աշխարհակալութիւններով  
լայնացրուց Պարսից թագաւորութեան արև-  
ելեան սահմանները, այնպէս՝ որ նորա իշ-  
խանութիւնը տարածւում էր Միջերկրեաց  
ծովէն մինչև Հինդոս գետ (Հնդստանումը):  
Սակայն Պարսից տիրապետութիւնը չէր տա-  
ւապէցնող, որովհետև նորա թոյլ էին տա-  
լիս ամեն աղգի իրանց օրէնքները և կար-  
գադրութիւնները պահպանել:

Չընայելով այս հանգամանքներուն՝ Փոքր  
Ասիայի կղզիներումը բնակուած Յոյները,  
մանաւանդ Յոնիացիք, պատակում էին կա-  
տարեալ ազատութեան, և երկու անձինք  
Հաստոս և Արիստոհորոս՝ միշտ նրանց գրգռում  
էին (500), որ նորա վտարանջեն: Նոցա քա-  
ղաքները, որոնք որ վաճառաշահութիւնով  
արդէն ծաղկել ու ճոխացել էին, զոր օրի-  
նակ՝ Եփեսոս, Զիստանիս (Իզմիր), Սամոս, Քիոս,  
Փոլիս, և ամենէն առաջ՝ շքեղաշաշուք Մե-  
լիսինէն (Միլէտ), իհարկէ կարող էին թէ-  
ծովով և թէ ցամաքով դուրս գնել Պարսից  
դէմ պատերազմական հզօր զինուորութիւն,  
բայց նորա շուտով հասկացան, որ նոցա



ուժը չէ կարող հաւասարուիլ Պարսից զօ-  
րութեան հետ. այս սխառճառաւ նորա օգ-  
նութիւն խնդրեցին Եւրոսպայի Յոյներէն:  
Անպիտան անցաւ նոյա աղաչանքը, որով  
օգնութիւն էին ուղղում Ստարտացիներէն.  
մի միայն Աթէնք և փոքրիկ Երէւելի քա-  
ղաքը, որ Ե-Քիւ (Նեփրոպոնիս, Էրեւոյ) կղզու-  
մըն է, խոստացան օգնել նրանց քսան ու  
հինգ նաւ տալով: Այլ ի՞նչ էին կարող  
անել Յունաց ամեն ճգունքը՝ Պարսից մե-  
ծաղօր զինուորական ուժի դէմ: Սակայն  
այսու ամենայնիւ՝ ապստամբներուն յաջօ-  
ղեցաւ այրել Սարդէս քաղաքը, ուր որ ա-  
թոռանիստն էր Պարսից փոխարքայի (Սաթ-  
րապէ, կուսակալի). բայց շուտով յաղթուեցան  
այս ապստամբները՝ թշնամու գերազանց  
զօրութիւնէն: Բաղմագանձ Միլէտը քարու-  
քանդ եղաւ, և Յոյնք առաջուան պէս մնա-  
ցին լուծի տակ: Բայց սրանով սխառերազմը  
գեռ չվերջացաւ: Գարեհ շատ մեծ հեղա-  
հոգիութեամբ էր կենցաղաւարւում այս  
նորից նուաճուած Ասիական քաղաքներու  
հետ. այլ Եւրոսպական Յոյները նրան բար-  
կացուցին, և անպատիժ-էլ չմնացին: Բաղմա-

ձեռն զօրք անցկացան Հելլէսպոնտոս (Գար-  
տնիւ) ներուցը, Մարտնիոս (\*) զօրավարի  
առաջնորդութեամբ, որ Թրակիայէն և Մա-  
կեդոնիայէն անց կենալով՝ սլատուն ներս թափ-  
վին Յունաստան: Քայց այս ձեռնարկը չը  
յաջողեցաւ նրանց. որովհետև այն երկիր-  
ներու բնակիչները այնպիսի քաջութեամբ  
պատերազմեցան, որ Մարտնիոսը բռնա-  
դատուեցաւ յետ դառնալ: Քան զայս աւելի  
չարարաստիկ եղաւ Պարսից նաւաճանդէսը.  
սաստիկ մրրիկը խորտակեց այն նաւատոր-  
միղը Անտիոն Տրուանդանի մօտ, (որ այժմ  
ասվում է Մոնիէ Սանիէ, սուրբ լեռան), Տաճ-  
կաց Ուռումիւի գաւառումը:

---

(\*) Մարտնիոս այն զօրավարն էր, որ Հայոց ազգային  
նորաստիպ սլատմութեան հեղինակը կարծում է թէ՛ էր Հայ-  
ոց Հայկազն՝ Ներսէ՛՛ թագաւորը, որ Գարեհ Պարսից թա-  
գաւորի փեսայ էր, և Յունաց դէմ կարգուեցաւ զօրավար  
Պարսից զօրաց:



ՊՍԵՄԻՑ ՊՍՏԵԲ ԵՋՄԻ

Երկրորդ Արշամանը:

Աթէնացոց ու Սպարտացոց տմարդութեան սրատճառաւ Պարսից բարկացած թագաւորի տրտմտութիւնն-էլ ըստ մեծի մասին նոցա դէմ էր բորբոքուած: Գաթիս և Արտաղէտն Կէս միլիոնէն աւելի զօրք բերին նաւերով Եփեսոս (Նէրոպոլիս) կղզին: Յարձակում արին անզօր Երէթիս քաղաքի վերայ, և զկնի վեցօրեայ կամակոր մարտի առին քաղաքը և բանդեցին, իսկ բնակիչներին քշեցին Պարսից աշխարքի ներքսակողմը: Սրամէն յետոյ Պարսից զօրքը դիմեցին դէպի Աթէնքի կողմը (Արտաղէտ): Աթէնացիք դեռ լաւ սրատրաստութիւն տեսած չէին, որ դէմ դնէին սյսպիսի ահեղ բաղձութեան, և շտապով դեսպան ուղարկեցին Սպարտա, որ նրանցմէն օգնութիւն ստանան: Քայց նաքա սրատասխանեցին թէ իրանց հին սովորութեամբ, մինչև լուսնի լրումը, քաղաքէն դուրս գալ չին կարող:

Այլ այս միջոցին թշնամին մօտենում էր, ինչպէս որ պատմում են, հարիւր հազար հետևակ և տասը հազար հեծեալ զօրքով : Այն ժամանակ ինն հազար Աթէնացիք մէնակ դուրս եկան դաշտ : Պատուէա քաղաքն-էլ ուղարկեց նրանց օգնութիւն՝ հազար մարդ : Տասը հողի զօրավարներ էին առաջնորդում զօրքին՝ հին սուլորութեամբ, և ամեն մէկը մէկ օր սպարապետութիւն էր անում թշնամիներու դէմ : Պատերազմը պիտի բացվէր, այս սրտերազմի օրվան սպարապետըն էր Մելիտոսէս : Սա առաջ յարձակեցաւ Պարսից վրայ Մարտինիան դաշտումը : Արիւնազանդ մարտէն ետքը՝ թշնամին վերջապէս դաշարը՝ ճակատամարտի տեղը, թողեց, չգիմանալով Յունաց քաջութեան և գինուորական ճարտարութեան, և վայրենի շտապով սկսաւ վազել դէպի նաւերը : Նոցա բանակը մնաց աւար Յունաց : Պատերազմի միւս օրը՝ Սպարտացիք-էլ եկան հասան : Պարսից նաւատորմիցը էլ ուրիշ բանի ձեռնամուխ չըդունուած՝ չուեց դէպի Ասիա և Գարեհ, որ բռնաւոր խառասիրտ չէր, հրամայեց դերի ընկած Արեթրիացոց համար՝



Պարսկաց երկրի խորին տեղերումը՝ Հօշ  
մայրաքաղաքի մօտերումը բնակու թեան տեղ  
տալ: Միլտիադէս, ինչպէս հայրենեաց ա-  
ղատող, շատ բարձրահամբաւ հռչակուեցաւ.  
տակայն անհաստատ ժողովուրդէն շուտով  
ստացաւ վարձ ու տրիսուր տակերախտու-  
թեան: Փարսս կղզու դէմ ունեցած անյա-  
ջող արշաւանը դրդուեց Աթէնացոց՝ նորա  
դէմ: Միլտիադէսի վրայ դատակնիք դր-  
վեցաւ, որ սկստերապմի ծախսի տուգանքը  
հատուցանէ, և երբ նա չըկարողացաւ տալ,  
բանտը դրուեցաւ, և այն տեղէլ մեռաւ  
շուտով: Այսպէս վարձատրեցին Աթէնա-  
ցիք Մարաթոնեան յաղթանակողին:

Այս սկստահեցաւ 490 թուին՝ Քրիստոսի  
ծնունդէն առաջ:

Երբորտ Արշաւանը:

Դարեհս այնպէս խոնարհ մարդ չէր, որ  
Յունաց դէմ ունեցած այնքան հեռաւոր ար-  
շաւանի մէջ սկստահած խղճալի անյաջողու-  
թիւնը կարողանար նրան ստիպել, որ նա  
իւր մտքումը դաղափարներէն ձեռք վեր  
առնէր: Սորա հակառակ նա աւելի զայրա-

ցաւ, որ իւր ձեռնարկութիւնը այնպէս ամօթալի վերջ ունեցաւ, և սկսաւ պատրաստութիւն տեսնել, որ նոր ի նորոյ արշաւան սարքէ դէպի Յունաստան, որ այս կերպով իւր վրէժը հանէ Յունաց ազգէն: Մեծ հանդերձանքներ պատրաստուեցան այս արշաւանի համար. բայց շատ տարիներէլ քաշեցին, մինչև որ կարողացաւ Քարէհ գլուխ բերել այն ամեն իւր դիտաւորութիւնները, այս պատճառաւ ուրիշ անցքեր էլ սկսան պատասխանել թաղաւորին, և վերջապէս Քարէհ ինքն-էլ մեռաւ:

Սակայն նորա ժառանգ Քալոյսը ձեռք վեր չառաւ այն գաղափարէն: Մարաթոնեան ճակատամարտի տասներորդ տարին՝ Պարսից թաղաւորը հրամայեց որ Հելլէսպոնտոսի վրայ (480) կամուրջ շինեն, և իւր հօր զօրքէն սուրի զօրք անցուց այն կամուրջէն միւս երես: Մեծ նաւահանդէս էր լեղ տալիս ծովախուճը: Յունաստանի մէջ սաստիկ խռովութիւններ և շփոթներ կային: Յունաց թաղաւորութիւններու մեծ մասը չէր-էլ միտք անում Պարսից ընդդէմ կանգնիլ: Բայց Աթէնացիք մտքերու մէջ հաս-



տատեցին վստահութեամբ երթալ վտանգ-  
ներուն ընդ առաջ . և ճշմարիտ է՝ որ մէկ  
քանի ցեղերից-էլ օգնութիւն ստացան: Ար-  
դէն Պարսիկք հեղեղել էին Թեսսալիան և  
իրանց առջևները մէկ հաստ թշնամի շէին  
տեսնում: Այն ժամանակ Ղէոնիք Սպարտացին  
դուրս եկաւ մէկ քանի հազար մարդով՝  
որ Թէրմոփլայ կիրճը (նեղ ճանախան), որով  
որ Պարսիկք պիտի անց կենացին՝ խափանէ  
և այն իսկ միջոցին՝ Յունաց ազգացին (ընդ-  
հանուր) նաւատորմիղն-էլ դուրս եկաւ թըշ-  
նամիներու ծովային զօրութեան դէմ՝ Եւբէա  
կղզու Հիւսիսային ծայրումը՝ Արտեմիսոս՝ հը-  
րուանդանի մօտ: Անօրինակ քաջութիւնով  
դէմ էր տալիս Ղէոնիք, և Պարսից յարձա-  
կումները դարտակ էին անց կենում: Վեր-  
ջապէս դանուեցաւ մէկ դաւածան, ազգի  
մասնից Յոյն, որ ցոյց առեց Պարսից սարի  
վրայից ճանախայ, որ Յունաց վրայ՝ ետևե-  
րիցը կարողանան թափուել: Երբ որ այդ  
խմացաւ Ղէոնիք՝ բաց թողեց միւս ցեղերու  
զօրքը, որ երթան, փախչին ու ազատուին,  
և իւր մօտ պահեց միայն Սպարտացիներուն  
և Թերացիներուն:

Փրկու թեան համար մտածելու տեղ էլ  
չկար. այլ այս սրտիկ զօրքը առիւծի բար-  
կու թիւնով էին մարտնչում: Երբ որ Ան-  
նիդ վէր ընկաւ, թերացեցիք-էլ անձնատուր  
եղան: Հողարաւոր թշնամիք արդէն կոտո-  
րուել էին. բայց սրտերազմը այն ժամա-  
նակ վերջացաւ, երբ որ վերջին Յոյն-էլ  
թուրը ձեռին մեռաւ: Այնուհետեւ Քսեր-  
քսի առջեր բաց մեաց դէպ ի Յունաստանի  
սիրար մտներու ճանապարհը: Յոյնք ուղոււմ  
էին սպասել Պարսից համախմբած զօրու-  
թեամբ՝ Բէռլտիա դաւառումը: Այլ Պեր-  
սոնեացիք փոխեցին իրանց դիտաւորու-  
թիւնը. փախան իրանց թերակղզին, և կիր-  
ճը փակեցին պարսպանման թումբերով:  
Աթէնացիք ահապատառ զարհուրանքով  
տեսան, որ այս երկրորդ անգամն-էլ մէնակ  
մնացին Պարսից վրէժխնդրութեան մատ-  
նուած:

Այնուհետեւ յուսահատուած՝ մտքերումը  
դրին բարձի թողի անել իրանց Աթէնք  
քաղաքումը: Աթէնացիք քաշուեցան փոք-  
րիկ Սալամինս կղզին: Պարսիկք տակնուվրայ  
արին բոլոր երկիրը, և մոխիր դարձուցին



Աթէնքը, որոյ դղեակը պահպանում էին մէկ քանի հաստ անգոր ծերունիք: Այս միջոցումը ծովի վրէն-էլ արդէն սկսել էր կըռխուր: Արտի-իլի-ու-ի մօտ Պարսիկք բաղմաձեռն զօրութեամբ յարձակեցան Յունաց նաւատորմիղի վրայ, բայց Յունաց քաջութիւնէն, և մանաւանդ ուժիկն մըրիկներէն կորցրին իրանց նաւահանդիսի մեծ մասը: Յունաց նաւերու առաջնորդը՝ հին սուլթութեամբ էր Սարատացի, բայց բոլոր ձեռնարկութիւններու կառավարիչը էր Թէ-ի-ու-ի Աթէնացին:

Սեմիտառիկէսը մեծ երախտաւորութիւն արաւ, որ երբ Պարսից արշաւանը սկսում էր՝ մէկ անգ ժողովեց բոլոր Յոյներուն՝ հասարակաց պաշտպանութեան համար: Նա Յոյներուն խորհուրդ տուեց, որ նաւատորմիղ շինեն: Նա գրդեց Աթէնացոյ, որ քաղաքը բարձի թողի անեն: Եւ երբ Յոյնք դուրս եկան իրանց նաւերով Պարսից նաւահանդէսի սուջի, նա ամեն ջանքը գործ դրեց, որ խմատուն խորհրդատուութիւններով օգտարեւր դառնայ իւր հայրենիքին: Արտեմիդիումի ճակատ

տամարտէն յետ՝ Թեմիատոկէս իրաւամբ  
էր վախեննում, որ Պարսիկք նրանց ճան-  
փան չըկտրեն, որովհետև Պարսիկք ունէին  
հաղար երկու հարիւր հատ նաւ՝ Եւբէա  
կղզու մօտի նեղուցի մէջ, և յորդորեց  
Յոյներուն, որ հեռանան դէպ ի Սարդոնեան  
ծոցը՝ Աթէնքի մօտ: Կամաքադեոնի և Սա-  
լամիս կղզու մէջ տեղաւորուեցաւ (480)  
բոլոր Յունաց նաւատորմիղը, որ թուով  
340 նաւերէ էր բաղկացած, և նրանցից 200  
նաւէն աւելի Աթէնացոց սեպհականն էին:  
Սալարտացիք ուղարկել էին միայն տասը  
հատ նաւ: Այլ այս տեղէլ Սալարտացիք  
չէին իրանց կարծում ասրահով, և ուղում  
էին թողնել հեռանալ. մի միայն հնար-  
քով կարողացաւ Թեմիատոկէս սրահել Աե-  
լոստոնէացոց, որ չըբաժնուին իրանցմէն և չը  
վախչին: Քսերքս շատ էր ցանկանում որ  
տեսնէ թէ՛ Պարսիկք ինչպէս պիտի ոչնչա-  
ցնեն Յունաց նաւատորմիղը. Պարսիկք թա-  
գաւորի աչքի առջևը վաղեցին իրանց նա-  
ւերով Յունաց նաւերու վրայ: Յոյնք իրանց  
բնիկ քաջութեամբ պատերազմելով այս  
տեղ ստացան նոր փառք, նոր հռչակ: Յու-



նաց շատ աւելի օգնեց տեղի դրութիւնը:  
Պարսից բաղմաթիւ նաւերը չէին կարողա-  
նում արձակ համարձակ շարժել նեղ ու  
անձուկ ծովի մէջ, և շուտով սկսան շը-  
փոթիլիլ ու խառնիլիլ: Նոցա նաւերու շատը  
խորտակուեցան, միւսները սրատերազմի տե-  
ղից հեռացան. Յոյնք աւելի սաստիկ ուժով  
սկսան նոցա վրան վաղել: Մեծ մեծ անյա-  
ջողութիւններ քաշելից յետ՝ Պարսիկները  
վերջապէս բռնադատուեցան հեռանալ, և  
այնքան չունէին յօժարութիւն միւսանգամ  
վէզ մտնել Յունաց դէմ, որ խկոյն, խկ  
միւս գիշերը, իրանց նաւատորմիդով քա-  
շուեցան դէպի Ասիա:

Այս կերպով Պարսից հետեակ ղօրքը  
էլ չունենալով նաւատորմիդէն օգնութեան  
յոյս՝ կանգնած մնացել էր Յունատտան քա-  
րուքանդ արած հարաւային դաւառումը,  
ուր որ չէր կարողանում դտնել բաւական  
պաշար և ապրուստի հնար: Այս պատճա-  
ռաւ Քսերքս սկսաւ յետ դառնալ շտապե-  
լով Հելլէսպոնտոսի վրայից դէպի Ասիա,  
և թողեց առատաբեր Թեսալիայումը երեք  
հարիւր հազար ղօրք, որ յետագայ տարին

պիտի իսպառ նուաճէր Յունաստանը, որովհետեւ հին ժամանակներումը ձմեռները երբէք կռիւ չէին անում: Այս զօրքի սպարապետն էր Մարդոնիոս: Պարսից թագաւորի հպարտութիւնը այնպէս էր խոնարհել, որ դեռ դէպ ի յետ ճանփան շնկած՝ Յունաց անդին առաջադրեց շատ օգտաւէտ և սրանծալի հաշտութիւն: Բայց, ինչպէս մէկ տարի առաջ Թեմիստոկլէսը, նոյնպէս և այժմ Արիստոտէլը՝ ջանք դրեց միաբանեցնել Յոյներուն հասարակաց սաշտաւանութեան համար: Իրաւ է, Թեսսալիացիք, Բեովտիացիք և ուրիշ Յոյներէլ տալիս էին Պարսիկներուն, ոմանք ստիպուած և ոմանք ինքնայօժար, օժանդակ դունդեր, մինչև Արգիացիք Պելոպոնէսումը դաւաճանութեան և անդի մասնշտութեան բամբասանքի տակէլ ընկան. սակայն Աթէնացոց, Սպարտացոց և նորա դաշնակիցներու մէջ մէկ նոր դաշնադրութիւն սարքվեցաւ: Մարդոնիոսը նորից առաջ խաղաց դէպի Աթէնք. այլ այն երկիրը մէկ անգամ կողոսպտուած և ամայացած էր, և Աթէնքը իսպառ քարուքանդ եղած. երբ որ երկրորդ անգամ



էլի բնակիչքը թողին ու փախան, Մարդոնիոս ինչ պիտի անէր այն անապատ դառած տեղումը. շուտով քաշուեցաւ դէպ ի Բէովտիա: Բայց Մարդոնիոսի ետեւէն դնում էին Յունաց զօրքը՝ Պարսիկացի Սպարտացոց առաջնորդութեամբ: Աթէնանոց զօրավարն էր Ալեքսանդրէս: Տասը օր երկու կողմանց զօրքը կանգնած էին մէկ մէկու դէմ ճակատ առ ճակատ: Յանկարծ Պարսիքի սկսան յարձակուել, և ճակատամարտը խմբակցաւ Պարսիկացի սասած տեղումը: Այս անդամին-էլ յաղթութիւնը ստացան Յունաց քաջութիւնը, ծայրագոյն պատերազմական և ղինուորական ճարտարութեան տեղեկութիւնը և արիութիւնը: Պարսիկք խայտառակութեամբ յաղթուեցան. ինքը Մարդոնիոսը սսրանուեցաւ, և թշնամիներու սսլառսսպուռ փախուտը վերջապէս այս՝ Յունաց համար այսքան փառաւոր պատերազմը, որ յաւէժ ազատեց նրանց քան զամենը աւելի ահեղ թշնամիներէն (479 ամօք Քրիստոսի ծնունդէն առաջ):

Այս-էլ հարկաւոր է իմանալ որ՝ Յունաց նաւատորմիղը, որ Պարսից նաւահան-

գիտի ետևէն ընկել էր, մեծ անվեհերու-  
թեամբ մէկ անգամ-էլ յարձակեցաւ Պար-  
սից վերայ՝ Մեհաբէ Տրուանդանի մօտ, կրակ  
տուեց նոցա նստերուն, գրաւեց նոցա բա-  
նակը, և բնաջինջ արաւ բոլոր նոցա զօրքը  
այնպէս, որ Ասիայի մէջ գտնուած Յունաց  
քաղաքները կարողացան միւսանդամ ա-  
զատուիլ Պարսից իշխանութենէն: Յունաս-  
տան քան զայս աւելի համբաւաւոր ժամա-  
նակ էլ չըլայելեց:

ԹԵՄԻՍՏՈԿԼԵՍ.

21

Յունաց տէրութիւններու սրատմութեան  
մէջ, մանաւանդ Աթէնացոց սրատմութեան  
թեան մէջ, չըկայ այնպիսի սարազայ, որ  
կարողանայ այնքան հիացնել մարդուս, ինչ-  
քան որ հիացնում է այն մարդոց վիճակը,  
որոնք որ աւելի մեծ երախտիք են ցոյց  
տուել իրանց հայրենեաց: Արդեօք իրանցն  
էր յանցանքը, թէ ո՛չ, չը գիտենք. բայց  
նրանցմէն շատերու վերջը էր ասարազդ:



Մենք արդէն գիտենք թէ՛ որքան սաստիկ  
դժբաղդութիւն քաշեց վեհագոյն բաղմե-  
րախտ Մեծօրհնէսը. նրանէն յետոյ եկած զօ-  
րավարները քան զնա լաւ վիճակ չունե-  
ցան: Թե՛ Մեծօրհնէսը, որ իրաւամբ անուան-  
վում էր Երեւոյի Կոնստանտին, որ ո՛չ  
միայն իւր հայրենակցաց, այլև Սպարտա-  
ցոց ցեղէն-էլ փառք ու պատիւ էր վայե-  
լում, իրա համար վաստրիկեց նոր և մեծ  
արժանաւորութիւն, յարգ ու մեծարանք,  
այնու, որ Աթէնքը սարսպապատ արաւ,  
որ պահպանէ իւր հայրենիքը Սպարտացոց  
զօրեղ կարողութենէն, որոնք որ օր ըստ  
օրէ աւելի էին նախանձվում Աթէնացոց  
բարեհամբաւութեան:

Եւ այց այս իւր հայրենասիրութեամբ,  
իւր զգուշութեամբ, իւր այն Աթէնքի շքե-  
ջապատը պարիսպ քաշելով, Թեմիստոկ-  
լէսը ընկաւ Սպարտացոց ատելութեան տակ,  
մինչև որ Աթէնքի մեջ-էլ շատ մարդու սրբ-  
տումը զարթեցաւ նախանձ: Աթէնացոց մե-  
ծամեծքը վախենում էին այն պատիւներէն,  
ինչ որ նա արժանապէս ստանում էր, և  
հնարը գտան անհաստատ ժողովրդեան

սիրտը փոխել, որ Թեմիատոկլէսին խեց-  
աքսոր (օսորայլա՛) (\*) ասած վճիռի միջոցով՝  
Աթէնքէն տարադրեն: Այսպէս արքա-  
րանայ տակ շատ երևելի և հռչակաւոր  
Աթէնացիք են ընկել, և նա-էլ նրանց բա-  
ժանորդ դա՛նուեցաւ: Աղգային ժողովի դա-  
տակնքով, այս մեծ մարդիկ, որ իրանց  
կարողութիւնով և փառք ու սլատիւով հա-  
մարվում էին հասարակաց և տէրութեան  
երկիւղալի (որ չլինի թէ Պալատարարն նը-  
ման բռնանան). սխտի իրանց կամքով հե-  
ռանային Աթէնքէն. բայց այս արքորը նրանց-  
մէն անսպասուութեան արատինք չէր դառ-  
նում: (Այս կամաւոր արքորը առաջ յանձն  
առին Ղիկուրգոս և Սողոն օրէնսդիրները,  
և յետոյ ձեր փոխեց և սովորութիւն դա-  
ռաւ կամսա տարագրիլն-էլ): Բայց Թեմիա-  
տոկլէս պարտաւորուեցաւ քաշել խստադոյն  
վիճակներ: Նա առաջ բնակուեցաւ Արգոս  
քաղաքումը. բայց այս տեղ նրան սկսան  
հալածել Սպարտացիները: Իզուր տեղը էր

---

(\*) Հին Յոյների վճիռն է, որով դատապարտեալը տասը  
տարի ժամանակով դուրս էր ձգվում իւր հայրենիքէն. այդ  
վճիռը գրում էր ժողովուրդը խեցիկներու (օսթրոքոն) վրայ:



պտրտում թեմիատոկէս ապահովութիւն  
Կորկիւրա (Քէօրթէօ) կղզումը. այս կղզե-  
ցիք վախենում էին Սպարտացոց բարկու-  
թիւնէն: Նա այն տեղերէն փախաւ Մոլոսա-  
ցոց Արթուրի թագաւորի մօտ, որ Եպիւռա-  
ցոց (Ալքանիայի կամ Առնաւուտի) երկ-  
րումն էր: Երբոր իմացաւ թեմիատոկէս՝  
թէ այս տեղէն անվտանգ է, որովհետեւ  
Աթէնացիք ու Սպարտացիք պահանջում  
էին, որ նրան իրանց ձեռքը տան, նա վեր-  
ջապէս դնաց Պարսից Արտաշէս (Արտա-  
շէս) թագաւորի մօտ, և այնպէս Պարսից  
հովանաւորութեան տակ մտաւ: Պարսից  
թագաւորը ընդունեց նրան մեծ ուրախու-  
թեամբ և մեծ մեծ պարգևներ տուեց.  
բայց երբ որ սկսեց Պարսից թագաւորը  
նրան յորդորել, որ նա իւր հայրենեաց  
դէմ վրէժխնդրութիւն անէ՝ թեմիատոկէս  
յանձն չառաւ:

Ետում են թէ՛ թեմիատոկէս ինքը իրան  
սպանել է:

ՍՐԻՍՏԻԴԷՍ .

22

Դեռ ևս Թեմիատոկլէսի տարադրութեանն առաջ էր Պլատէայի սլատերազմի մէջ յաղթանակ կանգնող դիւցազնը Արիատիդէսը, այդ վիճակի համը տեսել . և որ աւելի նկատելու արժանն է՝ մէքիչ իակ Թեմիատոկլէսի թելադրութեամբ : Սորա երկուսն-էլ՝ Արիատիդէսն-էլ, Թեմիատոկլէսն-էլ՝ իրանց ժամանակու մն էին Աթէնքի մէջ քան զամենքը աւելի հռչակաւոր մարդիկ . Թեմիատոկլէսը՝ ինչպէս խելօք, բարի համբաւի ծարաւող՝ թագաւորուն սլաշտօնատար : Արիատիդէսը ինչպէս համեստ (արդարակորով) քաղաքացի, հռչակ չը սլահանջող որոյ ճշմարտասիրութիւնը, (արդարախոհութիւնը) այնքան էր ամենուն յայտնի, որ նրան մականուն էին դրել՝ ~~արդարախոհ~~ : Այսպէս երկուսի բնութիւնը իսպառ մէկ զմէկէ տարազան լինելով՝ նոցա մէկ զմէկու հետ միշտ բարեկամ չմնալը՝ մէկ անակնկալ դործ չէր . և այս պատճառաւ զարմանալ-էլ հարկաւոր չէ, թէ Թեմիատոկլէսը՝ որ փաղփիւնափայլ



յաղթանակներով և աւարներով ժողովուրդի առջև լաւ մարդ էր դառնում, բանը այն տեղ Տասցրեց, մինչ զի աղնիւ Արիատիդէսը, որ շատ անգամ Թեմիստոկլէսի փառամոլ գաղափարներուն հակառակ էր կանգնում, քաղաքէն դուրս աքսորվեցաւ այն պատրուակաւ, իբր թէ այն մեծ յարգը և մեծարանքը, որն որ նա վայելում էր, ստիպում են կասկածիլ, որ նա այդ ճանփով տէրութեան բռնակալ չը դառնայ:

Արիատիդէս իւր տարադրութիւնը համբերեց իւր բնիկ արժանաւորութեան համեմատ, և այնքան հեռու էր ամեն տեսակ վրէժխնդրութենէն, որ իւր սաստիկ հալածուած ժամանակը՝ Սպարթանս կղզու ճակատամարտէն քիչ առաջ՝ շտապելով եկաւ Աթէնացոց մօտ, և մեծ երախտիք ցոյց տուեց ինչպէս Աթէնացոց, նոյնպէս և Թեմիստոկլէսին:

Այս անգրէն յետ՝ նա միւսանգամ հրաւիրվեցաւ իւր հայրենիք. դօրաւարութիւն արաւ Աթէնացոց՝ Պլատէայի մօտ պատահած ճակատամարտումը, և սպա առաջնորդութիւն արաւ Յունաց նաւահանդէսին:

Պարսից դէմ ծովային սրատերազմումը: Նորա ուրիշ դիւցազնական սխրագործութիւնները չենք խմանում, բայց այսու ամենայնիւ հռչակված է նա իւր արդարախոհութեամբ և անշահասիրութեամբ, և այս իսկ պատճառով Աթէնք քաղաքի դաշնակիցները ընտրեցին այս ազնուամիտ մարդուն՝ տեսուչ հասարակաց դանձարանին: Նրանք ցոյց տուին դէպ ի նորա արդարակորովութիւնը մէկ այնպիսի անկողար փրօտահոսութիւն, որ նորա կամքին թողին անպատան սահմանել՝ թէ իւրաքանչիւր տէրութիւնը, համաձայն իւր մեծութեան, սրբան դրամ պիտի հանգանակէ այս դանձարանի մէջ: Արիստիդէսի սուտքինութեան միջնորդութեամբ Աթէնացիք ձեռք ձգեցին բոլոր Յունաստանի ծայրագոյն յարդը և մեծարանքը, որն որ առաջ Սպարտացիները ունէին: Արիստիդէս գոլով հարիւր հազարներու տնտես, մեռաւ այնքան աղքատ, որ հազիւ կարողացան իրան թաղել:



ՊՍԻՋԱՆԻՍՍ.

23

Ինչպէս մեղ սիրելի են թեմիատուկէսի  
և Աբիատիգէսի շնաշխարհիկ առաքինու-  
թիւնները, և նրանց ձօնում ենք մեր հիաց-  
ման բուրկէնը, նոյնպէս-էլ զգուելով երես-  
ներս յետ ենք դարձուցանում հաւատա-  
դրութ և դաւաճան Պապանիասէն: Սա ծա-  
գել էր Սպարտացոց թագաւորներու տու-  
նէն, և Պլատէայի ճակատամարտի ժամանակն  
էր Սպարտացոց զօրաւար, և յետ ժամանա-  
կաց նաւատորմիղի հետ ուղարկւեցաւ դէպի  
Հելլէսպոնտոս, որ այն տեղէն Պարսիկներուն  
դուրս անէ: Բազըը այս տեղ-էլ յաջողեց  
այս փառամոլին, բայց համանդամայն դրը-  
դեց, որ իւր հայրենիքին դաւաճանութիւն  
անէ: Պապանիաս ծածուկ դաշն դրեց Պար-  
սից հետ, թէ նոցա օգնութիւն կ'անէ, որ  
նոքա կարողանան Յունաստանը հպատակե-  
ցնել, և թէ որ Պարսից թագաւորը իւր  
դուստրը տայ նրան կնութեան: Բայց նա  
անդգուշութիւնով խարուեցաւ, երբ որ նը-

րան խոստացան նորա ցանկութիւնը կատարել . և վստահացած իւր յաջողութեան վրայ, սկսաւ այնպէս նախամեծարութիւն ցոյց տալ Պարսից ճէսերուն և սովորութիւններուն, և կենցաղավարովիլ այնպիսի Սպարտացիներու համար ատելի և անտանելի շռայլութիւններով, որ շուտով զարթեցրին դաւաճանութեան կասկած նոցա սրտումը: Եփորթ (\*) երկու անգամ կանչեցին նրան զօրաց բանակէն. այլ նա այնքան յանդգնութիւն էր ստացել իւր՝ Պարսից թաղաւորի փեսայ դառնալու դիտաւորութիւնէն, որ ընաւ շուզեց ձեռք վեր առնել իւր հաւատարմութ գաղտնիարներէն: Աերջապէս Սպարտացիք ձեռք գծեցին նորա դաւաճանութեան յանցանքի անժխտելի ապացոյցները: Երբ որ այս-էլ խմացաւ Պաւղանիաս, փախաւ ու ստրաստանեցաւ տաճար, որ տեղաց որ այն ժամանակվայ կարծիքներով չէին կարող բռնութեամբ դուրս

---

(\*) Եփորթ՝ էին Սպարտացոց տերութեան ծայրագոյն պաշտօնատարները, որ թաղաւորներուն անգամ ունէին իրաւունք ստեան հրաւիրել, և պահանջել որ հաշիւ տան, և իրանց դործերու մէջ արդարանան:



քաշել յանցաւորին-էլ . այլ Սպարտացիք  
գտան նորա սլատուհասելու հնարը . նորա  
տաճարը փակեցին, և նա այնպէս անսլատի-  
մեռաւ՝ քաղցածութիւնով տանջուած :

ԿԻՄՈՆ.

24

Արժան է նոյնպէս յիշատակութիւն անել  
Կիմոնի համար, որ մեծահռչակ Միլտիադէսի  
որդին էր : Կիմոն իւր զգօնութեամբ և  
իւր արդարակորովութեամբ արդէն ստացել  
էր ժողովրդեան սէրը՝ ծայրագոյն աստիճանի  
մէջ : Բայց այն յարգը և այն մեծարանքը  
աւելի բաղմնապատիկ դառաւ, երբ որ նա  
յաղթակիր զօրութեամբ սլատերազմեցաւ  
Պարսից և ուրիշ թշնամիներու-էլ դէմ :  
Շատ յաղթութիւններու հետ միասին՝ նա  
կանգնեց գերահռչակ յաղթանակ Պարսից  
վրայ Եւրիմեդոն (\*) գետի մօտ (469 ամօք

(\*) Եւրիմեդոն գետ է Պամփիլիայումը՝ Փոքր Ասիայի  
հարաւային ծովեզերքումը :

Քրիստոսի թուականէն առաջ ) : Բայց սա-էլ  
աքսորվեցաւ ժողովրդեան կամքով այ  
պատճառաւ, որ վախենում էին նորա կարօ-  
ղութենէն : Այլ մէկ քանի տարիէն յետ  
Կիմոն յետ հրաւիրուեցաւ, որովհետեւ  
այնպիսի մարդէն զրկուիլը՝ շատ զգալի ե-  
ղաւ : Յետ ժամանակաց՝ նա համարեա՛ թէ  
տիրապետեց բոլոր Կիսլրոս կղզուն. այլ  
մեռաւ արշաւանի ժամանակը. և իւր քա-  
ղաքակիցք նրա համար աղիողորմ սուգ  
արին, որովհետեւ նա նրանց մեծ մեծ բա-  
րերարութիւններ էր արել, և նրանով  
բարձրացել էր նոցա համբաւը :

---

ԱԹԻՆՔԻ ԾԱՅՐԱԳՐՈՅՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ  
ՏԿԱՐԱՆՍԸ : ԳԵՂՈՊՈՆԻՍԵՆՆ ԳՍԵՆԵՍՁՄԸ,  
ԱԿԻՔԻՍԴԻՍ :

Արք որ Պարսից կողմէն երկիւղը բոլո-  
րովին մերժվեցաւ, Յունաց մէջ ծագեցան  
զանազան տարաձայնութիւններ, մանաւանդ  
երկու մեծ մեծ քաղաքները՝ Աթէնք ու



Սպարտա՝ մէկ զմէկու վրայ սկսան նախան-  
ձարեկ լինել : Այս քաղաքներէն ամեն մէկը  
Զանք էին անուամ, որքան հնար է, քաշել  
իրանց կողմը Յունաց ուրիշ տէրութիւն-  
ները. մինչև մէկ կողմնակցութիւնը միաւոր-  
վում էր ընդդէմ միւս կողմնակցութեան  
Պարսից հետ-էլ, որոց դէմ վերը ասած  
պատերազմէն յետն-էլ տակաւին շատ ժամա-  
նակ շարունակվում էր Ասիայումը կռիւր :  
Վերջապէս երկու տէրութիւններն-էլ դա-  
ռան հրամանահան միւս տէրութիւններու,  
և որքան հզօր էր Սպարտա ցամաքումը,  
նոյնքան հզօր էր Աթէնք ծովի վրայ. և  
միւս Յունաց տէրութիւնները պիտի իրանց  
կառավարէին այս երկու հզօր տէրութիւն-  
ներու մէկն ու մէկի կամքով : Աթէնքումը  
դուրս եկաւ մէկ մարդ, որ իւր հնարադէտ  
խոհեմութեամբ, և մանաւանդ՝ զարմանալի  
ճարտարախօսութեամբ ստիպեց ժողովրդ-  
եան սիրել իրան, այնպէս որ՝ նա, ինչպէս  
որ մէկ ժամանակ Պիզիստրատոսը, թէպէտ  
և շատ հակառակորդներ ուներ, կառավար-  
ում էր Աթէնացոց իսպառ իւր կամքով,  
և այսպէս դառել էր մէկ կերպով հոգա-

բարձ կամ փոխարքայ բոլոր տէրութեան:  
Այս երևելի անձն էր Պէրէնէն (460 առ. Ք.):  
Քաղաւորութիւն էր, որ Պերիկլէս ինքը  
չէր կամենում բարձրանալ, այլ միայն ցան-  
կանում էր իւր հայրենեաց պայծառութեան  
և փառքին. բայց նորա աշխատանքը չէին  
երախտապարգև Աթէնացոց համար: Այլ  
այսու ամենայնիւ նա, նուաճելով շատ քա-  
ղաքներ և կղզիներ, Աթէնքը այնքան հզօր  
դարձուց, որ երբէք այն զօրութիւնը ունե-  
ցած չէր առաջ, և յետոյ-էլ շունեցաւ. և  
յաղթուած քաղաքներէն առած հարկերը  
բանեցնում էր շքեղաշուք շինուածներու  
վրայ և ճարտարարհեստութեան արգասեաց  
վրայ, որն-որ նա ստիպում էր մշակել ե-  
րևելի ճարտարապետներուն, անդրիադործ-  
ներուն և նկարիչներուն, և որոց աւերակ-  
ներու վրայ մենք այժմ-էլ ենք հիանում:  
Այլ Աթէնացիք՝ իւրեանց դէսլ ի նուաճուած  
ցեղերը խստասրտութեամբ՝ գրգռեցին իւր-  
եանց դէմ բոլոր Յունաստանը, և իրանց  
յանդուգն տիրապետութեամբ այնպէս շար-  
ժեցին ուրիշ տէրութիւններու յաշաղան-  
քը և նախանձը, որ այս դառաւ սրտաճառ



անընդհատ կռիւներու, և վերջապէս Պէլո-  
պոնէսիան կոչուած պատերազմին, որ տեւեց  
27 տարի (431 — մինչև 404 Քրիստ. առաջ),  
և մասամբ իւրիք քարուքանդ արին Յու-  
նաստանը, և իսպառ խոնարհեցուցին Ա-  
թէնքը:

Այս էր այդ կռիւի սրտաւառը: Գերբո-  
սիոս (\* ) քաղաքի մէջ, որ Կոթիէսիոս (Քէօր-  
Քէզ) կղզու բնակիչներու շինածն է, երկու  
կուսակցութիւնք իրանց մէջ պատերազմ  
ունէին: Այս կուսակցութեանց մէկը հրա-  
ւիրեց Կորկիւրացոյ՝ օգնութիւն, միւսը՝  
Կորնթացոյ: Եւ որովհետև, երբ որ պատե-  
րազմը բարբառվեցաւ՝ Կորնթացիք յաղթե-  
ցին, Կորկիւրացիք օգնութիւն ուղեցին  
Աթէնացոյցմէն, և նորա հասան: Կորնթա-  
ցիք այս դործը համարեցան դաշնադրու-  
թեան խղումն, և բոլոր Պելոպոնէսցոց կան-  
ջեցին նախատ, որ Աթէնացոց դէմ մարտն-  
ջին: Երկու կողմանք-էլ իրանց համար դաշ-  
նակիցներ ձարեցին: Արքան աւելի հզօր  
աղգեր կային՝ կանդնեցան Կորնթացոց և

---

(\*) Այժմ ասվում է Գուրացցո Եռնաուուսի երկրամբ:

Սպարտացոց կողմը . իսկ Աթէնք , որ տիրապետել էր կղզիներու շատին , միայն իւր զինուորական ուժին էր մնացել ապաստան : Պերսպոնէսցիք քարուքանդ արին Ատտիկէն . Աթէնք իսպառ միայնացաւ լոկ իւր քաղաքի մէջ , և անդադար իւր նաւահանդիսով տակնուվրայ էր անում Պերսպոնէսի ծովեղերքը : Ընկաւ մէկ զարհուրելի ժանտախտ , որ սլատերազմի երկրորդ և երրորդ տարին մեծ կատաղութիւն էր անում Աթէնք քաղաքումը , որ լքցվել էր ժողովուրդով : Պերսիկլ ինքն-էլ դառաւ զոհ այն մահատարածամին : Հաշտութեան համար ոչ ոք չէր մտածում , և առաջին վեց տարին շատ երևելի ճակատամարտներ խմբվեցան : Եօթներորդ տարին Աթէնացիք գաղափար շինեցին՝ թէ ինչպէս պիտի նուաճեն Սիկիլիա կղզին , ուր որ կար Պերսպոնէսցոց գաղթականներու բազմութիւն : Այս միջոցումս Աթէնացոց նաւատորմիղի մէկ մասը խարխուս գձեց Պերսպոնէսի մօտ՝ Պելոս նաւահանդիսաւումը , և այն կողմումը ուր որ կայ այժմ Նուսիէն քաղաքը (\*) տուին

(\*) Նուսիէն է այժմեան անունը հինՊելոս քաղաքին , որ



Սպարտացոց մէկ յաղթակիր ճակատամարտ :  
Այս կերպով սպարտացիք շարունակվում  
էր զանազան տեղերում փոփոխ յաջողու-  
թեամբ . վերջապէս Նիկոս Աթենացոյ ձեռ-  
քով հաշտութիւն դրուեցաւ , որ մանաւանդ  
մարտադուլ եղաւ երկուց կողմանց ոգի  
առնելոյ համար . իսկ ճշմարիտ խաղաղու-  
թեան ոչ ոք-էլ չէր ցանկանում : Աթենացոց  
տարարախտութեամբ՝ դուրս եկաւ մէկ մար-  
տադաւուրց և ձոխ իշխան՝ Ալեքէոս , որ  
հանդիսացաւ փառասիրութեամբ , սնամա-  
ռութեամբ , շոյլութեամբ և թեթևա-  
մտութեամբ , և մէկ քանի հնարներով  
ձեռք գծեց ժողովրդէն մէկ այնպիսի սէր ,  
որ սկսաւ խորաւ իւր կառավարութեան  
տակ դնել Հասարակապետութիւնը :

Սա աւելի սպառճառ դառաւ , որ հաշ-  
տութիւնը շուտ խղուեցաւ , և Աթենացիք  
միայն այս թեթևամիտ երիտասարդի ձեռամ-  
բածութեամբ , անկաջ չը դնելով խելօք  
մարդոց՝ գրգռվեցան արշաւան անել Սիկի-  
լիայի դէմ , որ ունեցաւ բոլոր տէրութեան

Համար ամենաթշուառ վերջաւորութիւն :  
Շատ մեծ ծախսերով զինուեցան նաւատոր-  
միդը և զօրքը , և ինքը Ալկիրիադը կար-  
գուեցաւ առաջնորդ : Արդէն զօրքը Հասել  
էին Սիկիլիայի մօտ , որ մէկ անակնկալ  
դիպուած ստիպեց Ալկիրիադին՝ այս ամեն  
ձեռներկցութեանց շարժառիթին՝ յետ դառ-  
նալ դէպ ի Աթէնք : Գեռ ևս նաւատորմիդը  
Աթէնքէն դուրս եկած չէր , որ մէկ առա-  
ւօտ տեսնուեցաւ , որ Աթէնքի պողոտա-  
ներումը ( *հոստանիքումը* ) , շատ կուռքերու  
արձաններ խորտակուած , ընկած են . և Ալ-  
կիրիադի հակառակորդները չուշացան այս  
անկարգութեան մէջ ամբաստանել Ալկի-  
րիադին , որ այնպէս խեղութեանց մէջ ար-  
դէն հանդիսացած էր : Այլ որովհետև ա-  
պացոյց չըկար , նրան թոյլ տուին՝ որ նա  
նաւերով Աթէնքէն դուրս երթայ դէպ ի  
մարտի նպատակը : Այլ հազիւ թէ նա կա-  
րողացաւ հեռանալ , մէկ-էլ տեսնես՝ որ  
յայտնվեցան նորա հակառակ վկաները , և  
հաստատում էին որ՝ նա է այս եղեռնադոր-  
ծութեան մէջ յանցաւորը : Ահա այս սխա-  
ռաւ նրան յետ հրաւիրեցին : Այլ նա



փոխանակ Աթէնք երթալու, ուր որ վա-  
խենում էր՝ թէ թշնամիք նրան կորուստ  
կըմատնեն, Ալկիբիադ փախաւ դէպ ի Ար-  
գոս և ապա՝ դէպ ի Սպարտա: Այս միջոց  
Աթէնացոց զօրքը իրաւ հասան Սիկիլիա,  
և Սիքախոսաքաղաքը պաշարեցին, որ այն  
ժամանակը Յունաց քաղաքներու մէջ մեծն  
էր և քան զամենը հզօր: Երեք տարի  
տևեց պատերազմը. համախմբուեցան ա-  
մեն ուժերը, և արիւնայեղց պատերազմեր  
տրուեցան թէ՛ ցամաքով և թէ՛ ծովով. այլ  
ձեռներիցութեան վերջը այն եղաւ, որ  
Աթէնացոց նաւատորմիղն-էլ, զօրքն-էլ,  
խալառ սարուռ ջնջուեցան Սիրակուզացոց  
և նոցա դաշնակիցներու ձեռքով: Սաստիկ  
վտանգաւոր էր, համարեա՛ թէ ուժէն ըն-  
կած Աթէնքի վիճակը, մանաւանդ այն  
մասին, որ ի՛սկ քաղաքի միջումը սկսել  
էին անկարգութիւններ: Աթէնացոց մէկ  
զօրաբաժինը, որ Սամոս կղզումն էր, դըժ-  
կամակ լինելով Աթէնքի մէջ պատասճած  
անցքերու համար՝ նոր ի նորոց ընդունե-  
ցին Ալկիբիադին, որ Սպարտայէն արդէն  
փախել էր դէպ ի Փոքր-Ասիա՝ Պարսից

մօտ : Ալկիրիադ միւսանդամ նաւատորմի առաջնորդ դառաւ, և յաղթեց Սպարտացոց հետևեալ տարիները՝ մէկ քանի ցամաքային և ծովային սկտերազմներու մէջ, Ասիական ծովափների կշտին, Հելլէսպոնտոսումը : Այլ այս յաղթութիւնները չը կարողացան փրկել Աթէնք քաղաքը, որ օր ըստ օրէ աւելի տկարանում էր :

Սպարտացիք միւսանդամ յաղթող հանդիսացան Պարսից օգնութեամբ : Ալկիրիադն-էլ միւսանդամ զրկուեցաւ իւր սաշտանէն, և փախաւ դէս ի Փոքր Ասիա, ուր մէկ քանի տարիէն յետոյ կտրաւ իւր սեփական տան մէջը, որ նորա Աթենացի թշնամիների գրգռելով՝ հրձիգ արին ու այրեցին :

ԱՐԷՆՔԻ ԿՈՐԾՍՆՎԻԼԸ

Դեռ ևս ո՛չ մէկ կողմէն, ո՛չ Աթէնացիք և ո՛չ Սպարտացիք, դէս ի հաշտութիւն չէին հակամիտում ու յօժարում : Վերջա-



պէս Էջուպոստոսն (\*) քաղաքի կշտին խրմբուած ճակատամարտը բացուեցաւ (406)։ Սպարտացոց զօրապետն էր Լիպանոսը. իսկ Աթէնացոց զօրաւարը էր Կոնոն։ Սպարտացիք յաղթեցին։ Այն ժամանակը Աթէնքի առջևը երևեցաւ Սպարտացոց նաւանդէսը, փակեց Պերէի նաւահանդիստը, և այս հընարքով դձեց ահապատառ քաղաքի մէջ՝ սաստիկ սով-էլ։ Աթէնացիք աննորողելի կորուստի մատնուեցան։ Բռնադատուեցան անձնատուր լինել Սպարտացոց (404). տալ նրանց ձեռքը իրանց նաւատորմիդը, քանդել իրանց քաղաքի սրահասաները, և մէկ քանի ժամանակ՝ Սպարտացոց կամքով կառավարուիլ։ Սպարտացիք երեսուն մատղ ընտրեցին Աթէնք քաղաքի տէրութիւնը կառավարելու համար. այս մարդիքը հասարակօրէն տալում են Էրիստան Բանաստղի։

Այսուհետև Աթէնք-էլ ո՛չ երբէք կարողացան հասնիլ իւրեանց նախկին կարողութեան, թէպէտ և բարետոհմիկ Թրասիբուլոս քաջութեան շնորհօք երեսուն բռնաւորաց

---

(\*) Հելլէսպոնտոսի նեղուցի մէջ։

անկողար տառապեցուցիչ իշխանութիւնը  
վերջացաւ, և հին կառավարութիւնը նորո-  
գուեցաւ :

ՍՈՎՐԱՏ:

Սոկրատ էր Պելոպոնէսի սրատերազմի  
ժամանակը Աթէնք քաղաքի մէջ բնակուած  
երևելի անձանց մէկը: Սա մէկ խմաստուն  
մարդ էր, որ իւր բովանդակ կեանքի մէջ  
ջանք էր անում առաքինութեան վարդա-  
պետութիւնը տարածել և ընդդէմ կանդ-  
նիլ մոլորութիւններուն և անբարոյականու-  
թիւններուն: Սա իւր կենցաղավարութիւ-  
նով դառնում էր անսպաճոյճ ապրուստի և  
խաղաղասիրութեան գեղեցիկ օրինակ, և  
անխոնջ ձգտում էր դէպ ի այն կողմը, ուր  
որ կարող էր շահաւէտ գտնվիլ իւր հայրե-  
նիքին: Սոկրատ զինուորական սրաշտօնէն-  
էլ չէր խուսափում. այլ նորա ծայրադոյն  
ճիգն այն էր, որ դեռաւուրց պատանիներ-  
ուն սնէ իւր բարեկամ, և իւր ուսմամբ  
և օրինակով շինէ նրանց աղնիւ մարդիկ,



և մանաւանդ սերմանէ նոցա մէջ Աստուծոյ  
համար աւելի արժանաւոր միտքեր ու հաս-  
կացողութիւններ: Այս պատճառաւ նորա  
աշակերտները էին անպատմելի սիրով ջեր-  
մեռանդ դէպ առ նա, և նորա վարդապե-  
տութիւնը տարածում էին թէ խօսքով և  
թէ գրով: Անհնար էր որ չըստատահէր այս  
դիպուածը, որ նա (որովհետև այնպէս հա-  
մարձակ և սրտի մտօք ոգորում էր այն  
ժամանակին տիրապետող շոտլանդութիւննե-  
րու և անժուժկալութիւններու հակամիտու-  
թեանց դէմ, շատ սնտոյի իմաստութեամբ  
սնապարծներու առջև յայտնապէս մերկա-  
ւորանոց էր կացուցանում նոցա չնչին  
հայթայթանքը, նա որ ոչ երբէք չէր կեղ-  
ծաւորութիւն անում ժողովրդեան առջև,  
որոց ձեռումն էր այն ժամանակի բովան-  
դակ իշխանութիւնը) չըստեղծէր իրա հա-  
մար թշնամիներ: Չանք էին անում նրան  
ցոյց տալ ծաղրելի ձևերով և կերպարանք-  
ներով և նա անսխալ էր լինում. նրան հա-  
լածում էին՝ նա համբերութեամբ դիմա-  
նում էր. վերջապէս թշուառականի մէկը  
յայտնապէս էլ չարախօսութիւն արաւ և

ամբաստանեց, թէ նա չունի ճշմարիտ հա-  
ւատ, ուզում է նոր աստուածութիւններու  
պաշտօնը ներս բերել, և իւր վարդապե-  
տութեամբ դայթակղեցնում է մանկանց և  
պատանեակներուն: Գուրս եկան Ս<sup>ո</sup> փ<sup>ո</sup> փ<sup>ո</sup> \*  
(իմաստակ) ատենարանները, որ ժողո-  
վուրդին ուղքի հանեցին նորա դէմ, —  
հաղիւ թէ մարդ կարող է հաւատալ —  
և եօթանասուն տարեկան զառամը, որ իւր  
բոլոր կեանքը նուիրել էր ճշմարտութիւնը  
տարածելուն, մահու դատակնիք ստացաւ  
ինչպէս մէկ սովորական յանցաւոր: Սովորա-  
շատ աւելի լաւ էր իմանում ժողովուրդի թե-  
թեամտութիւնը, և յռաջուանէ գուշակում  
էր իւր դատապարտուիւնը: Նա իրան անվայե-  
լուչ էր համարում ջատագովութիւն խօսիլ  
իւր համար և արդարանալ այսպիսի դատա-  
ւորներու առջև. այլ չէր կարող բարետոհ-  
միկ վեհանձնութեամբ չը յայտնել, որ ինքը  
իւր բովանդակ կեանքի մէջ ջանք է դրել  
կատարելագործել իւր քաղաքակիցներուն,

(\*) Սոփեսոք Յունաց իմաստասէրք, որոց հրահանգը այն  
էր, որ կարողանում էին աջողակ և ճարտար վիճարանել  
թէ մէկին պաշտպանելու և թէ դատապարտելու մտքով:



և նրանով արդէն արժանաւորութիւն է վաստակել, որ սնունդ և սլարէն ստանայ հասարակաց դանձանակէն:

Նորա դատակնիքը չըմեղմուեցաւ. 30 օր էլի (դատակնիքը լսելէն յետ) մնաց բանտի մէջ և ուսուցանում էր իւր բարեկամներուն: Բարեկամները նրա համար հնարներ էլ գտան, որ փախչի. այլ Սոկրատ չընդունեց այն, որովհետև անիրաւ դատակնիքէն անիրաւ հնարներով խոյս տալն էլ անարժան էր համարում իւր անձին համար: Հոգւոյ մէջ սլարունակելով ամենամեծ անգորրութիւն, և ուրախ սրտով համողուած լինելով թէ նորա անմահ հոգին շուտով դուրս եկած կըլինի կենցաղական ամեն ախտակրութիւններէն, արժանապատիւ ծերունին խմեց թոյնը, որ շուտով դրեց նորա կեանքին վերջ (399 ամօք Քրիստոսի ծնունդից առաջ):

Սպարտացիք (382 տարի Քրիստոսի ծընունդէն առաջ) զօրք ուղարկեցին դէպ ի Մակեդոնիա: Բիովտիայի ճանապարհով երթալու ժամանակը, երբ որ այս զօրքը պիտի թէ՛սս քաղաքի մօտէն անց կենային, այս քաղաքի մեծամեծներէն մէկ քանիսը, որոնք որ դժկամակութիւն ունէին, առաջարկեցին Սպարտացոց զօրադլխին՝ Փիրիդասին, այն քաղաքի ամուր տեղերուն տիրապետելու խորհուրդը, որ իրանք և իրանց համախոհ կուսակիցները կարողանան Սպարտացոց պաշտպանութեամբ արձակ համարձակ ժողովրդեան տնտեսութիւնը վարել: Այս առաջարկութիւնը ընդունիցաւ, և Սպարտացիք իրաւ տիրապետեցին քաղաքի ամուր միջնաբերդի դղեակին: Այս կերպով ժողովուրդը գրեթէ չորս տարի մնաց ճնշողական տիրապետութեան տակ, որ վերջապէս իւր վրայէն դէն գձեց զօրով և սպանութիւններով՝ այս առիթներու աղաղակ:



Թերայեցոց յոգնաթիւ բազմութիւնը , որ բռնացած կուսակիցներու իշխանութեամբ տարագրուել էին՝ խորհուրդ արին , որ իրանց հայրենիքը աղատեն . նոցա մէջ կար Պելոպոնէզ-էլ , որ յետոյ դառաւ զօրագլուխ : Քիւղական հազուստներու տարազով ծարած՝ առաջ քիչ քիչ եկան քաղաք , յետոյ յաջողեց նրանց միջնաբերդ-էլ մտնել , և այնտեղ նոցա կտրաւ իչ կանանց նման հանդերձ հաղած և իւրաքանչուրը մէկ մէկ դաշոյնով վառլած լինելով , խնջոյքի ժամանակը վաղեցին Սպարտացոց զօրապետներու և մեծամեծներու վրայ : Սպարտացիք դուրով անդէն և գինով յախրացած՝ շուտ յաղթուեցան և խողխողուեցան : Այնուհետև սոքա աճապարեցին դէպ ի քաղաք և խրախուսեցին ժողովուրդին , որ այս հանգամանքէն օգուտ քաղեն և իսպառ սպուռ տարագրեն վտարեն իրանցսրխապներու մէջէն այս շրտուցած ախրապետողներուն : Այսպէս-էլ պատահեցաւ , և Թերաս աղատվեցաւ Սպարտացոց բռնակալութենէն : Ի հարկէ , այս դառաւ նշան պատերազմի , որ պիտի բացուէր Սպարտացոց և Թերայեցոց

մէջ: Թերայեցւոց առաջնորդ էին Պելոպիտ  
և Եպաֆինոնդ, երկուսն-էլ էին ոգևորուած  
միօրինակ սիրով դէպ ի հայրենիքը. այլ  
Եպամինոնդ որ ապրում էր աղքատութեան  
մէջ՝ փառաւոր հանդիսացաւ հոգւոյ բարե-  
տոհմութեամբ, համեստութեամբ և գե-  
րազանց արդարակորովութեամբ քան զիւր  
զինակիցը. նա չէր թնակոխում աստիճան-  
ներ և շուքեր ստանալու, թէև իւր գի-  
տութիւններով ունէր լիակատար իրաւունք:

Ե՛ւլ երբ որ սկսաւ վերահաս վտանգը  
սպառնալ նորա քաղաքակիցներուն կորուստ,  
նա չուշացաւ իւր կեանքն-էլ զո՛հ բերել  
հայրենեաց համար: Սպարտացիք մեծ զօր-  
քով միջամուխ սպրդեցան Բիւլտիայի սիր-  
տը: Իսկ Թերայեցիք կարողացան նոցա դէմ  
դնել միայն սակաւաձեռն զօրք, որոց գըլ-  
խումը՝ սակայն՝ կանգնած էին Պելոպիտ և  
Եպամինոնդ: Խելօք զգուշութեամբ Թերա-  
յեցիք իրանց օգտի համար պէտք բերին  
Սպարտացոց զօրավարի սխալմունքը, և  
ստացան հռչակաւոր յաղթանակ: Այս պա-  
տահեցաւ Ղեկտրա գեղի մօտ (Քրիստոսի  
ծնունդէն 371 տարի առաջ): Գեռ ևս սպա-



տաճած չէր, որ Սպարտացիք յաղթուած լինէին քան զնոսա տկար և նուազ թշնամիէն. դեռ ևս ոչ մէկ անգամ այսպէս խայտառակուած փախած չէին: Աիկուրգոսի սաստիկ օրէնքը, որ անուանարեկ էր հրատարակուամ պատերազմէն փախչողներուն, և թողնում էր նրանց զուրկ օրէնքի պաշտպանութենէն, հնար չըգտնուեցաւ, որ կատարուի, որովհետև պատժոց արժանիներու թիւը շատ շատ էր, և վտանգը աւելի զարհուրելի: Սրամէն յետ՝ Եսլամինոնդ հզօր զօրութեամբ պատուեց մտաւ Պելոպոնէս, քարուքանդ արաւ Սպարտացոց տէրութիւնը, որ ասլում էր Լակոնիա և միտք էր անում արշաւել Սպարտայի վրայ-էլ: Ամբարտաւան Սպարտացիք դեռ ոչ մէկ անգամ չէին այսպէս ամօթալից ընկճուած: Եօթը տարի տևեց պատերազմը Պելոպոնէսումը, մինչև Աթենացիք-էլ եկան Սպարտացոց օգնութիւն: Հուսկ ուրեմն վերջացաւ. Մանթինէա քաղաքի մօտ խմբուած ճակատամարտով, որ Արկադիա գաւառումն պատահեցաւ (362 տարով Քրիստոսի ծընունդից առաջ): Թերայեցիք յաղթեցին.

այլ նոցա մեծ Եսրամինոնդը անվրդով հոգ-  
ւով հանել տուեց խոցէն այն նետը , որն  
որ թափանցիկ ցցուել էր նորա կուրծքին,  
և մեռաւ ուրախութեամբ, երբ որ լսեց թէ՛  
իւր զօրքը մնացել են յաղթող :

---

ՄԵԾՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ (ՄՍԳԵՒՈՆՍՅԻՆ) .

29

Յունաստանէն դիպ ի հիւսիս, Թրակիայի  
և Թեսսալիայի տէրութիւններու մէջ , ընկած  
կար Մակեդոնիայն երկիրը, որոյ բնակիչքը  
ըստ մեծի մասին ունէին ծաղումն Յունաց  
ազգէն, և ըստ մասին՝ օտար ազգերից :  
Այս ժամանակներումը այս երկրի մէջ թա-  
գաւոր էր Փիլիպոսոս, մէկ քաջ ու խելօք,  
այլև փառասէր և խորամանկ մարդ, որ  
քիչ քիչ նուաճեց իւր հարեան աղգերուն,  
և մեծացուց իւր տէրութիւնը, և աչքը  
տնկեց Յունաստանի վրան-էլ , և այնպէս  
հարներով օգուտ քաղեց Յունաց ան-  
ընդհատ վիճարանութիւններէն, որ վեր-  
ջնպէս բովանդակ այն երկիրը հարատակե-



ցուց իւր իշխանութեան. նա ամեն տեղ  
գործ էր անում բանսարկութիւն և խորա-  
մանկութիւն: Ի զուր էր Քեֆուսէնէն ասե-  
նաբանը մերկապարանոց կացուցանում Ա-  
թէնքի մէջ Փիլիպպոսի որոգայթները և  
վտանգաւոր խորհուրդները. խորագէտ թա-  
գաւորը այնպէս ճարտարութեամբ էր խաբ-  
խորում Յունացազգին, տկարացնում նրանց՝  
իրանց տարածայնութիւններով և ընկճում  
կաշառաբեկ դաւաճաններու ձեռքով, որ նը-  
րանք ոչինչ կերպով չէին կարողանում իրանց  
գլուխը պահպանել նորա խորամանկ աշխար-  
հակալութեան թակարդներէն: Եստ ուշ  
փորձ փորձեցին նրա յանդգնութիւնը սանձար-  
կել: Այնժամանակ Փիլիպպոս շարժեց, ոտքի  
վրայ կանգնեցուց իւր բոլոր զօրութիւնը, և  
Քերոնէա քաղաքի մօտ Քիովտիա գաւառումը  
(Քրիստոսէն 338 տարի առաջ) ստացած  
յաղթութիւնը արաւ նրան հրամանահան  
Յունաստանի: Այս, աշխարհակալութեան  
մէջ անյարգ, թագաւորը արդէն շինել էր  
նոր նոր գաղափարներ. նա ուզում էր նուա-  
ճել Պարսկաստանն-էլ. բայց այս իսկ միջո-  
ցումը մահը անակնկալ հասաւ նրան: Փի-

լիազարտ խողխողուեցաւ իւր դատեր հարսանեաց տօնախմբութեան օրերումը:

Քան զնա աւելի համբաւատենչ էր նորա որդին Ալեքսանդր, բայց նորա չափ ոչ նենգամիտ էր և ոչ խորամանկ, և իւր աշխարհակալութեան համար ասուեցաւ Մէթ. հանդիսացաւ անվեհերութեամբ և քաջութեամբ, որ երբեմն չափէն դուրս գալով՝ դառնում էր անմիտ յանդգնութիւն: Մեծ ծարաւութեամբ տոչորուած՝ փութացաւ ճեպեց իւր հօր գաղափարները կատար հասցնել. ո՛չ թէ միայն Պարսկաստանն էր ուղում նուաճել, այլ եթէ կարելի է, բովանդակ աշխարհքը գրաւել: Գեռ 22 տարեկան էր, որ սկսեց իւր արշաւանները: Յունաց և Մակեդոնացոց մէջէն հատընտիր ժողոված 35,000 զօրքով (Քրիստոսէն 335 տարի առաջ) անց կացաւ նաւերով Հելլէսպոնտոսի նեղուցը: Նորա հետ կային լաւ լաւ զօրավարներ, բայց բոլորովին ինքն էր մէնակ կառավարում. զօրապետները միայն այն էին կատարում, ինչ որ նա էր նրանց հրամայում:

Բարէ՛հ (որ ասվում էր Կոպոման) Պար-



սից թագաւորը Ալէքսանդրի դէմ դուրս  
դրեց շատ զօրք, սակայն այս զօրքը կանո-  
նաւոր պատերազմներու մէջ վարժուած չէին,  
այլ հաւաքուած էին (ինչպէս որ մինչև այս  
օր-էլ են ասիական զօրքերը), ըստ մեծի  
մասին տէրութեան զանազան ազգերից աւել-  
լով ժողոված զինուորները, համարեալ թէ  
ամենքը ձիաւոր, որ ոչ պատերազմի ար-  
հեստը գիտէին, ոչ կարգը և ոչ սովո-  
րել էին հնազանդութիւն, կամ զօրապետ-  
ներու հրամանի կատարելու ձեր: Այս էր  
պատճառը, որ Պարսից զօրքը չէին կարողա-  
նում դէմ տալ Յունաց զօրքին, ինչպէս որ  
Ասիայի և Ափրիկէի թափառական վրանա-  
բնակ ազգերը չեն կարող հաւասարուիլ  
եւրոպացոց զօրաց: Ալէքսանդր դեռ Գրու-  
նի (\* ) դեռտի ամերումը դիպուկ միջոց  
ձեռք բերեց իւր զօրաց քաջութիւնը փոր-  
ձել: Երբ որ Պարսից բաղմաձեռն զօրքը  
նորա ճանփու վրայ կանգնեցաւ, որ նրա  
Գրանիկ գետէն անց կենալը խափանէ, Ալէք-

(\*) Գրանիկ փոքրիկ ծովեզերեայ գետակ է, որոյ բերանը  
է այժմեան Իզնիկի մօտ, որ առաջ Նիկիա էր ասվում,  
Փոքր Ասիայի (Մնատուրի) գաւառումը:

սանդր անաջ ինքը անց կացաւ այն դետէն,  
և այնպիսի քաջութեամբ յարձակեցաւ  
Պարսից վրայ, որ նոքա ստիպուեցան դաշ-  
տէն քաշուիլ հեռանալ: Այս կերպով իւր  
անձը մահու վտանգի մէջ դնելով՝ ստացաւ  
Ալէքսանդր անաջին յաղթութիւնը (334  
թուին), որով ևս առաւել աւելացաւ դէպ  
առ նա իւր զօրաց, առաջուան սլատերաղմ-  
ներու վրայ հիմնած, վստահութիւնը, և  
աւելացուց զինուորներու քաջութիւնը:  
Այնուհետև բոլոր Փոքր Ասիայի թերա-  
կղզին բացուեցաւ նորա առջևը. ո՛չ մէկ  
տեղ չէր տեսնում իւր դէմ կանդնած թըշ-  
նամի. միայն մէկ քանի Յունաց քաղաքներ  
համարձակուեցան, թէ՛ և իղուր, նրան  
ընդդէմ կենալ: Խորին Խասեան ծովածոցի  
մօտ, որն որ Միջերկրեաց ծովը ձևացնում  
է իւր ամերումը, Կիլիկիայի և Ասորոց  
միջոցումը, կար Խասա (Այսա) քաղաքը:  
Սորա մօտ կանդնած էր Պարսից գլխաւոր  
զօրքը, սլատերաղմական մեծ զօրութիւնը,  
որոնց հետ միասին Գարեհ մինչև այս տեղ  
էլ էր սպասում թէ կուգայ թշնամին: Այս  
անգամին-էլ յաղթեց Ալէքսանդր, աւար



առաւ Պարսից ճոխ բանակետղը, և դերի  
բռնեց Քարեհի կնկան, մօրը և դուստրե-  
րուն: Այս տեղ յազթողը ցոյց տուեց  
արդարեւ ճշմարիտ վեհանձնութիւն: Այս  
դժբաղդներու հետ, որոնք որ այն ժամա-  
նակի բարբարոսական սովորութեամբ կա-  
րող էին սպասել սաստիկ թշուառ վիճակի,  
վարուեցաւ ծայրագոյն հեղութեամբ, և  
սրամալ արժանի եղաւ ստանալ թշնամիներ-  
ու էլ յարգն ու դահութիւնը:

Այն միջոցներումը, մինչ որ Քարեհ վախ-  
չում էր Ասիայի խորագոյն տեղերը, Ալէք-  
սանդր անց-կացաւ Ասորոյ մեջէն և իրան  
հարստակեցուց Փիւնիկեցոց ծովեզերեաց  
քաղաքները և Հրէաստանի աշխարհը: Մի-  
միայն մեծաղօր Տիւրոսը, որ Բաբելացոց  
Նարուգոդոնոսոր թագաւորի ձեռքով կոր-  
ծանուելից յետ նոր ի նորոյ շինուել էր  
ծովափնեաց կղզու վրայ, ասաւինելով իւր  
անխտանդ դրութեան, գլուխը շտոնարհե-  
ցուց այս յազթակիր աշխարհակալի առջև:  
Եւ արդարեւ, այս քաղաքի ստաշարումը Մա-  
կեդոնացոց համար դառաւ սրտաճառ մեծ  
ճգնութեան և կոթնամսեաց արդելման:

Տիւրացիք (\*) պատուարութիւն ունէին ծովէն, իրանց քաղաքի հաստ հաստ պատերէն և բազմաթիւ պատերազմական նաւահանդիսէն: Ալէքսանդր՝ որ քանի աւելի դժուարութիւն և ընդդիմութիւն էր տեսնում առջևը, այնքան աւելի կամակորութիւն և աներկևանութիւն էր ստանում, չըվախեցաւ Տիւրացւոց յաջող դրութենէն, և Տիւրոս քաղաքը որ իւր անբարտաւան մեծամտութեան վայրկենումը յանդգնել էր Ալէքսանդրի ուղարկած դեսպաններուն ծովը գձել, հարկադրուցաւ կործանուիլ: Ալէքսանդր առաջ նաւ չունէր. այս պատճառաւ անհաւատալի դժուարութիւններով հրամայեց ծովի մէջ հողակոյտով թումբ շինել, որ իւր պատերազմի համար ծարաւած զօրքը ցամաք ճանփով երթայ կրղզիաշէն քաղաքը: Այս հնարքի դէմ պաշարուածները վատնեցին իրանց ամեն հնարները, ինչ որ ունէին, որ այն շինութիւնը

(\*) Տիւրացիք՝ այժմեան Տիւրքիոցոց նախնիքը, որ երբ իրանց ծովափներումը նեղութիւն էին դանում, փախչում մտնում էին Արանան, և այսպէս այն Արանանի (Տիւրգիւ տաղի) այժմեան բնակչաց սերմն էին դառնում:



քանդեն. նրանք կոտորում էին մշակներուն, կրակ էին տալիս, այրում էին պատերազմական մեքենաները և աշտարակները, որն որ շինում էին Մակեդոնացիք այն թումբի վրայ իրանց գործաւորներուն սաշտպանելու համար. ջրասուղակները մտնում էին ծովի տակ և այն հաստ հաստ չուանները, որով որ մէկ զմէկու հետ կապկապած էին լինում նաւակները և լաստերը՝ կտրտում էին. բայց ոչ ինչ չըկարողացաւ Ալէքսանդրին ստիպել, որ նա իւր դիտաւորութենէն յետ կանգնի: Վերջ ամենայնի հրամայեց որ բերեն նուաճուած Յունաց կղզիներու բազմաթիւ նաւատորմիղը, նրամով կաղեց քաղաքը ծովի կողմէն, չընայելով ոչինչ դժուարութեան, շինեց, գլուխ բերեց թումբը, և հասցրուց իւր զօրքը քաղաքի սարիսալի տակը, որն որ երեքօրեայ յամառ ընդդիմութենէն յետ առնուեցաւ (332):

Յաղթականները երկարատե հակառակութենէն զայրադնած գրգռուած՝ սկըզբումը ոչինչ չըխնայեցին: Հաղարաւորք կոտորուեցան, և քան զկոտորուածները աւելի չարարաստիկ բնակիչներէն ընկան գերու-

Թեան մէջ, և քաղաքը բոլորովին քանդուեցաւ: Այնուհետև Փիւնիկեցոց առուտուրը, որ մինչև այն ժամանակ շատ մեծ էր՝ իսպառ վերջացաւ: Գլու ևս Ալէքսանդրը մտքին բերած չէր Ասիայի ներքսակողմը միջամուխ լինել և սպասում էր որ առաջ առնու Եդիպոսը: Բոլոր երկիրը հպատակեցաւ նրան տաանց սրատերաղմի, և հեղահագի յաղթողը թողեց Եդիպոսացոց բոլոր կարգադրութիւնները և ձէսերը անփոփոխ. այս յայտմանէ նա նրանց մեծ շնորհ ցոյց տուեց մէկ երեւելի ձեռնարկութեամբ, որովհետև Միջերկրեայ ծովի եղերքումը Նեղոսէն դէպի արեւմուտք, հիմնեց մէկ քաղաք, որ մինչև այսօր-էլ նորա անունն է կրում — Ալէքսանդրիա (331): Ետ շուտ այս քաղաքի մէջ փոխադրուեցաւ ծաղկեալ առուտուրը, որն որ առաջ Փիւնիկեցիք էին անում: Հնդստանի թանկագին ապրանքները Արարիոյ նեղուցէն բերվում էին Եդիպոսա, և նորաչէն վաճառատեղիի նաւահանդիսատէն տարվում էին դէպի Եւրոպա: Այս կերպով Ալէքսանդրիա կարճ միջոցի մէջ դառաւ աշխարհի



Մեծ և ճոխ քաղաքներու մէկը: Միայն  
Քրիստոսի ճնունդէն յետ եօթներորդ դա-  
րումը Ալէքսանդրիա քանդուեցաւ Օսմը  
Խալիֆայի ձեռքով. և թէպէտ նորա մէջ  
մնաց նախկին շքեղութեան և մեծութեան  
մի միայն ստուերը, սակայն նա այժմ էլ  
Նդիպտոսի մէջ երևելի ծովափնեաց քաղաք  
է, և բոլոր Միջերկրեաց ծովի մէջ գլխաւոր  
առևտրական կէտերու մէկն է:

---

ՍԼԷԲՍՏՆԴՐԻ ՂԵՐՋԻՆ ՉԵՌՆՈՐԿՆԵՐԸ.

30

Յետ այնորիկ Ալէքսանդր սկսաւ երթալ  
Թշնամու քամակից, որ փախել էր Ասիայի  
ներքսակողմը: Նա ճանփայ արաւ Ասորոց  
անապատի մէջէն, անց-կացաւ Նփրատ և  
Տիգրիս գետերու վրայ, և կանգ առաւ  
հին Ասորէսասանի մէջ (որ այժմ ասվում  
է Քուրդստան): Այս տեղ Քարեհ մէկ էլ  
դուրս եկաւ նորա դէմ բազմամբոխ  
զօրքով:

Գառնագետնի (\*) մօտ սկսաւ վերջին նշանաւոր պատերազմը . և այս նուագին-էլ Պարսիկք կըրեցին կատարեալ ջարդ (331): Գարեհ փախաւ դէպ ի Մարաց (Մեդաց) աշխարհ. այլ յետ այնորիկ շուտով ընկաւ գերի իւր Բեսս անունով զօրապետի ձեռքը: Բէսս նրան կարեւէր խոց տուեց և թողեց ճանախու վրայ այն ժամանակ, երբ որ Ալէքսանդրը, որ արդէն նուաճել էր Բաբելոնը և Պարսկաստանը, Բեսսի յետևէն էր ընկել: Ալէքսանդր ճեպում էր ապարազդ թագաւորին օգնելու համար. այլ հասաւ կարի ուշ: Գարեհ այն ինչ արձակել էր հողին, երբ որ Ալէքսանդր պատահեցաւ նրան (330):

Այնուհետև Մակեդոնացի յաղթողը երեսը դարձուց դէպ ի հիւսիսային և արևելեան նահանգները, որոց մէջ սարերը և անապատները թէպէտ և նորա արշաւանքը դժուարացնում էին, բայց չէին նորա յառաջադիմութիւնը խափանում: Բաղարիան (\*\*)

(\*) Արբէլ, այժմեան Էրբիլ:

(\*\*) Այժմեան Բուխարիա:

(\*\*\*) Այժմեան Գարուխտան:



Արասողեան և Արեւել (\*\*) և միւս գաւառները, որոց հազիւ թէ ծանօթ էին Եւրոպացոց միայն անունները, մինչև Եասասը (1), և մինչև Չինի (Հիւսիս) գետը երեք հետևեալ տարիներումը նուաճեց իւր ձեռնտակ. բայց նա այս տեղէլ կանգ չառաւ. այլ անց կացաւ Հինդոս գետի միւս երեսը, և ուղում էր իւր իշխանութիւնը տարածել դոնէ մինչև Գանգէս (2) գետը:

Ալէքսանդր ուղում էր տիրել բոլոր աշխարհին. այլ այս նորա ձեռներիցութիւնը քարոքանդ արին իւր սեփական զօրքը: Երբ որ մակեդոնացիք հասան Հիւսիս (3) էլ չըկամեցան քան զայն աւելի հեռու երթալ նորա յետևէն (327): Այս պատճառաւ Ալէքսանդրն-էլ Հինդոս գետի եղերքով եկաւ մինչ ի Հընդկաց ծովը, և ուղարկեց նաւատորմիղը ծովափներով մինչև Պարսկային ծոց. իսկ ինքը, զօրքը հետը առած, վերադարձաւ Պարսկաստան՝ Հիւսիսայն (4) ամայի բարձրաւանդակի մեծադոյն մասի

(1) Ալեքսանդր Մեծ կամ Սիոն: (2) Հնդստանի գետ է:  
(3) Ալեքսանդր Մեծի շրջան: (4) Ալեքսանդր Մեծի շրջան:

Տէջէն ճանփայ անելով, և քաշեց անպատ-  
մելի դրժուարութիւններ, որովհետև ջեր-  
մութիւնը, քաղցածութիւնը և ծարաւու-  
թիւնը նորա զօրքի մեծ մասը կուտորեցին:  
Այն ժամանակը նա սկսաւ հոգս անել, որ  
իւր տէրութեան մէջ կարգ դնէ և լաւ բա-  
րեկարգութիւններ տարրայնէ: Հասարակաց  
օգտաւէտ կարգադրութիւններով ուղում  
էր ապացոյց տալ Պարսից, որ նա չէ կա-  
մենում նեղութիւն տալ նրանց՝ ինչպէս  
յաղթուածներու, այլ իւր համադրի հարա-  
տակ Յունաց հաւասար ուղում է բաղդաւո-  
րել իմաստուն տեսչութեամբ: Ի հարկէ,  
այս արարմունքով Ալէքսանդր դրդուեց ան-  
բարտաւան Մակեդոնացոյ նախանձը, որ  
չէին կարողանում ընտելանալ այն հանգա-  
մանքին, որ Ալէքսանդր քաշում էր դէպ ի  
իւր դուռը Պարսից մեծամեծներից շատին  
և պաշտօններ յանձնելով և պատիւներ  
տալով՝ անում էր իրան բարեկամ: Նոցա  
դժկամակութիւնը դարձաւ մինչև աղմուկ.  
այլ Ալէքսանդր կարողացաւ հզօր զօրութե-  
ամբ ճմլել այն շփոթը: Առանց կասկածա-  
հանց, Ալէքսանդր արժանաւոր էր ստանալ



Մէջ անուներ, այլ անհնար է չըյիշել և այն,  
որ նա իւր մեծ մեծ առաքինութիւններու  
հետ միասին ունէր և մեծ մեծ պակասու-  
թիւններ: Արբէլ քաղաքի մօտ յաջողած  
ճակատամարտէն յետ՝ Ալէքսանդրի սիրտը  
մեծացաւ, անձնատուր եղաւ շոյլ կենցաղա-  
վարութեան, և էլ չէր իմանում իւր կրից  
չափը, երբ որ հարբած էր լինում: Մէկ  
գիներրուաց ժամանակը նա նիղահասար  
սպանեց իւր բարեկամներու մէկին՝ Կլեմէն,  
և հրամայեց սպանել Պարթեւնիոնին, որ եր-  
կար ժամանակ ծառայել էր նրան, մի միայն  
կասկած ունենալով՝ թէ դաւաճանութիւն է  
խորհում: Պարմենիոնի որդին՝ Փլոտոս նոյն-  
պէս պատուհասիլեցաւ առանց բաւական  
ապացուցութեան յանցաւոր լինելոյն: Իհար-  
կէ, չնայելով այս պարագային, նորա կառա-  
վարութիւնը պիտի լինէր երախտապարզ և  
նորա տէրութեան համար, որովհետև վե-  
հանձնութիւնը և հեղութիւնն էին նորա  
բնաւորութեան ընդարայս, քանի որ կիրքը  
չէին տիրապետում նրան, և նա շատ ըզ-  
գօծութեամբ էր միշտ իմանում ընտրել  
նպատակայարմար (քաջադէպ) հնարներ:

Այլ նա Պարսկաստան վերադառնալէն յետ՝  
միայն չորս տարի կարողացաւ հոգս անել  
իւր հպատակներու բարեաց համար: Ալէք-  
սանդր վախճանեցաւ Քարիլոնումը՝ իւր  
հասակի 33 տարում (323 թուին:)

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՀԹՈՄԷՍԿՍՆ ՏԷՐՈՒԹԵՍՆ՝

31

Միջին իտալիայումը, այժմեան Հռոմէն  
ոչ շատ հեռու, կար Ալէքս-Լոնգին քաղաքը,  
որ ինչպէս կարծում էին, շինել էր Ենէոսի  
որդի Աստիանոսը: Ենէասը՝ Տրոյիայի կոր-  
ծանվելից յետոյ փախել էր դէս այս կողմը,  
թագաւորել էր Լայոնում երկրումը (որ սառ-  
րին Տիրեր գետի մօտ է ծախկողմը: ) Յետ  
այսու իկ աւանդութիւնը պատմում է այս-  
պէս: Մէկ ժամանակ Ալբա-Լոնգայումը  
թագաւորութիւն էր անում Նոմֆոսը, որ  
իւր եղբոր Ամուլիոսի ձեռքով աթոռէն վեր  
ընկաւ: Նումֆոսի դուստրը Ռէո-Սելլա  
ճնաւ երկու որդի երկւորեակ՝ Համուլտս  
և Հոմոս: Ամուլիոսը վախենալով այս երե-



իրանցմէն, որ չըլինի թէ մէկ օր նոքա կարողանան նորա ձեռքէն խլել իրանց պապի թագաւորութիւնը, հրամայեց այն երկու երեխանցը ջուրը գծել. այլ նոքա ջուրէն աղատուեցան և սնունդ առին մէկ կարեկից հովիւի գերդաստանի մէջ: Երբ որ յետ ժամանակաց իմացուեցաւ, որ նոքա Նումիատորի թուներն են, նոքա սկսան իրանց պապին օգնել, որ էլի կորցրած թագաւորութիւնը յետ ստանայ, և այս գործը նրանց յաջողեց: Ամուլիոս սպանւեցաւ նոցա բորբոքած խառվութեան ժամանակը, և Նումիատոր ծերը նոր ի նորոյ ընդունւեցաւ թագաւոր: Այս ձեռներէց սրատանհներուն իրանց մեծ հայրը թոյլ տուեց, որ նոքա մէկ նոր հողանկա (գաղթականութեան բնակութիւն) շինեն. նոքա-էլ օգնութիւն գտնելով իրանց հայրենակից խուժանէն, որ այն ժամանակը լոկ բիրտ հովիւներ էին, գնացին բնակւեցան Պալատին սարի վրայ, որ աւելի հեռու չէ Տիրեր գետէն, և այս կերպով հիմք դրին (Քրիստ. ծն. 753 տարի առաջ) Հոմ քաղաքին, որ յետ ժամանակաց դառաւ այնպիսի մեծ և շքեղ մայրաքաղաք:

Հոռմ քաղաքի բնակիչներու թիւը քանի որ գնում էր բաղմանում էր զանազան խաժամութ ամբոխներով, որ գալիս հաւաքւում էին շրջակայ կողմերէն, և սիրով ընդունելութիւն էին գտնում: Անհնար էր թէ պատերազմի մէջ աջողակ Հոռմայեցիները իրանց հարեաններու դէմ տարածայնութիւններ չունենային: Այս պատճառաւ նորաշէն քաղաքը համարեա թէ անընդհատ կռիւ էր ունենում շրջակայ աղգերու դէմ, այլ միշտ այնպէս աջողակ էր կռիւ անում, որ Հոռմայ կալուածները միշտ ընդարձակւում էին:

Այն ժամանակի Հոռմայեցոց կռախաութեան համար՝ մեզ յայտնի վկայութիւն է Սաբինացոց արջի-բանց յափշտակութեան վրայ մնացած աւանդութիւնը, ևս առաւել ստուգւում է այն՝ Հռեմոսի մահուամբ, որին որ Հոռմուրոս իւր ձեռքով խողխողեց: Հոռմայեցոց համար քան զամենը ծանրակշիռ էր Սաբինացոց դէմ կռուի վերջաւորութիւնը, որով Հոռմայեցիք և Սաբինացիք պիտի այնուհետեւ դառնային մէկ աղգ. Սաբինացիք պիտի կենային մերձակայ Կապիտոլինա



սարի վրայ, և նոցա թագաւորը Տառնոր  
պիտի Հռոմուլոսի հետ միասին թագակից  
լինէր: Երբ որ երկուսն-էլ վախճանեցան՝  
Սարինացի Նոմա Պոմպիլիոսը, ինչպէս որ  
ասում է աւանդութիւնը, սկսաւ կառավա-  
րել մէնակ, և իւր օրէնագրութեան, տա-  
ճարաշինութեան և կրօնական պաշտա-  
մունքները կարգադրելու պատճառաւ ջա-  
նադրութեանց համար մեծահամբաւ հրո-  
շակվեցաւ: Սա անվտոյժ խաղաղութեամբ  
հաշտ մնաց իւր դրակից ազգերու հետ:

Նումա Պոմպիլիոսին ժառանգաբար յա-  
ջորդեց Տուլլոս Հոսպիլիոս, որ ունեցաւ  
շատ արիւնադանդ պատերազմներ Ալբոնիոսի  
դէմ, և Ալբա-Լոնդա քաղաքը կործանեց:  
Մէկ նշանաւոր աւանդութիւն ասում է  
թէ՝ Ուրասիտիանս ու Կոստատիտիանս սուսե-  
րամարտել են մէկ մէկու դէմ, և այս մնա-  
մարտի դաշինքով Հռոմայեցիք նուաճել են  
Ալբայեցոց:

Չորրորդ թագաւորը Անիոս-Մարիոս նոյն-  
պէս լայնացուցել է պատերազմներով իւր  
տէրութեան սահմանները: Սորա ժառանգը  
Տարչուինիոս-Պրիսիոս հոգս էր անում քաղաքի

մէջ շահաւէտ շինութիւններ անելու համար, և նա հրամայեց որ շինեցին մեծ մեծ ընդերկրեայ ջրանցքներ (cloaque) որով քաղաքի ցած տեղերու լճացած ջրերը անց էին կենում. և մինչև այժմ-էլ կան ըստ մասին այս հին մեծ մեծ կամարածածուկ խրամները :

Արժէ՛նոս-Տոպլլոս երևելի է իւր՝ ժողովրդեան բաժին բաժին անելովը, որով այն իսկ ժամանակումը սահմանադրվեցան տէրութեան հարկերը :

Նորա հարազատարիւն դատեր այրը (փեսան) Տարիւնիկոս-Անթարասանը հրամայեց նրան սպանել, և յափշտակեց թագաւորութիւնը: Այս բռնակալը մէկ սլատերազմող մարդ էր, և աջողութեամբ էր կռիւ անում հարեան ազգերու դէմ. այլ խստութիւններով և կամապաշտութեամբ գրգռեց իւր դէմ ժողովուրդին: Սակայն նա անուն-էլ էր ստացել քաղաքի մէջ նոր նոր շինութիւններ առաջացնելով, որովհետև Կասիտոլինոս դղեակը նա շինեց, և նորա մէջ զանազան տաճարներ կանգնեց: Այն միջոցումը երբ որ նա սաշարել էր Արտէմ քաղաքը, Հոռո-



մայ մէջ ընկաւ մէկ աղմուկ, որոյ սլատճաւը  
էր նորա որդւոց բռնաւորական արարմունքը :  
Սէրսորո-Տարկուինիոսը բռնաբարել էր զգուելի  
եղևոնադործութեամբ Կոլլատինոսի կնոջը  
Լուիլիակային : Կոլլատինոսը և Լուկրեաիայի  
հայրը Լուիլիակայի և թագաւորի եղբորորդին  
Քրոսոսը, որոյ հայրը խողխողուել էր Տար-  
կուինիոսի թելադրութեամբ, և ինքն-էլ իւր  
կեանքը ազատել էր միայն սուտ խելագար  
ձեանալով, փախան Կոլլատիակային (Կոլլատի-  
նոսի կալուածէն,) ուր որ այն տմարդի  
ոճիրն էր սլատահել, և եկան Հռոմ, և  
համբաւեցին այս նոր վնասաստարտութիւնը,  
որոյ մէջ յանցաւոր էր արքունական գեր-  
դաստանը : Երևելի քաղաքացիք, որ յետ  
ժամանակաց ասուեցան Պատրիշ (հայր,) և  
որոնք որ քան զամենը աւելի էին ա-  
տում թագաւորին՝ նորա անկողար իշխա-  
նութիւն բանեցնելու սլատճառաւ, այս դի-  
սուածը քաջայարմար դնելով իրանց դի-  
տաւորութեան՝ գրգռեցին ժողովուրդին  
թագաւորի դէմ, և այն ատիճան հասցրին,  
որ ոչ թէ միայն Տարկուինիոս իսպառ տա-  
րագրուեցաւ Հռոմէն, այլ և մտքերումը

Հաստատ դրին, որ այնուհետև բնու ին-  
գաւոր չըղենն: Այս վերը յիշած ետժն  
թագաւորները Հռոմայ մէջ թագաւորեցին  
245 տարի:

ՀՌՈՄԸ ՊՍՏՐԻԳՆԵՐՈՒ ԶԵՌԻՆ

32

Տարկուինիոսի արտրովելէն յետ՝ Հռոմայ  
մէջ կառավարութիւնը այնպէս փոխուեցաւ,  
որ մէկ թագաւորի տեղ սկսան ընտրել  
Էրիոս Հիպոթոս (Կոնստանտին), որոց իշխանու-  
թիւնը տևում էր միայն մէկ տարի: Այլ  
Տիւպատոս կարող էին դառնալ միայն պա-  
տրիկները, և առանց համաձայնութեան  
Միակիտոսի (Սինկիտոսի կամ Սէնաթի) որ  
նոյնպէս բաղկանում էր միայն պատրիկնե-  
րէն, չէին կարող ձեռնամուխ լինել ոչինչ  
մեծ գործի, այնպէս որ՝ վերջապէս բոլոր  
քաղաքը սկսաւ կառավարվել պատրիկնե-  
րու ձեռով: Բրուտոս և Կոլլաափնոս եղան  
առաջին Տիւպատոս (509 տարի Քրիստ. ճն.  
առաջ):

Տարկուինիոս բնաւ չէր կամենում ինք-



նայօժար ձեռք վերցնել իւր գլխից յափշ-  
տակած թագէն, և ընդ հակառակն շուտ  
շուտ փորձեր էր փորձում, որ կարելի է  
թէ նոր ի նորոյ կարողանայ ձեռք բերել  
իւր կորցրած իշխանութիւնը: Այս մտքով  
սկսաւ իւր օգտի համար գործ դնել հը-  
զօր Ետրուրիացոց (այժմեան Թոսկանայի  
նախնի բնակչաց) Հռոմայեցոց դէմ ունե-  
ցած հին ատելութիւնը: Ետրուրիացոց  
թագաւորներու մէկը՝ Պրոսպիսայ եկաւ Հռո-  
մայեցոց վրայ, յաղթեց, փախցրեց մինչև  
Հռոմայ տակը, և ինքն-էլ յետևներէն եկաւ:  
Անշուշտ ներս-էլ պիտի սարգէր քաղաքի  
մէջ, եթէ Ուրասիոս-Կոչէտէ քաջութիւնը  
նրա առջևը չըկանգնէր: Այս քաջարի ե-  
րիտասարդը մէնակ լռանց կամուրջի բե-  
րանը, որն որ Տիրեր գետի վրայ դրած  
էր, և այնքան երկար ժամանակ արգելք  
դառաւ թշնամիներուն, մինչև որ Հռոմայե-  
ցիք նորա յետևէն կամուրջը քանդեցին.  
այն ժամանակ Կոչէտէն-էլ վաղեց ընկաւ ջրի  
մէջ, և ամբողջ եկաւ հասաւ իւր քաղա-  
քակցաց մօտ:

Հռոմայեցիք, իբրաւ է որ, այն միջոցու-

մը ապահովութիւն գտան նորա աներկեա-  
նութեամբ, այլ ստիպուեցան կրել սաստիկ  
պաշարումն: Այն ժամանակ Մոսկոս Սէն-  
լայի քաջարիութիւնը միւսանգամ փրկեց  
հայրենիքին: Մուկիոս իւր հագուսար  
փոխած մտաւ Ետրուրիացոց բանակ, որ  
թագաւորին սպանէ. այլ սխալմամբ, Պորսե-  
նայի աչքի առաջնը, սկեռեց դաշոյնը թա-  
գաւորի մօտ նստած պաշտօնեաներու մէկի  
կուրծքը, և բռնուեցաւ, և մահու դատա-  
կնիք ստացաւ: Սա կամենալով ցոյց տալ, որ  
մահն-էլ է արհամարհում, տանջանքն-էլ,  
սկսաւ մօտ տեղ վառած կրակի վրայ իւր  
աջ ձեռքը հանդարտ խորովել. և երբ թա-  
գաւորը զարմացած սկսաւ հարց ու փորձ  
անել, նա յայտնեց համարձակ, թէ նորա  
բանակի մէջ շատ ծպտած Հռոմայեցիք կան,  
որ իրանց մէջ ուխտ ունին դրած նոյն նը-  
պատակի համար. և թագաւորը հիանալով  
այնպիսի հայրենասիրութեան վրայ՝ պար-  
զեւեց նրան համ նորա կեանքը, համ-էլ  
ազատութիւն. և ինքն Պորսէնա այս համ-  
բաւներէն կայծակնահար եղածի նման  
շտապեց Հռոմայեցոց հետ հաշտութեան



դաշն դնել: Թէպէտ Հոռմ այնուհետև  
տասնուհինգ տարի վայելեց աղատութիւն,  
այլ միշտ հարկադրւում էր շրջակայ աղ-  
գերու դէմ պատերազմ ունենալ:

Ծանր բեռն էր ժողովրդեան (այլէ՞քէս)   
վրայ պատերազմը. ողորմելիքը տեսնում  
էին՝ թէ ինչպէս նոցա դաշտերը ամայա-  
նում էին, և իրանք-էլ անդադար արշա-  
ւաններու մէջ լինելով՝ ստիպւում էին  
իրանց անտեսութիւնը բարձ-ի թողի անել:  
Պարտքերը աւելանում, դիզւում, բարդւում  
էին պարտքերու վրայ: Կալուածները,  
հողերը ու փողերը մէնակ պատրիկներու  
ձեռին էին. և վերջապէս քաղաքացիք այն-  
քան չքաւորւեցան, որ էլ չէին կարողա-  
նում հատուցանել ո՛չ հողի վարձը, ո՛չ փողի  
շահը: Պատրիկներու-էլ արած անդթու-  
թիւնները յուսահատութեան մէջ դձեցին  
ռամիկ ժողովուրդին:

Եյս միջոցումը էլի թշնամիներու դէմ  
պատերազմ պիտի բացվէր, և ժողովուրդը  
էլի պիտի արշաւան երթար: Երբ որ պա-  
տրիկները սկսան ստիպել զօրաժողով անե-  
լու, Հոռմ աղմուկ ընկաւ, և ժողովուրդը,

որ անտանելի լուծերից քամվել ցամքել էր, ու մէջը էլ ուժ չէր մնացել, փոխանակ արշաւան երթալու թշնամեաց դէմ՝ քաշուեցաւ դէպ ի նոսրահան սարսը:

Այն ժամանակ Պատրիկները հասկացան ու համոզուեցան, որ սէտք է անշուշտ լինին մէքիչ հեղձողովորդեան վրայ խշխանութիւն բանեցնելու ժամանակը: Մեծամեծքը իրանք պատգամաւորներ ուղարկեցին ժողովորդեան մօտ, որ նրանց ողոքեն, յորդորեն էլի քաղաք վերադառնալ:

Սակայն ժողովուրդը չը յօժարեցաւ միւսանգամ յետ դառնալ դէպ ի Հոռմ, մինչև որ պայման չըդրին և չը խոստացան, որ արդար օրէնքներ սահմանեն պարտքերու համար, և քան զամենը առաջ բնակիչքը՝ ծերակուտի և պատրիկներու նեղութիւնէն պաշտպանութիւն ստանան՝ ժողովրդական իրաւաբանութիւնի կարգելով: Մեծամիտ պատրիկները հարկադուեցան ընդունիլ այս պայմանները, և այնուհետև քաղաքացիներու մէջէն ընտրվում էին ժողովրդական արեւոյն ասածները, այսինքն ռամիկներու պատկերացնող, որոնց իրաւունքները այնքան ընդարձակ էին տա-



րածվում, որ ժողովրդական տրիբունները  
կարողանում էին արգելումն տալ ճերա-  
կուտի և հիւպատոսներու ամեն վճիռնե-  
րուն: Այս պատահեցաւ 494 թուին Ք. Տն.  
առաջ: Առաջին անգամը միայն երկու տրի-  
բուն էին ընտրվում, յետոյ քիչ քիչ մին-  
չև տասը աւելացան

ՀՌՈՐ ՍՏՍՅԱԻ ՕՐԷՆՔՆԵՐ.

34

Մինչև սյս կէտ Հռոմայեցիք չունէին  
օրէնք: Գատաւորները վճիռ էին տալիս վեճե-  
րուն և դատակնիք էին դնում յանցանքներու  
վրայ իրանց հին սովորութիւններով, կամ  
ինչպէս որ իրանց հաճոյ էր լինում: Այս  
միջոցներումը շատ բան նրանց կամքին էր  
ապաստան թողած լինում, և որովհետև  
դատաւորները ընտրվում էին պատրիկնե-  
րու մէջէն՝ ուրեմն կարելի է երևակերպել  
թէ ո՞րքան ստեղ կարելի էր նրանց յան-  
դիմանել և պարտաւորել պէրէպաց դէմ  
երեսպաշտութեան մէջ: Շատ անգամ էր  
ժողովուրդը պահանջում, որ օրէնք դրուի,

բայց զուր էր անց կենում նոցա խնդիրը. մինչև որ ծերակոյտը այնպէս նեղ տեղ ընկաւ, որ էլ չըկարողոցաւ խուսափել և տըւեց իւր համաձայնութիւնը :

Նտրեցին այնպիսի անձինք, որ կարողացան երթալ և ժողովել օրէնքներ Յունաստանի այն քաղաքներէն, որոնք որ ամենեցուն յայտնի էին իրանց տէրութեան լաւ կարգադրութիւներով: Երբ որ այս ուղարկած մարդիկը յետ եկան՝ Հռոմայեցիք ընտրեցին ասոր ճարտ (decemvir, տեղէմլեր, ուստի դեկտեմբերը,) որ ծաղկաքաղ արին և կարգի դրին՝ Հռոմայեցոց վիճակին յարմար՝ Յունաց աշխարհէն բերած օրէնքները. և այն միջոցումը տէրութեան ամեն պաշտօններն-էլ այն տասը հոգիքն էին կատարում. (ծերակոյտն-էլ նրանք էին, հիպատոսն-էլ, պատրիկն-էլ, տրիբունն-էլ) մէկ տարի ժամանակով (451 թուին Ք. Տն առաջ :) Այս Գեցեմվիրները մեծ հեղութեամբ արին իրանց կառավարութիւնը, և բոլոր ժողովրդեան բերկրութիւն բերելով՝ պարզերես կատարեցին իրանց յանձնած գործը. և երբ իրանց ժամանակակէտը հասաւ՝ հրա-



տարակեցին նոր օրէնքի համախըմբութիւնը, որ գծագրվեցաւ տասը հատ պղնձի տախտակներու վերայ :

Հոռմայեցիք տեսնելով այս տասը մարդոց կառավարութեան անուշութիւնը՝ յօժարեցան նոցա սրակսած թիւը լրացնել, որ աւելի հեշտ և թեթեւ լինի կառավարելը, և այս պատճառաւ հիների վրայ ընտրեցին էլի մէկ տարի ժամանակով ուրիշ մարդիկ ու արին տասը: Յանկարծ այն լաւ մարդիկը փոխեցին իրանց կենցաղավարութեան ձևը: Ապրիոս Կլաւդիոս՝ որ այն տասնի մէջ քան զամենը երևելին էր, և անցեալ տարի երեւում էր ժողովրդեան մեծ և սրտեռանդ բարեկամ, այժմ՝ յայտնվեցաւ անագորոյն բռնակալ, և դրդեց իւր միւս պաշտօնակիցներուն-էլ՝ որ նորա օրինակին հետևին: Նոր օրէնքներու հակառակ՝ սոքա ցոյց էին տալիս չափազանց ժանտ կամապաշտութիւն և անիրաւութիւն, և այն ժամանակն էլ, երբ որ տասը տախտակի վրայ աւելացրին երկու տախտակ-էլ, և նրամով վերջացաւ նրանց յանձնուած պաշտօնը, նոքա դուրս չեկան իրանց իշխանութեան

տեղէն, այլ միւս տարին-էլ սրահեցին իրանց  
ձեռն, ո՛չ ծերակուտական մարդոց հաճու-  
թիւնը հարցրին, ո՛չ ժողովուրդի, և մինչև  
զօրքերուն-էլ էին տանում թշնամիներու դէմ  
արշաւան, թէպէտ և ամենու սրտի մէջ խը-  
տում էր նոցա դէմ դժկամակութիւնը:  
Հռոմայեցիք յաղթուեցան և այս աւելցուց  
ժողովուրդի դժգոհութիւնը:

Չընայելով այս սրտադայից վրայ՝ բանա-  
ւոր իշխանները բնաւ չը փոխեցին իրանց կեն-  
ցադաւարութեան և զանակը, վերջապէս մէկ  
ոճիր՝ որն որ գործեց նոցամէն մէկը, հաս-  
ցրուց վշտահար քաղաքացիներուն (սլէքե-  
աց) այն սատիճան, որ յայտնի աղմուկ հա-  
նեցին, և այս շփոթի զոհ դառան այն ատելի  
տասը հոգիքը: Ասերասան Աստիտս Կլա-  
դիոսը, կամենալով տիրապետել Ալեքէնկայն,  
որ մէկ քաղաքացոյ դուստր էր, խրատ տուեց  
մէկ իւր համախոհ մարդու որ նա ատէ թէ այն  
աղջիկը նորա փախտտական աղախինն է, և  
սրահանջէ նրան Աստիտոսի տտեանումը ինչ-  
պէս իւր սեփականութիւն:

Ամենեքեան իմանում էին, որ սուտ էր  
ստում այն մարդը, և վրդովվում էին



Ապալիոսի այն գործի մէջ արած անիրաւութեամբ, այլ ոչ ոք չէր համարձակվում անօրէն դատաւորին ընդդիմարանել: Այն ժամանակ Վիրգինիայի հայրը, որ սրատրաստվել էր արշաւան երթալ, նեղանալով և անճարութեանէն սիրտը քարացնելով՝ դուրս եկաւ ժողովրդեան մէջէն, և երբ Ապալիոս վճռեց՝ որ աղջիկը այն ոսոխի աղախին լինի, յափշտակեց դանակը և խրեց Վիրգինիայի սիրտը, զարհուրելի անէծքներ թափեցնելով բռնաւորներու դիմին:

Այս զղուելի արարմունքը սրտմտութեամբ բորբոքեց ժողովրդեան դժարանքը, որ մինչև այն կէտը հեղձամղձուկ էր արած, քաղաքացիք ոտքի վրայ կանգնեցան և ստիպեցին Ապալիոսին՝ որ վախճի: Զօրքը երբ որ լսեցին այս, մերժեցին իրանց մէջէն այն զօրավարներուն, որոնք որ այն տասնիցն էին, և իրանք միւսանդամ քաշուեցան դէպ ի նուիրական լեառը, և այսպէս բռնադատեցին ճերերուն, որ առաջվան կառավարութիւնը նորոգեն:

Նեցեմվիրները իրանց պաշտօնէն դուրս հանուեցան. Ապալիոսը և նորա համախոհ

Որպէս սաշտօնակիցը, որոնց դէմ որ աւելի  
գժգմնութիւն կար, տարագրութեան մէջ  
անձնաստան կղան, մնացորդները Հռոմէն  
դուրս փախան: Նոր ի նորոյ ընտրուեցան  
Տիւրքատոմները և տրիրունները, և այս  
ձանփով նորոգուեցան նախկին կարգերը:

---

ԳՍՂՂԻՍՑԻՔ ՆՈՒՍՃԵՑԻՆ ՀՌՈՄԸ.

35

Հարիւր տարիէն աւելի էր անցել, որ  
Քաղղիացիք հետզհետէ դէպ ի հարաւ էին  
միջամուխ լինում: Սոքա էին Կէլ<sup>ա</sup> բազ-  
մամբոխ աղգէն ցեղուած ժողովուրդ, որ  
այժմեան Թրանսիայէն և Քերմանիայէն դաղ-  
թուել էր Ալպեան սարերու վրայով և բը-  
նակուել էր Խտալիայումը: Հռոմայեցիք  
խառնուեցան այն սատերաղմի մէջ, որն  
որ Քաղղիացիք մղում էին Ետրուրիացոց  
դէմ, և իրանց վրայ հրաւիրեցին ոգորումն  
այնպիսի թրշնամիներու դէմ, որոց նման  
ահաւոր մինչև այն ժամանակ ունեցած չէր  
Հռոմը: Հռոմայեցիք զարհուրելի ջարդ  
կրեցին Ալլ<sup>ա</sup> դեռ ի մօտ խմբուած սատեր-



րազմուճը, որ համարեա թէ հաղիւ երեք  
ասպարէզ հեռաւորութիւն ունի Հռոմէն  
(389 տարի ֆ. ծն առաջ) և սրամուլ ըն-  
կան մէկ այնպիսի երկխղի մէջ, որ էլ  
չըհամարձակուեցան քաղաքը անդամ պաշտ-  
պանել, այլ նորա հակառակ իրանց զա-  
ւակները և ընտանիքը հետերը առած՝ փա-  
խան և պատսպարուեցան Կապիտոլիայի  
մէջ, իսկ ամայացած Հռոմը թողին, որ  
թշնամին իսպառ քանդէ: Քաղղիացիք Բլէն-  
նոսի զօրավարութեան ներքոյ՝ քանի ամիս  
կանգնած էին դղեակի առջևը, և մէկ  
հնար չէին գտնում տիրապետել վերնա-  
բերդին: Այլ քաղցածութիւնը և հիւանդու-  
թիւնները երկու կողմն-էլ ստիպեցին, որ  
յօժարութեամբ հաշտուին: Քաշինք դրին.  
Հռոմայեցիք պիտի ոսկի տային՝ որ Քաղղի-  
ացիք հեռանային: Ուրիշները պատմում են՝  
թէ Կապիտոլիան իշխանապետը (\*) որ առաջ

(1) Մեծ մեծ կարիքներու ժամանակը Հռոմայե-  
ցիք ընտրում էին իշխանապետ (գեկտատոր) ծայրագոյն  
տեսուչ տէրութեան, որ ունենում էր անկողար իշխանու-  
թիւն, և կարող էր ամեն հնարը գործածել հայրենիքը  
փրկելու համար:

Հոռմ քաղաքէն աքսորված էր, և այն միջոցին, խնայելով իւր հայրենեացնեղ զբռթեան, ժողովել էր փախած Հռոմայեցոց ամբոխը վէյոյո՞ւմը, հասաւ Քաղղիացոց վրայ և մեծ սրատերազմ տալով իսպառ յազթեց, և Հռոմայեցիք աղատուեցան իրանց վերահաս կործանմանէն:

ՀՌՈՄՄԵՅ ՈՒՈՐՈՒՄԸ ՍՍԲՆԻՏՍՅՈՑ ԴԷՄ:

36

Քաղղիացոց երկիւղէն աղատուած սրատերազմասէր և երկրակալութեան անձնատուր Հռոմայեցիք, որոց տերութիւնը Հռոմայ չորս կողմը հազիւ թէ մէկ քանի մղոն ընդարձակութիւն ունէր, սկսան կռիւ անել մէկ ուրիշ այնպէս ազգի դէմ, որ քան զնոսա աւելի սրատերազմող էր, այն ուղորումը լինում էր երկու կողմից էլ շատ սաստիկ յամառութեամբ և ուժ թափելով: Քաջութիւնով, հնարքներով և համբերութիւնով Հռոմայեցիք ստացան գերազանցութիւն, և սրատերազմը վերջացաւ նոցա հակառակորդաց սպառսպուռ նուաճուելով:



Հարաւային Իտալիայի ներքօակողմը  
Ապենին սարի լեռնոտեաց մէջ կենում էր  
աղատութիւն սիրող լեռնական ազգ Սամնի-  
տայի, որ Հռոմայ Քաղղիացոցմէն նուա-  
ճուելից քսան տարի յետոյ ըսկսան պատե-  
րազմ՝ դէմ Կամպանոց, որ Հռոմայեցոց հա-  
րաւակողման հարեան էին, և եկան պաշա-  
րեցին Կաստում մեծ և ճոխ քաղաքը: Հռո-  
մայեցիք հրաւիրուեցան օգնութիւն, և  
խելոյն ուղարկեցին նոցա դէմ ղօրք: Այս-  
պէս սկսաւ այն երկարատե ողորումը, որ  
ձգվեցաւ 70 տարի. (342—282 թիւ Ք. Տն  
առաջ) և բարձրացուց Հռոմայեցոց քա-  
ջութեան համբաւը բազմապատիկ յաղ-  
թութիւններով. այլ այս պատերազմի մէջ  
Հռոմայեցիք անպատուութեան տակ էլ ըն-  
կան, որ վշտացուց նոցա բարձրամտու-  
թիւնը. ամօթալի ուխտադանցութիւնը ա-  
ղուէսադրոշմ դառաւ նոցա ճակատին. Ի-  
տալիայի ուրիշ ազգերու աչքին նոքա ե-  
րևում էին ինչպէս մէկ անիրաւ նուաճող:  
Հռոմէական հիւստատոսները Վիտուրիոս և  
Պաստուրիոս թշնամեաց զինուորական հնա-  
րագիտութեամբ Կաստիլիայի մօտ խարուե-

ցան ընկան մէկ այնպէս տեղ, որ նորա  
մէջէն, երբ որ բոլոր լեռնական ճանփա  
ները բռնեց Սամսիտացոց զօրապետ Պոնտի-  
ոսը, էլ դուրս գալու համար ոչինչ հնար  
չէին գտնուամ: Նոքա կամ պիտի սովամահ  
մեռնէին, կամ անձնատուր լինէին իսպառ.  
որովհետեւ նեղ ու անձուկ լեռնամէջներէն  
մէկ անցք գտնելու համար մտածելու էլ  
հնար չը կար: Սամսիտացիք վեհանձնու-  
թեամբ թոյլ տուին Հռոմայեցոց, որ առանց  
արգելմանց յետ դառնան. այլ այս միջոցին  
սպայման դրին, որ հռոմէական զօրքը պիտի  
չուփ տակէն անցանէին: (Այս մէկ վաղնջուց  
սովորութիւն էր՝ թշնամիի կամքին իսպառ  
անձնատուր լինելու նշան. երկու նիզակ  
ցցում էին գետնին և մէկ նիզակ էլ այն  
երկուսի վրէն էին դնում, որով այն երեք  
նիզակը ունենում էին դրան ձև, կամ լաւ  
ևս կախաղանի նմանութիւն). յետոյ Սամ-  
սիտացոց երկրէն դուրս գային և խաղաղու-  
թիւն պահէին (\*): Չափազանց բարկացած

(\*) Այս կախաղանաձև դրան սովորութիւնը, երևի  
թէ, եղել է հին Հայոց մէջն-էլ, բայց երկու ցցած նիզակ-  
ներու ծայրերուն շուան կապած, որովհետեւ մինչև այսօր



էին հիւսաւորութեան  
պատճառաւ, բայց անմերժելի կարիքը հար-  
կադրեց, և նոքա յանձնառու եղան այն չը  
լսուած խայտառակութիւնը իրանց վրայ և  
իրանց բոլոր զօրքի վրայ: Երբ որ նոքա  
այսպէս անարդուած, տրտում քայլելով  
յետ դարձան դէպ ի Հոռմ՝ ծերակոյտը  
սկսաւ խորհուրդ անել այս ամօթալի  
դաշնագրութեան և հաշտութեան վրայ:  
Պատուաւորս ինքը հրատարակեց՝ թէ որով-  
հետեւ այն դաշնագրութիւնը ծերակուտի  
հաւանութեամբ չէ հաստատուած, չէ էլ  
կարող լինել ընդունելի, և առաջարկեց ան-  
դամ, որ ծերակոյտը տայ Սամսիտացոց  
ձեռքը ինչպէս իրան, նոյնպէս և միւսնե-  
րուն, որոնք որ այն դաշնագրութեան մէջ  
հաղորդակից էին, և պատերազմը շարու-  
նակիլի: Սինկլիտոսը՝ որ բնաւ չէր կամե-  
նում այս առաջարկութիւնը մերժել, ինչ-  
պէս մէկ վատախորհուրդ խարէութիւն, և

---

էլ Հայերու մեջ «թոկէ փախած» խօսքը գործ է անվում  
որ այս զինուորական կախաղանին է ակնարկում, և ոչ  
մահապարտութեան փոկին, կամ շուն կասկելու տունին, թէ-  
պէտ և շատ անգամ այս միտքովէլ է գործ դրվում:

չէր էլ յօժար, որ եթէ այն դաշնադրու-  
թիւնը չըհաստատուի, նոր ի նորոյ ուղար-  
կվի զօրքը Սամնիտացոց դարանի մէջ, ընդ  
հակառակն համաձայնեցաւ Պոստումիոսի  
ասածին և գովեց նորա անձնուրացութիւնը  
հայրենեաց սիրոյ համար: Եւ իրաւի, միւս  
տարին զօրք դուրս գնացին Սամնիտացոց  
վրայ, և Հռոմայեցիք ուղում էին իրանց-  
մէն հեռացնել հաշտութեան քանդելու  
յանցանքը, ասելով թէ Պոստումիոսին և  
միւս Հռոմայեցիներուն, որոնք որ դաշնա-  
դրութեան համար սարտաւոր էին, կու-  
տանք ձեր ձեռքը, որ նոցամէն հանէք ձեր  
վրէժը. այլ Պոնտիոս դժկամակութեամբ  
մերժեց այս առաջարկութիւնը, և պա-  
հանջում էր, որ ամեն Հռոմայեցիք էլի  
վերադառնան ինչպէս գերի նոցա լեռնական  
հովիտներու մէջ: Սամնիտացիք չէին բռնո-  
տել ո՛չ Պոստումիոսին և ո՛չ նորա գե-  
րեկիցներուն, այլ թոյլ էին տուել, որ նոքա  
արձակ համարձակ վերադառնան դէս ի  
Հռոմ. բայց Հռոմայեցիք իսկոյն սկսան  
պատերազմը, որ ինչպէս դժար չէ գուշա-  
կելը, մղում էին սաստիկ խստասրտու-



Թեամբ, և երբեմն ընդհատուած էին միա-  
մեայ մարտադու ըներով և զինադադարնե-  
րով, և կրկին նորոգուած էին Հռոմայեցիք  
անդադար աւելի յամառ հետասանդու թիւն-  
ներով, մինչև վերջապէս, համարեա՛ թէ  
Կառուցիուամի լեռնական անցքի դիպուածքէն  
50 տարի յետոյ՝ բոլոր երկիրը հստատա-  
կեցաւ Հռոմայեցոց տէրութեան: Հռոմայ  
իշխանութիւնը տարածվեցաւ ուրիշ աղղե-  
րու վրայ էլ այնքան շուտ, որ մէկ քանի  
տարի յետոյ՝ Հռոմ տիրապետուած էր արդէն  
Ստորին և Միջին Իտալիայի վրայ:

ՊՈՒՆԻԿԵԱՆ (ԿԵՐԹՍԳՒՆԵՒ) ԵՌԱՋԻՆ  
ՊԵՏԵՐՍԱՊԸ:

37

Օտվային առուտուրով հռչակուած Փե-  
նիէնցոց աղղի ձեռքով հիմնած բազմաթիւ  
քաղաքներու մէջ քան զամենը գլխաւորը էր  
Կարթագինէն (\*): Դեռ Քրիստոսի ծն. 800  
տարի առաջ՝ Ղեդոնս՝ Փոքր Ասիայի Տիւրոս  
քաղաքի Պեդեալին թագաւորի քոյրը,

(\*) Սա Կարկեղան-էլ էր ստված, այժմեան թաւ  
նազի մտ հիւսիսային Նիբիկայումը:

որ իւր եղբօր ազահութենէն փախել էր, հիմնարկել էր այս դաղթանութիւնը, ինչպէս որ կարծում են: Վաճառաշահութեան միջոցներով այս նորաշէն քաղաքը շուտով ծաղկեցաւ, և քիչ քիչ ստացաւ իւր շրջակայ տեղերու բնակչաց վերայ և Ափրիկայի հիւսիսային ծովեզերաց մեծ մասի վրայ իշխանութիւն (\*): Իրանց նախնեաց (Տիրացոց կամ Փիւնիկեցոց) նման Կարթագինեցիք վաճառաշահութիւն էին անում Միջերկրեաց ծովի վրայ, և նորա ծովեզերքումը զանազան տեղեր դաղթականութիւններ էին հիմնարկում: Աւելի հզօր էին Կարթագինեցիք Սիկիլիա, Սարդինիա և Կորսիկա, երեք մեծ կղզիներու վրայ և քիչ քիչ Իսպանիայի մէջ-էլ Փիւնիկեցոց կալուածները նոցա իշխանութեան տակ ընկան, երբոր Փիւնիկեցոց զօրութիւնը սկսաւ տկարանալ: Ծաղկեալ առուտուրի միջնորդութեամբ վաստակած գանձերու ուժով կարողանում էին նոքա ոռճիկ տալ հազարաւոր վարձած զօրքի, և սլահել սլատե-

(\*) Այժմեան Ճեզայիւրի և Թարապուսի (Ալժիրի և Տրիպօլիտոյ տեղութիւնը):



րազմական նաւատորմիդ, որոյ զօրութեամբ  
նրանց հնար եղաւ Սեբեւեայե մեծ մասը  
նուաճել: Մէկ անտոլոր և անակնկալ դի-  
պուած կռուեցրուց Կարթագինեցոց՝ Հռո-  
մայեցոց հետ:

Մամերտայե՝ կոշտ ու կռախտ զինուոր-  
ներու ամբոխ, որն որ Սերտիուսայե թաղա-  
ւորը Ագաթանիէսը, մէկ ժամանակ իտալիա-  
յումը հաւաքել էր, այժմ ուղղում էին յետ  
դառնալ դէպ ի իրանց հայրենիքը, և ճա-  
նապարհումը առին Մեթանիս քաղաքը, այն  
տեղ բնակվեցան, և Սիրակուզացոց կալու-  
ածներու մէջ էլ մտան:

Ագաթանիս ժառանգ Հեթերոնը այս սլաւ-  
ճառաւ սաշարեց Մեսսինա քաղաքը, որոյ  
միջնաբերդը յետ ժամանակաց գրաւեցին  
Կարթագինեցիք: Այն միջոցը Մամերտա-  
ցիք էլ օգնութիւն կանչեցին Հռոմայեցոց,  
որ երկու տարի առաջ նուաճել էին Ստո-  
րին իտալիայի վերջին քաղաքը Տարտանոս  
(այժմ Թարանտո): Հռոմայեցիք չը յապաղեցին  
օգուտ քաղել այս բարեյաջող դիպուածէն,  
իրանց տէրութիւնը ընդարձակելու համար,  
Հաւատադրութ (խաբէական) հնարքներու

միջնորդութեամբ տիրապետեցին Մեսսի-  
նայի բերդին, յաղթեցին Հիերոն թագա-  
ւորին, և ստիպեցին նրան, որ նա դառնայ  
նրանց դաշնակից: Եւ այնուհետեւ դարձրին  
Հռոմայեցիք իրանց բոլոր ուժը Կարթագի-  
նեցոց (\*) դէմ և մէկ քանի տարւան մի-  
ջոցումը՝ համարեա թէ տիրապետեցին նո-  
ցա բոլոր Սիկիլիայի մէջ ունեցած կալուած-  
ներուն: Այլ ծովեղերեսոյ քաղաքներուն  
տիրելու համար, և մանաւանդ որ՝ թշնա-  
միք չկարողանան անընդհատ դէպ ի Սիկի-  
լիա նոր նոր զօրք ուղարկել, հարկաւոր  
էր՝ որ Հռոմայեցիք նաւատորմիդ-էլ ունե-  
նային: Չարմանալի արագութեամբ երկու  
ամսի միջոցումը շինեցին Հռոմայեցիք 160  
պատերազմական նաւերու տորմիդ, և Գրու-  
ելիոս Հիւտատոսը մէկ ծովային պատերազմի  
մէջ յաջողութիւն-էլ դտաւ, և յաղթեց  
Կարթագինեցոց: Հռոմայեցիք մինչև հա-  
մարձակիլեցան մէկ քանի տարի յետոյ եր-  
թալ Կարթագինեցոց Ափրիկէի մէջ ունե-

---

(\*) Հռոմայեցիք նրանց Պունիկեցիք էլ էին անուա-  
նու մ:



ցած կալուածներու վրայ: Այլ այս համար-  
ձակութիւնը նրանց թանկ նստաւ:

Որովհետեւ թէպէտ և առաջին անգամը  
Հռոմայեցիք նուաճեցին և տիրապետեցին մէկ  
քանի տեղեր, սակայն յետոյ, երբոր կարթա-  
ղինեցիք հանեցին նոցա դէմ շատ զօրք,  
Հռոմայեցիք տկարացան, կարթաղինեցիք  
զօրացան, և Հռոմայեցոց զօրավար Հու-  
դուլոսը գերի ընկաւ: Կարթաղինեցիք,  
որ արդէն խոնջւած էին այնպիսի յամառ  
ողորման մէջ իրանց ուժը թափելով, ի-  
զուր էին դեսպաններ ուղարկում, և նոցա  
հետ նոյն իսկ Հուդուլոսին, որ երթան  
Հռոմ, և համոզեն Հռոմայեցոց դէպ ի  
հաշտութիւն: Հռոմայեցիք խմանալով  
իրանց թշնամիներու այժմեան տկարու-  
թիւնը, նոյն իսկ Հուդուլոսի խորհրդով  
աւելի սաստկութեամբ սկսան առաջ տանիլ  
պատերազմը, նոր զօրք կազմեցին, և նոր  
նաւահանդէս սրատրատեցին, և վերջուպէս  
շատ սրատերազմներից յետոյ հարկադրեցին  
կարթաղինեցոց, որ Սիկիլիայի տիրապե-  
տութիւնէն ձեռք վեր առնեն, և շատ էլ  
փող հատուցանեն նրանց: Այս պատերազ-

մը քչեց 24 տարի (264—241 թթ. Տն.  
առաջ):

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵՍՆ (ՊՍՐԹՍԳԻՆԵՑՈՑ)

ՊՍՏԵՐՍՁՄԸ:

38

Հռոմայեցիք ու կարթագինեցիք 32 տա-  
րի հաշտ մնացին. այլ այս միջոցումը Հռո-  
մայեցիք համարեա՛ թէ նուաճել էին բոլոր  
Վերին Իտալիան (Gallia Cisalpina): Հռոմի և  
կարթագինեի մեջ նորից պատերազմ դըր-  
դուկեցաւ. որովհետև այս միջոցումը կար-  
թագինեցիք էլ նուաճել էին համարեա՛  
թէ բովանդակ Իսպանիան, որ այն ժամա-  
նակումը շատ ճոխ էր ոսկեհանքներով, և ա-  
ռել էին Հռոմայեցոց դաշնակից Սագունա \*  
քաղաքը: Այս պատճառաւ Հռոմայեցոց  
պատգամաւորները եկան կարթագինէ և  
սկսան դանկատ անել այս կարթագինեցոց  
արարմունքի դէմ: կարթագինեի ճերակոյ-  
տը («Էնալէ») չըտուեց մէկ որոշ պատաս-  
խան, և ինչպէս երևում է երբ որ Հռո-

\* Այժման Ղալէնցայի դաւառումը:



մայեցիք պատերազմ սպառնացան, Կարթագինեցիք ո՛չ առանց յօժարամտութեան ընդունեցին այն, որովհետև Իսպանիայի մէջ Կարթագինեցոց պարագլուխ Կանդաճ էր այն միջոցումը մէկ այնպիսի զօրավար, որ տոչորվում էր տենչանքով՝ այն իւր հայրենեաց առաջին անարգութեան համար պատժել Հռոմայեցոց, մինչ այժմ Կարթագինէն՝ Իսպանիան նուաճած լինելով՝ ստացել էր նոր զօրք և նոր ճոխութիւն: Այս զարմանալի մարդը էր Աննիբալ (Հաննիբալ:) Քանի որ մանուկ էր սա՛ նորա հայրը Աննիբալ իւր հետ տարել էր նրան արշաւան՝ Իսպանիայի դէմ երթալու ժամանակը, երբ որ Կարթագինեցոց զօրավարութիւն էր անում և նրան զարգացրել էր այնպիսի ուղղութեամբ, որ անհաշտ ատելութիւն ունենայ սրտի մէջ Հռոմայ դէմ, և ասում են էլ, թէ հայրը մէկ օր ստիպեց որդուն հրապարակաւ երգումն անել սեղանի առջև, որ նա միշտ պիտի լինի ռիսերիմ թշնամի Հռոմայեցոց, և Աննիբալ շատ ճիշդ կատարեց իւր ուխտը: Պատերազմական արմուկների մէջ գոլով մեծացած Աննիբալ

դառել էր մէկ դերազանց զինուոր, և խը  
քաղցրամոք կենցաղավարութեամբ դրաւել  
էր բոլոր զօրաց սէրը, և դեռ շատ կանուխ հան-  
դիսացել էր զգօն արիութիւնով և խելքով:

Օտրմանք չէ բնաւ, որ երբ նորա հայ-  
րը Սմիլկարը մէկ պատերազմի մէջ մեռաւ,  
և երբ նորա մօրեղբայրը Սարգսիսը սպան-  
վեցաւ, բոլոր զօրքը համակամ հաճու-  
թեամբ նրան ընտրեցին զօրավար, որ դեռ  
քան ու հինգ տարեկան պատանի էր, բայց  
շատ ծեր զօրականներէն աւելի քաջափորձ  
և հմուտ էր, և մանաւանդ անվհեր և  
անյողդողդ բնաւորութեան տէր լինելով  
անյապաղ ձեռնամուխ էր լինում այնպիսի  
հնարներու, որոնք որ խը նպատակին  
քաջայարմար էին երևում. ինչ դործի էլ  
որ ձեռներէց էր լինում՝ յաջաղութիւն էր  
գտնում, և Հոռմայ դէմ կրում էր սրտումը  
անհաշտ թշնամութիւն: Ետ ժամանակ  
էր՝ որ ցանկանում էր սա կռիւ բաց անել  
խը մահուչափ ատելեաց դէմ, և խը յան-  
գուզն կենցաղավարութեամբ: Հոռմայեցոց  
դեսպաններու հետ, որ եկել էին համադել  
նրան, որ նա Սագունա քաղաքը շտնու,



ինքը առիթ տուեց ոգորումն սկսելու: Երբ  
որ լսեց թէ Հռոմայեցիք սլատերաղմ են  
յայտնել, Աննիբալ իսկոյն ձեռնամուխ  
եղաւ դլուխ բերել այն դաղափարը, որոյ  
համարձակութիւնը հիացնում է ամենուն:  
Միտքերուդ մէջ երևակերպեցէ՛ք Ալպեան  
սարերը, Տրանսիայի և Իտալիայի միջոցումը,  
և նրանց անանցանելի ձիւնապատ դաղա-  
թումքը, նրանց անդունդները և ձորա-  
մէջները, նրանց քարաժայռները և սառ-  
նամանիքը, ահա՛ այս սարերու վրայէն էր  
ուղում աշնան վերջերումը անցկենալ 60,000  
զօրքով և յարձակիլ Հռոմայեցոյ վրայ  
Իտալիայի մէջ: Նորա առջևը կային ան-  
համար դժուարութիւններ և անթիւ  
վտանգներ, որովհետև նա պիտի ոգորէր  
բնութեան դէմ նոյնպէս, որպէս էլ որ այն  
երկրի բնակիչներու դէմ, որ չէին թոյլ  
տալէս նրան՝ իրանց տէրութեան մէջէն  
անցկենալ: Նա յաղթեց ամենուն էլ: Մին-  
չև հեծելազօրքն-էլ և փիղերն-էլ Ալպեաց  
վրայէն անցան, և Ափրիկէի բնակիչք ստի-  
պուեցան սառնամանիքի ցուրտը քաշել, և  
չէին համարձակվում ձիւնաթաղ դաշտերէն

լինում ճանփայ բաց անելու համար քա-  
րակարկառ վէմերը տեղերէն շարժել:

Տասնուհինգօրվան միջոցումը զօրքը  
քաշեց անհաւատալի դժուարութիւններ  
Սալոյեան սարերումը. վերջապէս աջողու-  
թեամբ հասաւ այժմեան Պէ՛՛՛՛՛՛՛ (վերին  
Խտալիայի նահանգի) գեղեցիկ դաշտերուն:  
Այլ թէ ո՞րքան կորուստ ունեցաւ այս  
դիւցաղնական արշաւանը. պակսել էր 30,000  
մարդ, 6000 ձի և գրեթէ բոլոր փիղերու  
երամակը, երբ որ Աննիբալ Խտալիայ մէջ  
զօրահանդէս արաւ: Հռոմայեցիք աճապա-  
բեցին զօրք ուղարկել դէպ ի վերին Ի-  
տալիա՝ Սցիպիոն հիւսպատոսի առաջնոր-  
դութեան ներքոյ. բայց որովհետև այս զօրքը  
կազմուած էին անկիրթ խաժամուժէ՛՛՛ իս-  
պառ սարու ջարդվեցան առաջին իսկ  
պատերազմի մէջ, որ խմբվեցաւ Տեյէնա  
գետի մօտ, ո՛չ շատ հեռու այժմեան Պապիա-  
լէն (218 տարի Ք. Տն առաջ): Սցիպիոն մի-  
աւորվելով Սեմպրոնիոս հիւսպատոսի հետ,  
որ նոր զօրք էր բերել, սրամէն յետոյ  
կրկին անգամ ջարդ ստացաւ Տեյէնա գե-  
տի մօտ: Երբ որ հասաւ միւս գարունը



Աննիբալ անցաւ Ետրուրիա և բնա-  
ջինջ արաւ Հռոմայեցոց երրորդ բանակը՝  
Փլաթինիոս Տիւպատոսի առաջնորդութեան  
տակ Տրադիֆէն (այժմեան Փերուջիա) լծի-  
մօտ: Այնժամանակ Հռոմայեցիք նեղ տեղ  
մնալով՝ ընտրեցին իշխանապետ (պրիմատուս)  
զգոյշ Փաթիոսին, որ արգար և զգօնաւոր կար-  
գադրութիւններով փրկեց Հռոմը:

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵՍՆ (ԿՍՐԹՍԳԻՒՆԵՑՈՑ)

ՊԵՏԵՐՍՁՄԸ:

40

Աննիբալ՝ Ադրիական ծովի մօտակայ նա-  
հանգներու մէջէն անցաւ դէպ ի Աստուլիա:  
Փարիոս միշտ ման էր դալիս նորա յետեւէն,  
այլ խոյս էր տալիս ամեն դիպուածներէն,  
որ կարող էին պատերազմ բանալ, և խոն-  
ջեցնում էր թշնամուն անընդհատ հետապն-  
դութեամբ և խուսափելով, նրան յաջողեց  
անգամ փակել հնարադէտ Աննիբալին Կաճ-  
պանիայի<sup>o</sup> սարերու մէջ, այնպէս որ Աննի-  
վախենալ, և շատ անգամ էլ հարկաւոր էր

<sup>o</sup>) Հիւսիսարևմտեան մասն Աեպոլոսոյ:

բաւ մէկ ուրիշ նոր հնարք բանեցնելով՝ հա-  
ղիւ կարաց ազատել իւր զօրքը: Զարհու-  
րելի էր այն կոտորածը, որն որ քաշեցին  
Հռոմայեցիք սլատերազմի երրորդ տարին  
(216 ամ. ֆ. ծն. առաջ): Տէրէնտիոս Վալերուսի  
և Էնիլիոս Պատուսի հիւսարատոսներու զօրա-  
վարութեան ժամանակը՝ կաննայի մօտ \*  
45,000 Հռոմայեցոց դիակուսք ծածկել էին  
սլատերազմի դաշտը: Այլ այս եղաւ Աննի-  
բալի վերջին յաղթութիւնը, բաղդը որպէս  
թէ երեսը դարձուց կարթագինեցոցմէն:

Ի հարկէ Աննիբալն էլ էր կորցրել սլա-  
տերազմներու մէջ իւր զօրքի մեծ մասը, և  
նոցա փոխարէն չէր ստանում ոչինչ զօրա-  
վիդ կարթագինէէն: Իսպանիայումը յաղ-  
թութիւններ էին անում Հռոմէական զօրա-  
պետները՝ երկու եզրաքք Պուբլիոս կուանտի-  
լիոս Սցիպիոն, և կնէոս կուանտիլիոս Սցիպիոն,  
որ երկուսն էլ մէկ սլատերազմի մէջ մեռան.  
այլ նոցա տեղը եկաւ Պուբլիոսի համանուն  
որդին հիւսարատոս քսանուեոթնամեայ Պուբ-  
լիոս կուանտիլիոս Սցիպիոն: Առաջ ինքը Աննի-  
բալը կոտրվեցաւ Նոլայի մօտ (215 ֆ. ծ.

\*) Ամմ կաննայ:



առաջ.) այնպէս որ մեծ դժուարութիւնով  
կարողացաւ մնալ Ստորին Խտալիայումը, և  
նորա կղբայրը Հաստրոփոսը՝ որ բերում էր  
նրա մօտ Խաղանիայից այնքան տարի ի զուր  
ակնկալած օժանդակ զօրքը, և արդէն յա-  
ջողութեամբ հասել էր մինչ ի Միջին Խտա-  
լիա, Միսոսթոսի՝ կշտին կատարելապէս  
յաղթուեցաւ և սարանկեցաւ (207 Ք. Տ. առաջ):

Այլ աւելի վատ եղաւ՝ երբ որ Սցիպիոնը  
Խաղանիայի երկիրը բոլորովին նուաճելէն  
յետ և Նոսիսթոսի՝ Մասինիսոսի թագա-  
ւորի հետ դաշնադրութիւն անելէն յետ՝  
Սիկիլիայէն իւր զօրքը առած անցաւ դէպի  
Ափրիկէ, անփոյթ լինելով կարթագինեցոց  
սրատերազմական զօրութեան համար՝ ինչ  
որ ունէին Խտալիայումը: Աննիրալը այժմ  
օգնութիւն հրաւիրվելով իւր տառապեալ  
հայրենիքին՝ մերկապարանոց դժկամակու-  
թեամբ և ավստասլով թողեց Խտալիան և  
նոր զօրարածնի գլուխ կանգնած գնաց  
դէպի Ափրիկա, որ Սցիպիոնին դիմագրաւ

\*) Այժմ Մետաքո՝ Մնքոնայէն ո՛չ հետի՝ Փափի իշխա-  
նութեան մէջ:

\*\*) Այժմեան Ալժիրի կամ Ճեզայերի երկիր:

լինի: Թէպէտ առաջին նուազին ուղում էին  
խաղաղութեամբ վերջացնել գործը, բայց  
Աննիրաւ չըկամեցաւ հաշտուիլ, որովհետեւ  
Սցիպիոնի պահանջողութիւնքը էին չափա-  
զանց խիստ: Չափ մօտ խմբուեցաւ վերջին  
զարհուրելի ճակատամարտը (202 Ք. Տն.  
առաջ): Հռոմայեցիք մնացին յաղթող: Ուժա-  
թափ կարթագինէն հարկադրուեցաւ հաշ-  
տութեան դաշն դնել, տալ Հռոմայեցոց՝  
Իսպանիան, իսկ Մասինիասային՝ Սփրիկայի  
մէջ լայնածաւալ երկիրներ, թողուլ Հռոմա-  
յեցոց ձեռքը համարեալ թէ իրանց բոլոր  
նաւահանդէսը և բոլոր փիղերը, և 50 տարի  
ժամանակաւ պարաւանդվիլ հատուցանել  
ճանր հարկ, և առանց Հռոմայեցոց հաճու-  
թեան չըսկսիլ ոչ ոքի դէմ պատերազմ: Սցի-  
պիոն ստացաւ Ափրիկոյ պատուանունը: Ան-  
նիրաւ վախենալով որ չըլինի թէ կարթագի-  
նեցիք տան նրան Հռոմայեցոց ձեռքը, ինչ-  
պէս որ Հռոմայեցիք էին պահանջում, մէկ  
քանի ժամանակէն յետ փախաւ իրա հայ-  
րենիքէն, և դնաց Անտիոսոյ Ստորոց թա-  
գաւորի մօտ. բայց որովհետեւ այն տեղ էլ  
ասպահով չէր Հռոմայեցոցմէն, փախաւ դնաց



Փոքր Ասիա Բիւննացոց Պրուզիոս Թագա-  
ւորի մօտ, և այն տեղ դեղակուր մեռաւ  
(183 Ք. ծն. առաջ). որովհետև Հռոմայե-  
ցիք չէին կամենում հանդարտիլ, քանի որ  
Հռոմայ այն մեծ Թշնամին կայ աշխարքի  
երեսին, և սրահանջում էին նորա ասուրն-  
ջականներէն՝ որ նրան իրանց ձեռքը մատ-  
նեն\*։ Նոյն իսկ տարումը մեռաւ նորա մեծ  
դիմամարտը Սցիպիոնը, որ Հռոմէն տարա  
գրովել էր իւր անաչառ օրէնքներով հռչա-  
կուած կատոնի ատելութեան սրտաճառաւ, և  
իւր կեանքի վերջին օրերը Սցիպիոն անցուց  
առանձնութեան մէջ իւր կալուածներումը՝  
կամոյանիայի երկրումը։

---

Հ Ս Յ Ք .

Ալէքսանդր Մակեդոնացոյ արշաւանէն յետ՝  
Պարոյրի հիմնած Հայկազանց Թագաւորու-  
թիւնը՝ Վահէի մահուամբ կործանովել էր.

---

\*) Հայոց պատմութիւնը ասում է, որ Մնկրաւ այս իւր  
Թափառական ման դալու ժամանակը՝ եկել է Հայաստան, և

և Հայաստան դառել էր Մակեդոնական կուսակալութիւն (326 թ. ծն. առաջ): Այլ Ալէքսանդրի յաջորդներու ժամանակը, երբ որ նորա մէկ զմէկու դէմ մաքառում էին, Արդուարդ Հայկազն Սիւնեաց նահապետը նշկահեց Մակեդոնացոց, և սկսաւ տիրել Հայաստանին (317: ) Նրան յաջորդեց Հրանտ՝ Սելևկիացոց իշխանութեան ներքոյ (284): Յետոյ Արտաւաղ (239: ) Սելևկիացոց թագաւոր Անտիոքոսը՝ Արտաւաղի մահէն յետ Հայաստանի վրայ դրեց իրիւր կուսակալ Մեծ Հայքումը՝ Արտաշատն, իսկ Փոքր Հայքումը՝ Չահրատն: Արտաշատ դրեց իւր արթուր Արարատ դաւառումը, Երասխ գետի վրայ. այլ Չահրատ՝ Ծովաց աշխարքումը Եփրատ գետի վրայ: Ահա՛ այս Արտաշատի մօտ էր եկել Աննիրալ, որ շինեց նորա համար Արտաշատ նոր մայրաքաղաքը (183: ) Եւ որովհետեւ կարթագինեցոց նուաճելից յետ Հռոմայեցոց անունը ամեն աշխարք հռչակիլեցաւ, և ամեն հեռաւոր և մօտաւոր

---

Արտաշատ թագաւորին տուել է Արտաշատ քաղաքի ձևագրութիւնը: Այլ թէ ո՞վ էր այս Արտաշատ Հայոց թագաւորը, յետագայ գլխեն պիտի յայտնուի:



ազգերը սկսան նոցա բարեկամութիւնը որո-  
նել, Արտաշատ ու Ջահրատ Հայաստանի  
կուսակալներն էլ Հռոմայեցոց հետ դաշնա-  
դրութիւն արին, բայց որովհետեւ Հռոմա-  
յեցիք դեռ հեռու էին, Անտիոքոս թաղա-  
ւորը մօտիկ լինելով նրանց պատժեց և  
կրկին նուաճեց (171): Արտաշատի որդին  
էր Արտաւազդ և Ջահրատի որդին Մոր-  
փիւլիկէս, որոնց օրերումը եկան Պարթեանե-  
րը, և Հայաստան Վաղարշակի հետ միասին  
ստացաւ Արշակունեաց Հայոց թաղաւորու-  
թիւնը (149): Հայկազանց այս թաղաւորու-  
թեան հարստութիւնը տեւեց հարիւր վաթ-  
սուն ութը տարի, և վերջացաւ երրորդ  
սրունիկեան սլատերազմի ժամանակը:

---

ԵՐՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵՍՆ (ԿՍՐԹՍԳԻՆԵՅՈՑ)

ՊՍՏԵՐԱԶՄ:

39

Պարթազինէին յաղթելով Հռոմը դառաւ  
հզօր տէրութիւն, որ էլ ոչ ինչ թշնամիներէ  
չէր վախենում: Համարեա՛ թէ բովանդակ

Իսապէս, Սեջիկս, Սարդինիա, Կորսիկա և Իսպանիա էին նորա իշխանութեան ներքոյ, և մինչև Ադրիական ծովի արևելեան կողմը, աժմեան Գալստիայոսն և Ալբանիայոսն Հռոմայեցիք գրել էին արդէն իրանց տիրապետութեան հիմքը: Ալբանիայի պատճառով սկսան նորա կռուիլ Մակեդոնիայի դէմ, և այս կռիւը այնպէս աջողակ էր գնում, որ այս երկրի վերջին թագաւորը Պերսէոսը անդամ ընկաւ գերի Էջիկոս Պատլոս հիւպատոսի ձեռքը, և յաղթանակի հանդիսաւեհութեամբ բերուեցաւ Հռոմ (168 թ. ծն. առաջ):

Բայց քան զայս էլ առաջ էին Հռոմայեցիք յաղթել Ասորոց Անտիոքոս թագաւորին (որոյ մօտ որ փախել ապաստանել էր Անիրալ, և որոյ կշտէն հեռանալով եկաւ Արտաշաս Հայկազն կուսակալ թագաւորի մօտ, 168 թ. ծն. առաջ): Հռոմայեցիք այնուհետև սկսան խառնուիլ Յունաց տէրութիւններու տարաձայնութեանց մէջ, որոնք որ Ալէքսանդր Մակեդոնացոյ մահէն յետ անընդհատ խռովութիւններու և աղմուկներու մէջ էին, և կամաց կամաց նրանց հպատակ շինեցին Հռոմայ:



Այս կերպով նրանց կարողութիւնը տարածվեցաւ աշխարհի երեք մասերու վրայ, բայց զօրութեան հետ միասին աճում էր և նոցա ամբարտաւանութիւնը՝ այնպէս, որ յետ ժամանակաց նոցա հպարտութիւնը էլ չէր խնայում ո՛չ մէկ աղգի էլ, ո՛ր աղգի էլ որ մէկ անգամ մօտենում էին:

Վախանձարեկ աչքով էին մտիկ անում Հոռմայեցիք և տեսնում՝ թէ ի՞նչպէս կարթագինէն վաճառաշահութեան և ապրուստի ճանտիաները գիտենալու հնարքներով նոր ուժ էր ստանում, իւր քաշած հարուածներէն հանդատանում, և կրկին սկսում է ծաղկիլ. նորոգվեցաւ նոցա սրտի մէջ հին նախանձը, և այնքան ժամանակ չբարատվեցաւ նոցա մէջէն և չթողեց նրանց հանգիստ, մինչև որ սպառասլուռ չըջնջվեցաւ թշնամին, որմէն որ այնքան վախենում էին:

Թէպէտ կարթագինեցիք շատ ճիշդ էին կատարում վերջին դաշնադրութեան սլայմանները, և խուսափում էին ամեն բանէն, որն որ կարող էր պատճառ դառնալ նոր պատերազմի բացուելուն, սակայն Հոռմայեցիք մէկ անգամ մտքերումը դրել էին

աղատուիլ այն վտանգաւոր ակտիւնէն. և  
ով որ ուղենայ կռիւ դուրս բերել, նա շուտ  
էլ կը գտնէ կռիւի սրտաճար: Նուիրացոց  
թագաւորը Մասնիկոս խլել էր կարթագի-  
նեցոց տէրութեան կալուածներու մէկ մասը,  
և Հռոմայեցոց դեսպանները անիրաւու-  
թեամբ վճռեցին, որ այն յափշտակած հողը  
պիտի մնայ Նուիրացոց ձեռքը: Կարթա-  
գինեցիք ներանալով այս անիրաւութիւնէն  
երբոր Նուիրացիք միւս անգամ էլի սկսան  
ուրիշ կալուածներ յափշտակել կարթագի-  
նեցոց ձեռքէն, — կարթագինեցիք զէնք առին  
ձեռքերը: Այս բաւական սրտաճար էր Հռո-  
մայեցոց՝ թշնամութիւն սկսելու համար:  
Հռոմայեցոց զօրքը կարթագինէի մօտ ցա-  
մաք դուրս եկաւ (149 թ. Տն. առաջ) Ափ-  
րիկէի հողի մէջ, և սկսան սրահանջել՝ որ  
ամեն զէնքերը տան նրանց ձեռքը: Կար-  
թագինեցիք հնազանդուեցան ու տուին:  
Այն ժամանակը դուրս հանուեցաւ այն զար-  
հուրելի դատակնիքը՝ որ կարթագինէն կոր-  
ծանուի, և բնակիչքը մէջէն դուրս գան և  
նոր ի նորոց բնակութիւն հիմնեն այն եր-  
կրի ներքսակողմը (որ ծովէն հեռու լինի)



Յուսահատութիւնը պաշարեց այս թշուա-  
ռականներուն: Անհաւատալի ջանահնարու-  
թեամբ պատրաստեցին նոր զէնք ու նոր  
կաղմուածք, որ կարողանան դաւաճան թշնա-  
մուն վերջին ընդդիմադրութիւնը անել, որ  
արդէն պաշարել էին քաղաքը: Քանի ան-  
գամ Հոռմայեցիք արշաւեցին քաղաքի վրայ.  
Կարկեղոնացիք վանեցին նրանց: Երեք տարի  
անդադար պատերազմեցան, և միայն չոր-  
րորդ տարումը յաջողեց Էմիլիոս Պաւլոսի  
որդուն, որին որ Մեծն Սցիպիոն որդեգիր  
էր ընդունել, և անուն էր տուել Սցիպիոն  
Ափրիկեցի (կրտսեր), յաղթել այս յուսահա-  
տութեամբ պատերազմողներուն: Եօթն օր  
տևեց ոգորումն և մաքառումն քաղաքի փո-  
ղայներու մէջ. բնակիչներն շատերը իրանք  
իրանց էին գձում կրակի մէջ ու այրվում:  
Յաղթողները 50,000 հոգի գերի տարան.  
Կարթագինէն դարձաւ մէկ մոխրակոյտ:

Նոյն տարին (146 թ. ծն. առաջ) Յոյնք  
էլ յետ սակաւատև ոգորմանց ընկան Հոռ-  
մայեցոց իշխանութեան տակ, և կորնլուս որ  
Յունաստանի շքեղաշուք քաղաքն էր՝ նոյն  
ժամանակներումը հիմնայատակ կործանվե-

ցաւ Մոսկոս Տիւրքացի ձեռքով: Աւերի-  
կայի Տիւրքացին ծովեզրը, Յունաստանը և  
յետ այնորիկ շուտով Մակեդոնիան՝ դարձան  
Հռոմէական նահանգ: Նոյն իսկ վիճակին Տա-  
սաւ փոքր Ասիայի մեծագոյն մասը 16 տարի  
անց-կենալէն յետ:

40

ՅՈՒՆՆԻՆ ԵՂԵՄԻՆԵՆՆ ՄԱՐՏԸ ՀՌՈՄՅՆ.  
ՍԻԼԼՍ ԵՒ ՄԱՐԻՈՍ:

Հռոմայեցոց զօրութիւնը և ճոխութիւ-  
նը քանի գնում էր՝ աճում էր, որովհետև  
չատ հեռաւոր և մօտաւոր տէրութիւններ,  
ազգեր և երկիրներ հըստատակում էին  
նրանց, և նոքա էլ ամեն դրաւած նահանգ-  
ներէն բերում էին դէպի Հռոմ մեծ մեծ  
աւարներ: Շատ էր այս կերպով ճոխացած-  
ներու թիւը, որ ըստ մեծի մասին զօրա-  
վարներու և նահանգաց կուսակալներու ազ-  
գատոհմերէն էին. սոքա բարդում դիզում  
էին անբաւ գանձեր, շինում էին մեծակա-



ուոյց ապարաններ, ստանում էին գեղեցիկ  
կալուածներ և սրահում էին հարիւրաւոր  
և հազարաւոր ծառաներ: Այլ ճոխութեան  
և շքեղութեան հետ միասին մեծացաւ բար-  
քերու եղծմունքն էլ: Ընչաքաղց ագահու-  
թիւնը դառել էր համարեա՛ թէ ընդհանուր  
և համատարած մոլութիւն. ամեն մարդ  
ցանկանում էր պարանոցաթաղ ընկղմիլ մե-  
ծամեծ բարեաց վայելչութեան մէջ: Հայրե-  
նեաց ճշմարիտ սէրը հաղիւ էր երևում  
ուրեք ուրեք, նորա տեղը բռնել էր սնտոխի  
փառամոլութիւնը կամ գահասիրութիւնը:  
Չքաւոր խաժամուժի բազմամբոխ խուժա-  
նը՝ փողի համար յօժարում էր ամեն գոր-  
ծի էլ ձեռնամուխ լինել. և տէրութեան  
երևելի գործակալները անգամ սրտորաստ  
էին կաշառարեկ դառնալ և փող տուողի  
կամքը կատարել:

Մենք արդէն գիտենք՝ որ հին ժամա-  
նակներումը քաղաքացիներու դասակարգը  
(պէ՛հէ՛յ) ոտքի էր կանգնել երևելիներու  
(պապիկներու) հարստահարութեան դէմ, և  
այս եղել էր պատճառ խռովութեան Հոռ-  
մայ մէջ: Ստորակարգ ժողովուրդը իւր պա-

Տանջները յամառ սնդելով այնպէս էին արել, որ սլէքէացիք համաչափ հաղորդակից էին դառել տէրութեան տեսչութեան մէջ, և սլաւոփիկներու և սլէքէաց իրաւունքներու մէջ զանազանութիւնը անհետ էր եղել. այլ այն օրերէն սկսած ոմանք ստացել էին անչափ ճոխութիւն. և այս հարուստներու մէջէն ոմանք էլ գործ էին ածում իրանց գանձը այն նպատակի համար, որ աղքատներու սէրը որսան, սիրտերը դրաւեն, որ նրանց կաշառած ունենալով՝ կարողանան տէրութեան տնտեսութեան պաշտօնները ձեռք բերել, և բոլոր իշխանութիւնը իրանց ամբողջաբերել: Այսպէս քիչ քիչ կազմուեցան կուսակցութեան սլաւոփները (պարպիս), որ մէկ զմէկու հետ տարաձայն գտնվելով կրօնաւորում էին տէրութեան ծայրագոյն պաշտօնների համար, և այս վէճերը վերջապէս դառան յայտնի ազգամիջեան սլաւոփազմունք, որ անպատմելի նեղութիւններու պատճառ եղան ժողովրդեան համար:

Այս երկպառակութիւններու առաջին օրինակը տուին Մարիոս և Սեւակ: Սոքա երկուսը մէկ զմէկու դէմ դժգոմսեցան Նո-



Պրոպոզիցիոն թագաւորի՝ Յոգոստիանոսի դէմ՝ մղած պատերազմի ժամանակը, և այն օրէն սկսած մահու շափ տանցին մէկ զմէկու: Մարտի տեղի վրայ զոհուած մէկ անկիրթ և սուր մարդ, այլ լաւ զինուոր, որ հայրենեաց մեծ մեծ երախտիք էր ցոյց տուել Կիսթոսիոսի և Թէոֆիլոսիոսի դէմ ունեցած պատերազմներու միջոցը, և արդէն վերջ անգամ հիւսպատոս էր նստել:

Սիւլլա՝ սորա հակառակ՝ էր երևելի ցեղէ, հրահանգուած մարդ, և իւր խելքով հաշակուած զօրասկտ: Երկուսն էլ միօրինակ էին փառամուտ, իրանց հակառակորդներու դէմ անհաշտ ատելութեամբ վառված և անգութ: Սիւլլա՝ երբ որ ընտրուեցաւ հիւսպատոս՝ պիտի (88 ամօք Ք. ծն. առաջ) տանէր Հռոմայեցոց զօրքը Միկոստիոսի Պոնտոսի եկրի թագաւորի դէմ (որ Փոքր Ասիայի հիւսպատոսի ծովեզերքումն էր), այլ Մարտիոս՝ իւր կողմը ունենալով ռամկաց խուժանը, նոցա օգնութեամբ՝ բռնութեամբ դուրս քշեց Հռոմէն Սիւլլայի համախոհներուն, և հարկադրեց ամենուն որ այս պատերազմի զօրավարութիւնը իրան յանձնեն:

Այն ժամանակը Սիւլլան-էլ իւր զօրքով  
սխալուց մտաւ Հոռմ քաղաք և ստիպեց  
Ծերակուտի Սինկլիտոսին՝ որ Մարիոսին և  
նորա բարեկամներուն օրէնքից դուրս հրա-  
տարակեն\* :

Դեռ ևս հազիւ թէ Սիւլլան իւր զօր-  
քով ոտքը դուրս էր դրել Հոռմէն, մէկ-էլ  
տեսնես որ՝ Մարիոսը՝ որ մէկ յաջողակ դի-  
պուածով իւր գլուխը փախցրել էր դէպի  
Ափրիկէ, և նորա համախոհ բարեկամը Յին-  
նան (Կիննա) նորա համար զօրք էր բերել,  
յարձակեցաւ անդէն ու անսխալաբար Հոռ-  
մայ վրայ, և հինգ օր շարունակ մատնեց  
այն վատարազդ քաղաքը անողորմ յափշտա-  
կութեան և կոտորածի. որոյ սխալմաստ  
մէկ Սէրատիոս անունով մարդ-էլ կոտորեց  
մէկ գիշերվան մէջ մինչև 4,000 ստրուկ, որ  
այն բարբարոս (Մարիոսի) ձեռին դահիճ  
էին դառել: Այսպիսի կոտորուածքներու  
սխալի ընտելանար Հոռմը:

\*) Ավոր օրէնքից դուրս էր լինում հրատարակած, նրան  
որ ոք չունէր հրաման հերքնկալութիւն անել, կամ պաշտ-  
պանութիւն զոյց տալ, և ամեն մարդ կարող էր նրան սպա-  
նել առանց պատժի:



Մարիտոր ինքն իրան ինքնակամ ընտրեց  
Տիւպատուս. բայց երեք շաբաթից էլ սլա-  
կաս վայելեց այս սաշտոնի պատիւը. արբ-  
շիւրը շուտ մեռաւ (86 տարուլ Ք. ծն. առաջ):

Սէկ քանի տարիէն յետոյ Սիւլլա յետ  
էր դառնում Ասիայէն, և յոխորտում էր՝ որ  
իւր թշնամիներէն պիտի իւր վրէժը սլա-  
Տանջէ: Ի զուր էին նորա Տակառակորդ-  
ները նորա դէմ մեծ մեծ զօրքեր կանգնեց-  
նում. այն զօրքերը ջարդվեցան. Տաղարա-  
ւոր անդէն մարդիկ անողորմաբար կոտոր-  
վեցան, և ինչպէս որ Մարիոսի ՏամախոՏ-  
ները կասկածում էին և վախենում, իսկ այն-  
պէս էլ Սիւլլա մտաւ Հռոմ:

ՕարՏուրելի էր այն արիւնհեղութիւնը,  
ինչ որ արաւ Սիւլլա Հռոմայ մէջ. նա ոչ  
մէկ Տակառակորդի էլ չըխնայեց, և մնացած  
Իտալիան-էլ զգում էր խստասրտացած յաղ-  
թականի բռնակալութիւնը, որովհետև իւր  
զինուորների մտերիմ ծառայութեան փոխա-  
րէն նա նրանց բաշխեց իւր մեռած կամ  
տարադրած դիմամարտներու կալուածները,  
մինչև բովանդակ իսկ քաղաքներ. և սրա-  
մով գլորեց աղքատութեան անդունդներու

մէջ անհամար գերդաստաններ: Վերջապէս  
Հռոմը հանդարտուեցաւ, և Սիւլլայի վրէժ-  
խընդրութիւնը զովացաւ:

Սիւլլա բռնադատեց, որ նրան քիչատու  
ընտրեն, մէկ քանի լաւ լաւ կարգադրու-  
թիւններ սարքեց. բայց երեք տարիից յետ  
(79 ամ Ք. ծն. առաջ) իւր վրայէն յետ  
դրեց ամեն տէրութեան գործերը, և մե-  
կուսացաւ իւր կալուածները, ուր որ անձ-  
նատուր լինելով սաստիկ գետնաբարշտ ան-  
ժուժկալութեան, նորա հետեանքներով իսկ  
էլ մեռաւ միւս տարին:

41

ԵՐԿՐՈՐԴ ՍԶԴՍԻՔԵՆ ՄԵՐՑ ՀՌՈՄՈՒՄԸ.  
ԿԵՍԵՐ, ՊՈՄՊԵՅՈՍ ԵՒ ԿՐԵՍՈՍ.

Սիւլլայի յաջողութիւնը շուտով շարժեց  
ուրիշ երևելի մարդկերանց-էլ՝ Հռոմումը  
նոյն փորձը փորձել, և բռնութեամբ իշխա-  
նութիւն ձեռք գծել: Շատ անգամ արիւնը  
ջրի նման թափուեցաւ վազեց խտալիայի  
միջումը:



Աւելի սարսափելի էր մէկ յանդուգն եղևնազորի՝ կասկէնայի դիտաւորութիւնը (63 տարի Ք. Տն. առաջ), որ ուղում էր Հռոմը կրակ տալ, տէրութեան ազնիւ մարդոց կոտորել, և երկրին տէր դառնալ: Հռոմ փրկուեցաւ միայն Վիլլերոն մեծ ատենարանի իմաստութեամբ և արիութեամբ, որ մերկապարանոց արաւ այս դաւաճանութեան խորհուրդը, և իւր խելօք և ուժեղ կենցաղավարութիւնով խափանեց այն շար դիտաւորութիւնը՝ որ գլուխ չեկաւ:

Աւելի նշանաւոր և աւելի աջողակ գըտընվեցան իրանց հայթայթանքի մէջ միւս երեք անձինքը՝ Պոմպէոս, Կեսար և Կրասոս:

Պոմպէոս՝ որ արդէն հըռչակուած էր ինչպէս քաջ զօրավար, և ցոյց էր տուել հայրենեաց մեծ մեծ երախտիք՝ երևելի պատերազմներու աջողակ վերջաւորութեամբ, (որովհետև իսպառ նուաճել էր իտալիայումը ստրուկներու ապստամբութիւնը, ընաջինջ էր արել միւս վտանգաւոր վտարանջութիւնը Իսպանիայի մէջ, գրեթէ անհետ էր արել Միջերկրեայ ծովի վերայ աւազակներուն, կատարելապէս վա-

նել էր Միհրդատին, և Հռոմայեցոց իշխա-  
նութեան տակ էր գրաւել Պոնտոսը, Ասո-  
րիքը և Հրէաստանի երկիրները.) այնքան  
անափառութիւն ունէր, որ կարծէր իրա  
համար թէ Հռոմայ մէջ մէկ մեծ ոմն է, և  
թէ ունի լիակատար իրաւունք սրահան-  
ջել՝ որ տէրութեան ծայրագոյն իշխանու-  
թիւնը նրան յանձնուի:

Կտոր գոլով քան զլոկ ղօրաւարը շատ  
աւելի, իմաստութեամբ և փառամոլու-  
թեամբ գերազանց էր քան զ Պոմպէոսը:

Արատս մեծամտովմ էր միայն իւր ան-  
համար ճոխութեամբ՝ որ հաւաքել էր  
ազահութեամբ, և ցանկանում էր ղօրանալ  
իշխանութեամբ-էլ, միայն այն մտքով՝ որ  
աւելի փարթամութիւն շատայնէ: Քայց շու-  
նէր ոչինչ արժանաւորութիւն՝ ոչ մարդա-  
վայել և ոչ ղօրապետի սխառչաւ:

Այս երեք մարդոցմէն իւրաքանչիւրն-էլ,  
թէպէտ և հասել էին տէրութեան ծայրա-  
գոյն կարողութեան սրաշտօններուն, ցան-  
կանում էին իրանց յարգը, իրանց սխառիւր  
բարձրացնել միւսներէն աւելի վեր, իւրա-  
քանչիւրը ունէր իւր համար առանձին հա-



մատոհմ հուսակիցներ, որ նրան զօրավիգ  
էին լինում. այլ զարմանալի է, որ այս երեք  
ախոյեանքը առաջին նուագին ծածուկ միա-  
բանուեցան (60 ամ ֆ. ծն. առաջ) և խոս-  
տացան մէկ զմէկու օգնել իրանց դիտաւո-  
րութիւնը առաջ տանելու համար:

Սորա հաւասար բաժանեցին իրանց մէջ  
Հռոմայ տէրութիւնը, որովհետեւ ամեն մէկն  
էլ յոյս ունէր՝ թէ այսպէս իւր իշխանու-  
թիւնը աւելի կարող է զօրացնել, և յետոյ  
աւելի հեշտութեամբ է կարող միւսներուն  
հանել, և քան զամենը հըօր լինելով՝ կար-  
ող է տէրութիւնը մէնակ կառավարել իւր  
կամքով: Այս դաշնակցութիւնը, որ յետոյ  
շուտով հրատարակուեցաւ՝ անուն ստացաւ  
Տրեյնաւիրատ (Triumvirat, եռապետութիւն,  
երեք արանց դաշն):

Արտառ ստիպեց որ նրան ընտրեն կու-  
սակաւ Վերին Իտալիայի (Յիզաւլայնեան  
Քալիիա) թէ և հսկառակ ամեն իրաւանց՝  
հինգ տարի ժամանակով. և այս միջոցէն՝  
որ յետոյ տասը տարիի դարձաւ՝ այն օգուտը  
քաղեց, որ Հռոմայ նահանգ շինեց մերձա-  
կոյ Ծրանսիա երկիրը (Քաղղիա կամ Քալ-

լիա), որ այն ժամանակներումը ունէր իւր մէջ բնակուած բազմաթիւ կերտեան և Պերմանական շատ աղբեր, և այս միջոցումն էլ ուզում էր ճոխանալ, որ կարողանայ ոչ թէ միայն իւր մեծ մեծ պարտքերը հատուցանել, որովհետև ժողովրդեան սիրտը գրաւելու համար նա իւր մեծ ճոխութիւնը զոհել էր մեծ մեծ պարգևներ տալով, այլև մէկ կողմը դնել միլիոնները, որ նոցա օգնութեամբ գտնէ հնար բարեկամներ ստանալու:

Պոմպէտը անշարժ մնաց Հռոմումը՝ որ ինչպէս ինքն էր կարծում, անկասկած կարողանայ աւելացնել իւր յարգը, և իրաւի որ ժողովուրդն էլ, տէրութիւնն էլ կառավարում էր ինչպէս որ ինքն էր ուզում: Նա թէպէտ և ստացել էր խստանիայի կուսակալութիւնը, բայց թոյլ էին տուել նրան՝ որ կենայ Հռոմումը, որ այնպէս անհնար էր, ինչպէս էլ որ կեսարի տասը տարի կուսակալ մնալը Քալլիստոսը:

Արասոս ընտրեց Ասիայի կողմի պատերազմը, որովհետև արևելքի ճոխութիւնները քաշումէին նորա ագահութիւնը և նա



առաջ Երուսաղէմի տաճարը կողոպտեց\*,  
յետոյ սկսաւ Պարթևաց դէմսլատերազմիլ (այժ-  
մեան Միջագետքումը, Mesopotamia, Քիւր-  
դիստանումը, Տաճկաց երկրումը). այլ այն  
գաւառի անաստատներումը՝ որովհետեւ թըշ-  
նամիք աւելի էին ուժով, կորցրեց իւր բո-  
լոր զօրքը և ինքն էլ սպանուեցաւ (53 տարի  
Ք. Տն. առաջ):

Այնուհետեւ մնացին դէմ ու դէմ միայն  
Կեսարն ու Պոմպէոսը: Շուտով պիտի  
վճռվէր, թէ նրանցմէն ո՞րը պիտի մնար  
յաղթող: Պոմպէոսի բարեկամները կարողա-  
ցան համոզել Մերակուտին, որ նա հրա-  
մայէ Կեսարին՝ Հռոմ վերադառնալ: Եթէ  
հնազանդվէր Կեսար, նորա բոլոր իշխա-  
նութիւնը պիտի կորչէր, և Պոմպէոսը պիտի  
մնար Հռոմէական տէրութեան հրամանա-

---

(\*) Արասոսի արշաւանի և մահուան համար Մուկս Խո-  
րենացին էլ է գրում համառօտ, թէ «Արասոս անցեալ ընդ  
Եփրատ գետ՝ սատակի զօրօքն հանդերձ, զորոյ զգանձս ժո-  
շովեալ Տիգրանայ՝ գառնանայ ի Հայս»: Իսկ ուրիշ պատմիչք  
նորա մահուան և յուղարկաւորութեան հանգամանքն էլ են  
գրում:

տար: Այս պատճառաւ Կեսար մտքումը որոշեց փորձ փորձել ուժով ստանալ այն, ինչ որ չէր կարողանում ձեռք դնել խոհեմութեամբ:

Այն զօրքով որ քաջափորձ էին, և սրբտեսանդ մտերիմ իրանց քաղցրահամբոյր և առատաձեռն զօրավարին, Կեսար անակնկալ սահմանադուրս Ռոմէն գետէն անց կենալով դուրս եկաւ իւր նահանգէն (49 տարի Ք. ծն. առաջ), և դեռ ևս նորա հակառակորդը չէր սթափուիլ, և ահա (Կեսար) հասաւ կանգնեցաւ Հռոմայ առջև, այնպէս շուտ, որ Պոմպէոս և նորա հետ միւսին բոլոր ծերակոյտը փախան դէպ ի Ստորին Իտալիա: Կեսար էլ նոյնպէս սրընթաց էր վազում Պոմպէոսի յետեւէն: Քաղաքները և գաւառները յօժարութեամբ էին հնազանդվում այն հեղահամբոյր յաղթականին, որ ոչ պատուհաս էր մտքէն անց կայնում, ոչ էլ տարագրութիւն: Այսպէս նորա զօրքը և նորա համախոհներու թիւը օրեցօր աւելանումէր:

Կեսար նրամով-էլ շատացաւ, որ մէնակ Պոմպէոսին քշեց Իտալիայէն, և Պոմպէոս



Աղբիական Ծովէն անց կացաւ միւս երես: Կե-  
սար առաջ գնաց Հոռմ, և այն տեղ տիրա-  
պետեց տէրութեան գանձարանին, յետոյ  
շտապեց երթալ դէս ի Կասանիա, ուր որ  
հաւաքուած էին նորա դիմամարտի դիւա-  
ւոր զօրութիւնքը, ջարդեց նրանց, վերա-  
դարձաւ դէս ի Հոռմ, հարկադրեց որ իրան  
առաջ ընտրեն զԷփրատը, յետոյ հիւսկատոս,  
և հապճեալ դիմեց Պոմպէոսի յետեից: Պոմ-  
պէոսը Յունաստանումը և Մակեդոնիայումը  
ժողովել էր շատ զօրք. այլ իսպառ ջարդ-  
վեցան նոքա միւս տարին (48 ամօք Ք. ծն.  
առաջ), Փարսակայի մօտ՝ Թեսսալիա Գաւա-  
ռումը, և Պոմպէոս հարկադրուեցաւ փու-  
թապէս թողուլ Յունաստանը, և փախչիլ  
դէս ի Եգիպտոս, ուր որ յոյս ունէր ասպա-  
հովութիւն գտնել. բայց այն երկրի թա-  
գաւորը Պտղոմէոսը, որ վախենում էր հզօր  
յարթականէն (Կեսարէն), հրամայեց սպա-  
նել նրան դեռ ծովափը չըհասած: Այսպէս  
վախճանեցաւ այն երեք անձինքի երկրորդն  
էլ, որ ուզում էին տիրապետել Հոռմին:  
Պոմպէոս գոլով յղփացած փառասիրու-  
թեամբ և բարձրամիտ գաղափարներով,

յառանի վտանգաւոր էր իւր հայրենեացը  
համար. այլ համանգամայն սյնքան բարե-  
տոհմիկ էր, որ բնաւ չէր կարող երբ և իցէ  
դառնալ կամ Մարիոս կամ Սիւլլա. կե-  
տարը սուգ արաւ իւր մեծ դիմամարտի  
թախծադին մահուան վրայ և դաւաճանող  
թագաւորը շրտացաւ այն սլարդեր, ինչ-որ  
ակնկալութիւն ունէր ստանալ:

Եւ այց կեսար-էլ մնաց սլաշարուած Եգիպ-  
տոսումը ինն ամիս թագաւորի զօրքէն շուրջ  
սրտած Աղէքոանդրիայի մէջ, մինչև որ  
(Փոքր Ասիայի) Պերգամա քաղաքի թագա-  
ւորի գալը չըփրկեց նրան:

Յետ այնորիկ կեսար գնաց Ասիայի կողմը,  
վերջացուց այն տեղ նոր բացուած սրտե-  
րազմները և վերադարձաւ Հռոմ, ուր երբ-որ  
Ծերակուտէն ընտրուեցաւ իշխանապետ (պրի-  
մառ) ցոյց տուեց մեծ ու չափազանց հե-  
ղութիւն: Այլ Պոմպէոսի համախոհները  
գեռ շատ հզօր էին իսպանիայումը և Աֆ-  
րիկայումը, և հարկաւոր էր՝ որ նա դէտ ի  
այն կողմերը արշաւան սկսի, և այն տեղ-էլ  
յաղթեց կեսար՝ ի հարկէ շատ արիւնայեղջ  
սրտերազմներից յետ և նուաճեց երկու եր-



կիրն-էլ: Այնուհետև էլ չքմաց նորա դէմ  
թշնամի: Վերադարձաւ դէպի Հոռմ, սար-  
քեց մեծաշուք յաղթանակի հանդէս և Յե-  
րակոյտը թափեց նորա վրայ ամեն սրատի-  
ները: Կեսար վեհանձնութեամբ ներեց հա-  
մարեալ թէ իւր ամեն հակառակորդներուն,  
մեծ հոգունակութեամբ սկսաւ ամեն տեղ  
ուրբի վերայ կանգնեցնել խանգարուած կար-  
գերը, հրատարակեց իմաստուն օրէնքներ  
և շատ լաւ կարգադրութիւններ արեց, այն-  
պէս որ՝ Հոռմի համար լաւ էր այնպիսի տի-  
րապետողը: Քայց շատերն-էլ կային, որ ի-  
րանց կարծում էին նրամէն ոտնակոխ ե-  
ղած և անդոսնուած, կամ չէին կարողանում  
համբերել, որ նախկին ազատ Հոռմի տէ-  
րութիւնը մէկ մարդու կամքով անձնիշխա-  
նաբար կառավարվի. և աւելի դժկամակու-  
թիւն սրտաճառեց և շարժեց այն համբաւը,  
երբ-որ լսուեցաւ թէ Կեսարը կամենում է  
արքայական սրատուանուն առնուլ իւր  
վերայ: Երկու յանդուգն անձինք՝ *Բրոտոս*  
և *Կասիոս* ծածուկ դաւաճանութեան սր-  
տադլութիւն կանգնեցան, և Կեսար խողխո-  
ղուեցաւ այս երկու խարդաւանողներու ձեռ-

քով Յերակուտի մէկ ժողովքի մէջ (44 ամօք Բ. ճն. առաջ):

ԵՐՐՈՐԴ ԵԶԳԵՄԻՋԵՆ ՊԵՏԵՐՍԶՄ.

ՕԳՈՍՏՈՍ ԵՒ ԵՆՏՈՆԻՈՍ:

42

Հաղիւ թէ կեսար փշել էր իւր վերջին շունչը մարդասպաններու սուրբի տակը, որ արդէն դուրս երևեցան ուրիշ փառասէր մարդիկ, որ ցանկանում էին նոցա տեղերը բռնել, որովհետև փորձերով ճանչցել տեղեկացել էին, որ Հռոմայ մէջ խելքով ու ուժով ամեն բան կարելի է գլուխ բերել: Ժողովուրդը՝ որին-որ այս նոր սպանած իշխանը շատ առաջ էր իւր կողմը քաշել առատաձեռնութեամբ, աւելի զարհուրեցաւ նորա մահով, քան թէ ուրախացաւ:

Ենտոնիոս՝ որ կեսարից պակաս չէր ձրկաւում դէպ ի ծայրագոյն իշխանութիւնը, ամեն կերպով ջանք էր անում գրգռել ժողովուրդին դաւաճանների դէմ: Բայց աւեր



լի էր ամբողջին ալէկոծում և աղմկում Կեսարի ժառանգը, նորա քրոջ թոռնը Հոնորիոս Կեսարը, որ այն ժամանակը դեռ մէկ տասնութինը տարեկան դեռահասակ սրտանի էր, բայց շատ հնարագէտ, որ քան զամենը առաջ մեծ մեծ ու ճոխ պարզեաներով իւր կուսակից արաւ զօրքը, և Կեսարի կրտակի մէջ նշանակած դրամների կշիռները ժողովուրդի մէջ առատ առատ բաժնելով ամբողջին-էլ շինեց իրան համախոհ, և այս հնարներով հիմնեց իւր յարգութիւնը:

Անտոնիոս արշաւանք դուրս եկաւ Բրուտոսի և Կասսիոսի դէմ, որ հեռացել էին դէպի Հիւսիսային Իտալիա: Ծերակոյտն-էլ ուղարկեց Հոկտաւիանոսին, որ օգնութիւն անէ Բրուտոսին ու Կասսիոսին՝ Անտոնիոսի դէմ: Հոկտաւիանոս ջարդ ու փշուր արաւ Անտոնիոսի զօրքը Մակեդոնի կշտին (այժմ Մօրէնի), ք. ճն. 43 տարի առաջ) և իւր զօրքը հետը տաւ՝ գնաց Հռոմ և հրամայեց որ իրան Հիւպատոս ընտրեն:

Բայց այսքան անցքերից յետ Հոկտաւիանոս (որ իւր պատու սպանողներին օգնել էր, և Անտոնիոսի դէմ, որ Յուլիոսի մա-

Տու Տամար իբր թէ վրէժխնդրութիւններ էր անում, այնպէս սաստիկ կռիւներ ունեցաւ) երբ-որ տեսաւ թէ Անտոնիոս և Լեւիդոս շատ զօրք ունին իրանց ձեռքերումը, նրանց հետ միաբանուեցաւ, որ նրանց ձեռնտուութեամբ կեսարի թշնամիներուն նուաճէ. (Երէբ որ Եւստակիոս Եւստակիոսն): Այնուհետև այս երեքը սկսան շախազանց անողորմութեամբ հալածել իրանց հակառակորդներուն: Հաղարաւոր երևելի Հռոմայեցիք սրախողխող կոտորուեցան սոցա ակնարկութեամբ, և նոցա ստացուածքը յափշտակուեցան: Սպանուածներն մէջ կար նոյնպէս և նշանաւոր և բազմերախտ կիկերոն ատենարանը, որ իւր ճշմարտախօսութիւնով շարժել էր իւր դէմ խորամանկ Անտոնիոսի ատելութիւնը: Յետ այսորիկ Անտոնիոս և Հոկտաւիանոս պատերազմ բացին Քրուտոսի և կասսիոսի դէմ, որ մեծ զօրք ունէին Մակեդոնիայումը, և յաղթեցին նրանց Փիլիպպէի մօտ (Ք. ճն. 42 տմ առաջ): Հռոմայ աղատութեան այս երկու պաշտպանքն-էլ ընկան այն սրատերազմի մէջը:

Սրանից յետ այն երեք մարդիքը



Անտոնիոս, Հոկտաւիանոս և Լեպիդոս,  
(ինչպէս որ մէկ ժամանակ արեւ էին կեաս-  
րը, Պոմպէոսը և կրասոսը) բաժին բաժին  
արին իրանց մէջ Հռոմայ տէրութիւնը: Ան-  
տոնիոսը ստացաւ արևելեան կողմը (Ասիա,  
Յունաստան և Եգիպտոս), Հոկտաւիանոսը՝  
արևմտեան կողմը (Իտալիա, Իսպանիա և  
Քալլիա), իսկ Լեպիդոսը՝ Սփրիկէն: Այլ  
որովհետև Լեպիդոսը մէկ թոյլ մարդ էր և  
քնաւ չըկարողացաւ մէկ պատուի տիրանալ,  
վերջապէս Հոկտաւիանոսի ձեռքով զրկուե-  
ցաւ իւր իշխանութենէն: Չկնի այսորիկ մը-  
նացին երկու ծայրագոյն իշխանք հռոմէա-  
կան տէրութեան մէջ՝ Անտոնիոս և Հոկտա-  
ւիանոս և իւրաքանչիւրն-էլ ծածուկ մըտա-  
ծում էր միահեծան իշխանութիւնը ձեռք  
բերել: Այլ այս յաջողեց հնարագէտ Հոկ-  
տաւիանոսին:

Անտոնիոսը ըստ մեծի մասին կենում էր  
Եգիպտոսումը, ուր այնքան սաստիկ սիրա-  
հարուել էր Կլէոպատրայ թագուհւոյն,  
որ ինքնագլուխ նրա որդւոցը թագաւոր  
էր կարգել Հռոմայեցւոց նահանգ համա-  
րում իրենցով՝ Ասորիքի և Հայաստանի

վերայ: Եւ որովհետեւ Հոկտաւիանոսը ամ-  
բաստանել էր Յերակուտի առջև Անտոնի-  
ոսին այս արարմունքին համար և դատա-  
պարտել էր ինչպէս հայրենեաց թշնամի,  
Անտոնիոս պատերազմ հրատարակեց Հոկ-  
տաւիանոսի դէմ: Երկուսն-էլ արշաւան հըռ-  
չակեցին և դուրս եկան իրար առջև: Ա. 4-  
ցի Կ. Ը. Հրուանդանի մօտ (որ այժմեան  
Առնաւուտի, Ա. Լ. Կ. Կ. Երկրումն է)  
խմբուեցաւ ծովամարտ, որոյ մէջը Անտո-  
նիոսի նաւատորմիդը բնաջինջ կորաւ (Ք. ծն.  
31 տարի առաջ.) և նորա զօրքը, որ կան-  
դնած էին մերձակայ ծովեզերքումը, այս  
պատերազմից յետ շուտով անձնատուր ե-  
ղան: Ինքն Անտոնիոս փախաւ Կլէոպատրաի  
մօտ դէպի Եգիպտոս, և այնտեղ անձնա-  
սպան մեռաւ յաջորդ տարումը: Կլէոպատ-  
րան-էլ, որ դուր ջանք էր անում դէպ ինքը  
որսալ Հոկտաւիանոսին, նոյնօրինակ մահ  
նիւթեց ինքն իրան:



ՀՌՈՄԱՅԵՅՈՑ ԿԱՅՍԵՐԳ ՕԳՈՍՏՈՍԻ ՏԱՆԻՆ՝

43

Ինչպէս որ մէկ անգամ Հռոմայ Մերա-  
կոյտը կեսարի ժամանակը հնազանդուեցաւ  
նրան, այնպէս էլ հնազանդ գտնուեցաւ Հոկ-  
տաւիանոսին, որին կեղծաւորութեամբ յըզ-  
փացած միջոցը յանձնեց տէրութեան բո-  
լոր ծայրագոյն իշխանութիւնները՝ առաջ  
մէկ քանի տարի ժամանակակէտով, յե-  
տոյ՝ մինչև որ քան որ կենդանի է, և ընծա,  
յեց նրան Օգոստոս պատուանունը (Augustus,  
արժանապատիւ), որ այնուհետև դառաւ  
նրա սովորական մականունը. նոյնպէս և  
նորա ժառանգներուն սկսան կեսար անուա-  
նել: Քիչ քիչ սովորեցան Հռոմայեցիք  
նրա վրայ այնպէս մտիկ անել, ինչպէս որ  
թագաւորի վրայ, և նորա հրամաններին  
հալատակում էին թէ ճերակոյտը և թէ  
ժողովուրդը: Կրաւի, այս տէրութեան բա-  
րերազդութիւն դառաւ, որովհետև եթէ  
Օգոստոս իւր վրայից դէն դնէր իշխանու-

Թիւնը, առանց երկրայութեան ուրիշ փառամոլներ պիտի նրա տեղը բռնէին և պիտի սկսէին նոր նոր քաղաքական պատերազմունք: Այլ այժմ ամեն տեղ հանգիստ էր:

Օգոստոս՝ որ ձեռք դնեց իշխանութիւնը հնարներով, և նաև անգթութիւններով, այն ստացած իշխանութիւնը գործ էր անում մեծ հեղահոգութեամբ և, կեսարի նման, էր սրատուական թագաւոր, որ լաւ լաւ օրէնքներով և բարեկարգութիւններով այնպէս էր հոգ տանում իւր տէրութիւնը բաղդաւորել, որ քան զայն էլ լաւ հնար չկար անել, և այս մինչև այն աստիճան, որ նրա համար իրաւամբ էին ստում թէ՛ կամ բնաւ պիտի չի ծնէր, կամ երբէք պիտի չը մեռնէր: Տէրութեան մեջը թագաւորում էր հանգիստը և անգորրութիւնը, բայց արտաքին թշնամիների դէմ Օգոստոս շարունակում էր ծանր ծանր, բայց ըստ մեծի մասին աջողակ պատերազմներ: Նա նուաձեց բովանդակ խապանիան, որոյ մրցակիր թ բնակիչքը մինչև այն ժամանակները յամառութեամբ ընդդէմ էին կեցել Հռոմէական տի-



րապետութեան հիւսիսային լեռնական նա-  
հանդներումը, յետոյ հնադանդեցուց Հա-  
րաւային Գերմանիան մինչև ի Գունայ գետը:  
Եւ սորա հակառակ, այնպէս աջողակ շեղան  
նորա զօրապետաց արշաւանները Հռենոս  
(Ռէն) և Վեղեր գետերի մէջ պարունակուած  
Գերմանիայի մասի վրայ, որոյ միջոցումը  
Հռոմայեցիք զարհուրելի ջարդ էլ քաշեցին  
Լիպտան (Թելթորուրգեան) անտառի մի-  
ջումը: Օգոստոս ուրախ ուրախ էր կարող  
մտիկ անել Հռոմէական տէրութեան վիճակի  
վրայ, այլ տնական վիշտը թունաւորում էր  
նորա գերդաստանական կենցաղաւարութիւ-  
նը: Նորա երկրորդ ամուսինը՝ Ալլա հոգւով  
չափ ջանք էր անում որ՝ նորա իշխանու-  
թիւնը ժառանգաբար անց կենայ Տեբեռնոսի  
ձեռքը, որ Ղիվիայի որդին էր առաջին ամ-  
ուսինէն ծնած և, ինչպէս անկասկած կար-  
ծել պիտի, իւր այս նախտակին հասնելու  
համար, ձեռնտու գտնուեցաւ Օգոստոսի  
թոռներու և քեռորդիների կանխահաս և  
վաղամեռիկ մահուամբ վախճանելուն: Օգոս-  
տոսին, բաց յայսմանէ, մեծ վիշտ էր իւր  
հարազատ դստեր՝ Յուլիայի անառակ վարքը:

Այսպէս Հոկտաւիանոս Օգոստոս մեռաւ  
խորին ծերութեան մէջ Ք. Ճն. յետ 14-ե-  
րորդ տարումը<sup>\*)</sup> :

Պախսճագին եղաւ Հռոմէական տէրու-  
թեան վիճակը, որ յետ այնորիկ բռնադա-  
տուեցաւ 54 տարի քաշել ինքնազլութս,  
անգութ և անխելք կայսրներու բռնակալու-  
թիւնը:

Տե՛է՛ն՛ոս յաջորդեց Օգոստոսին: Սա մէկ  
խորամանկ կեղծաւոր էր, որ առաջ սկսաւ  
կառավարել հեղութեամբ, և ապա բռնա-  
կալութեամբ, և նորա հրամանով շատ աղ-  
նուական մարդիկ հրապարակաւ սպառուհա-  
տեցին, և շատին էլ գաղտնի աշխարքի երե-  
սէն ճանփեցին, մինչև որ ինքն էլ սպանուե-  
ցաւ կողքէ կղզումը, ինչտեղ որ անցուցա-  
նում էր չտխաղանց անսանձ կեանք (Ք. Ճն.  
յետ 37 տարումը)<sup>\*\*)</sup> :

---

\*) Հոկտաւիանոս Օգոստոս յիշուած է Ղուկասու Սւետա-  
րանի Բ. 1. «Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ եւ Հրա-  
ման յՕգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն  
տիեզերս» (Քրիստոսի Ճննդեան տարին) :

\*\*) Տիրերիոս յիշուած է նոյն Սւետարանի Գ. 1. «Ի հըն-  
դհատասաներորդի ամի տէրութեան Տիրերայ կայսեր» (Քրիս-



Աստուծոյն էր մէկ անխելք, անգութ և շռայլ, որ տէրութեան գանձարանէն միլլիոններ վատնեց: Սա էլ մարդասպանի դաշայնի տակը վէր ընկաւ (Ք. Տն. յետ 44 տարում):

Աստուծոյն (Կղզիոս) տկար մարմնով և հոգւով՝ յանձնեց տէրութեան կառավարութիւնը թշուառական սիրելեաց և իւր անամօթ կնոջը, որ վերջապէս դեղ տուեց և սպանեց նրան էլ (Ք. 54 թ.):

Աստուծոյն գերազանցեց անգթութիւններով քան զամեն իւր նախորդքը, և շատի հետ միասին հրամայեց սրտուհասել իւր մօրը վերոյիշեալ Կլաւդիոսի կին Ստրատոնային և իւր յարդելի Ստրատոն վարժապետին, հրձիգ արաւ (այրեց) նոյն իսկ Հռոմը, և ըսկաւ սուտ զրպարտութիւններ գծել տալ Քրիստոնէից վրայ՝ թէ նոքա են կրակ տուել քաղաքը, և անլուր անողորմութեամբ կո-

---

տասի միջութեան տարին) Մատ. ԻԲ. 21. «Տուք զկայսերն՝ կայսեր»: Յոհ. ԺԹ. 12. «Չես բարեկամ կայսեր»: «Չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ» (Քրիստոսի խաչ.):

\*) Կղզիոս կայսրը յիշուած է Գործոց Առաքելոց մէջ Ժա. 28. «Սգարոս նշանակեաց հոգւով սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղև առ Կղզիոս»:

տորում էր նրանց, և իւր անխելք արարմունքով այնքան առաջ գնաց, մինչև որ հրապարակաւ սկսաւ ման գալ իւր տէրութեան մէջ ինչպէս թէատրոնի դերասան (acteur) և ապա իւր 32 տարեկան ժամանակը ինքն իրան սպանեց (Ք. 68 թ.)<sup>\*</sup>: Սա էր Տիրերիոսի ազգատոհմի վերջինը:

---

ՀՌՈՄԷՍԿԱՆ ԿՍՅՍԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԶՍՆԻԿ ԺՍԾՍՆԱԿՆԵՐԸ:

44

Ներոն կայսեր ամենալատթար կառավարութիւնը բորբոքեց տէրութեան մէջ

---

<sup>\*</sup> Ներոն յիշուած է Գործոց Սաաքելոց մէջ, թէ և անունը չէ տուած: ԻԵ. 10. Պողոս ասաց ջճեառու, «յառնի կայսեր հասեալ կամ... ի կայսր բողոքեմ»: Փետոս ասաց, «ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիլի՛ր»: 23. «ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն՝ խորհեցայ յիկը»: ԻԶ. 32. Սդրիսպաս ասէ ջճեառու, «Մարթ էր արձակել զայրս զայս, եթէ ո՛չ էր բողոքեալ ի կայսր»: Բ. Տիմոթ. Գ. 17. «յառաջնում ասենին ոչ ոք եկաց ինձ ի թիկունս, այլ Տէր զօրացոյց զիս... և ապրեցայ ի բերանոյ առիւծուն» (առիւծ՝ Ներոն կայսերն է կոչում, ինչպէս որ վերը՝ քաջ արանց):



մէկ աղգամիջեան կռիւ, որոյ շիտթներումը,  
մէկ տարուան միջոցումը, մեռան երեք կայ-  
սերք հետ ղհետէ՝ Գալթա, Անն և Վիտելիոս:  
Քայց երբ որ այս քաղաքական պատերազ-  
մը վերջացաւ՝ հարիւր տարի յետե ետե  
նստան այնպիսի կայսերք, որ ամեն մէկը  
էին իրաւի իրանց տէրութեան հայր, և  
որոց կառավարութեան ներքոյ Հռոմ՝ ունե-  
ցաւ բարեբաստիկ ժամանակի վայելչու-  
թիւնը:

Վիտելիանոս (69—79) ջանք էր դնում  
Հռոմը նորոգել և զարդարել, և առաջինը  
սա եղաւ, որ հրատարակական վարժապետ-  
ների համար ոռճիկ նշանակեց, և շատ ար-  
դիւնարար բարեկարգութիւններ սահմա-  
նեց: Սորա ժամանակն էր, որ մէկ մեծ ապրս-  
տամբութիւն դուրս եկաւ Հրէաստանի մէջ,  
որն որ միայն նորա որդին՝ Տիտոսը կարողա-  
ցաւ նուաճել Երուսաղէմը քանդելով (70) \*:

---

\*) Արովհետեւ Ղուկաս աւետարանիչը Գործք Առաքելոցը  
վերջացնում է Պողոսի Հռոմ երթալու երկու տարումը, այն  
պատճառաւ նոր կտակարանումը չէ յիշուած Երուսաղէմի  
կործանումը, որ պատահեցաւ Մտուածածնի վերափոխմանէն  
22 տարի յետոյ՝ Յակոբայ Տեառնեղբոր նահատ. 8 տարի

Տխտս նորա որդին և ժառանգը իւր հե-  
ղութեամբ և քաղցրութեամբ արժանացաւ  
ընդունել չքնաղ պատուանուն՝ Պրոֆետական  
Տարախական: Երեք զարհուրելի արկածք  
նորա ժամանակը տարածեցին մեծ թշուա-  
ռութիւններ. Ժամասխա՝ որ կատաղութեամբ  
փռուել էր բովանդակ խտալիս. հրդեհ՝ որ  
տոչորեց և չքացուց Հռոմայ մէկ մասը, և  
Վեսուր սարի հրաժեղութիւնը, որոյ նմանը չէր տես-  
նուած մինչև այն ժամանակ, և որ սարսա-  
փելի աւերութիւններ առաջ բերեց, և շատ  
վնասներու հետ միասին՝ ծածկեց (79) լա-  
վայով՝ և մոխիրով Հիւստան, Պոնտիկոս և  
Սասանիս քաղաքները, որոց առաջին երկուսը  
գտնըվեցան հարիւր քանի տարի քան զայս  
առաջ՝ խորը գետնի տակ թաղուած. մինչև  
այսօր էլ փորփրում են այն տեղերը և  
զանազան հնութիւններ են գտնում ու հա-  
նում: Պոմպէիայի մեծ մասը արդէն աղա-

---

յեաց: Պետրոսի և Պողոսի նահատակութենէն 4 տարի  
շեա, իսկ Մոզրեասի նահատակութենէն 1 տարի յետոյ:

\*) Լավա հրահոս լեռներէ դուրս բղիած ծծմբախառն  
հիւթ, որ օդումը քարանալով՝ երկաթի հալուածի նման է  
լինում:



տուած է իւր աճիւնատառն ծածկութիւն և նորա շինութիւնների մէջից գտնուած են շատ նշանաւոր դէնքեր, ճարտարարհետութեան արգասիք, գրուած մագաղաթի փաթոյթներ, և ուրիշ շատ առարկաներ նախնի Հռոմայեցոց:

Ղաթախանոս՝ Տիտոսի եղբայրը (81—96) էր երկրորդ Տիրերիոս և նորա նման էլ խողխողուեցաւ:

Աերլաս (96—98) նորա հակառակ՝ երեւեցաւ իւր կարճատև կառավարութեան ժամանակը՝ ամենապատուական թագաւորներից մէկը:

Իսկ և իսկ նոյն և նման նրան էր Տրայանոս (98—117), այնպէս որ արժանապէս ստացաւ Աշխարհ մականունը: Աջողակ սրտերազմներով մի և նոյն ժամանակումը լայնացուց տէրութեան սահմանները Գոննայի միւս երեսին (Գալլիայումը, որ այժմ ասիւում է Վալաքիա, Մոլդաւիա և Թրանսիլւանիա), և Տիգրիսի գետեղերքումը Պարթեւաց դէմ կռուելով մինչև Պարսից սահմանագլուխը:

Աերլանոս անխոնջ հոգս էր քաշում իւր

տէրութեան բարեաց համար, և ճանիորդութիւններ էր անում շատ անշուք և շատ անգամ էլ հետիոտա, համարեա թէ տարիներով, հեռաւոր նահանգների մէջ: Շատ քաղաքներ զարդարեց շինուածքներով և ծանրակշիռ բարեկարգութիւններով:

Մարտինոս որ Բարեպաշտ (Պիոս, Pius) մականուն էր ստացել (138—161) կառավարում էր արդարութեամբ և հեղութեամբ և կենում էր ինչպէս մէկ սուկական քաղաքացի:

Մարտինոս՝ մականունեալ Իմաստասէր (Philosophe) (161—180) իւր ժամանակի գերիմաստ անձանց մէկը, և միօրինակ նշանաւոր ինչպէս մարդ և ինչպէս թագաւոր, եղաւ այն գերազանց կայսերաց վերջինը:

Սորա որդին Կոնստանտին էր մէկ կոշտ ու կոպիտ բարբարոս, և նրանից յետոյ ոչոք չընստաւ աթոռումը այնպէս մարդ, որ կարելի լինէր նրան էլ համեմատել այն հռչակաւոր անձանց հետ: Մէկ քանիսն էլ, որոնք որ ցանկանում էին մէկ լաւութիւն անել տէրութեան, շուտով սուլորարբար սպանվում էին անասանձ զինուորների ձեռքով: Ամեն



տեղ բորբոքվում էին աղգամիջեան սլատերազմներ, որովհետև շատ անգամ սլատահում էր որ՝ երկու, երեք և ավելի ևս փառամուլ մարդիկ կազ ու կռիւ էին սարքում իրանց մէջ գահակալութեան համար. անբարոյականութիւնը (անկարգութիւն) քանի գնում էր՝ օրէ օր զօրանում էր. զօրքը որ մէկ մէկի դէմ արշաւում էին՝ էլ չէին կարողանում տէրութեան սահմանագլուխները սլաշտպանել օտար աղգերի յարձակումներէն, մտնաւանդ Ռէյն և Գունայ գետերում օտ բնակուած Գերմանացիներէն. բազմամբոխ օտարաղգի զօրախումբեր ընդունուեցան Հռոմէական սլատերազմական սլաշտօնի մէջ. թշնամիներից փողով էին ուղում աղատութիւն գներ, նահանգները հետ զհետէ ձեռքէ գնում էին, և տէրութիւնը ուժից կտրուելով և տկարանալով մօտենում էր իւր կործանուելուն:

ՄԵԾՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՍ, ՄԵԾՆ ԹԷՌՒՌՈՍ, ՊՍՏՍ-  
ՌՈՒՄՆ ՏԷՐՈՒԹԵՍՆ:

45.

Հռոմայեցոց յետին կայսրներից աւելի նշանուար է Միշն Կոնստանտինոս (333) ոչ այն մասին, որ նա իրաւի մեծ էր (որովհետեւ նա այն թագաւորներից էր, որք կառավարում էին ինքնահաճ անկախութեամբ, և միայն կեղծաւորները էին տուել նրան Միշ մականունը), այլ այն մասին, որ նա դառաւ սրամտաւ երեք ծանրակշիռ անցքերի: Առաջինը՝ նա տուեց բոլոր տէրութեան նոր բաժանումն և նոր կառավարութեան ձև. երկրորդ՝ նա արաւ Քրիստոնէութիւնը տիրապետող կրօն. և երրորդ՝ Կոնստանտինուպօլիսը արաւ կայսերաց աթոռանիստ և վարչութեան մայրաքաղաք: Նրամէն արդէն հարիւր տարի առաջ էլ կայսրները չէին մշտապէս կենում Հռոմում, մանաւանդ երբոր տէրութիւնը կառավարում էին երկուսը և կամ մէկ քանիսը միասին: Կոնստանտինոս կարելի է թէ Քոնստանտինոսի և Պարթևաց ազգերից զէմ, որ անդադար արեւելեան կողմերումը արշաւում էին



սահմանագլուխների վրայ, ընտրեց իրա  
համար աթոռանիստ հին Բիւրանդինը, որ  
բաւական մտ էր արեւելքին: Այս քաղաքը  
մեծացուց, զարդարեց շքեղաշուք շինուած-  
ներով, և անուը դրեց Կոնստանտինուպօլիս,  
որ նշանակում է Կոնստանտինոսի քաղաք:

Որքան էլ որ ջանք դրին թէ՛ Կոնստան-  
տինոս և թէ՛ նորա յաջորդները՝ նոր նոր  
և մեծ մեծ շինուածքներով և բարեկար-  
գութիւններով զարդարել Կոնստանտինու-  
պօլիսը, սակայն նա չըկարողացաւ երբէք  
հաւասար լինել այս կողմէն Հռոմին, և  
այժմ էլ, բաց ի հաստակաւոյց ամուր սա-  
րիսայներէն, սակաւ մնացորդք են երևում  
հին կայսերաց ժամանակէն, մինչ որ Հռոմ  
և նորա շրջակայքը դեռ ևս լիքն են նախ-  
կին մեծութեան և շքեղութեան անթիւ ա-  
ւերակներով: Կամենալով տէրութեան խան-  
դարուած կառավարութիւնը նոր ինտրոյ  
կարգի դնել, Կոնստանտինոս բոլոր կայ-  
սերութիւնը բաժանեց Նախարարութիւննե-  
րի (Պրեֆէկտուրա), Թեմերի (Դեպարտ) և Նա-  
հանգների (Պրովինցիա) վրայ. սահմանեց հար-  
կաւոր ատեանները, և նոր կարգ դրեց բո-

լոր հարկերու ժողովելու մէջ: Աւելի մեծ  
բան էր ո՛չ թէ միայն կայսերութեան, այլև  
բովանդակ Եւրոպայի համար այն, որ նա  
ընդունեց Քրիստոնէութիւնը, և ո՛չ թէ միայն  
արաւ այն տանուտէրական կրօն կայսերու-  
թեան մէջ, այլ և գուն գործեց, որքան  
կարելի էր աւելի, բնաջինջ անել վաղնջուց  
հեթանոսութիւնը: Երևի թէ՛ ոչ Քրիստո-  
նէութեան կենդանարար զօրութեան ներ-  
քին համոզումն էր նրան շարժել ընդունել  
այն վարդապետութիւնը, այլ կենցաղափոխու-  
թիւնը (politique), որովհետև՝ երբոր աթոռ  
նստելից առաջ հարկ սլատահեցաւ նրան  
ողորիլ զանազան հակառակորդների դէմ,  
նա տեսաւ թէ՛ Քրիստոնէութիւնը, որ այն  
միջոցումը բաւական տարածուած էր, պի-  
տի դառնայ իրա ձեռին աջողակ հնարք՝  
իւր կուսակիցները շատացնելու, ախոյեան-  
ներուն հալածելու և միահեծան ինքնա-  
կալ դառնալու համար:

Նորա յաջորդների մէջից պիտի աւելի  
նշան դնել Մէթին Թէոդոսէ վրայ, որովհետև  
այնպէս կարգ դրեց սա, որ իւր մեռնելից  
յետ՝ նորա երկու որդիքը բաժնեն իրանց



մէջ կայսերութիւնը (395): Այնուհետեւ  
Արշակունի ստացաւ արևելեան բաժինը, այ-  
սինքն Ադրիական ծովէն դէպի արևելք սր-  
բան որ երկիրներ կային. իսկ Ռոմիոս արև-  
մտեան մասը, և այսպէս կազմուեցան Արև-  
մտեան և Արևելեան Հռոմէական կայսերութիւնները:

Արևմտեան կայսերութեան մայրաքաղաք  
էին՝ Հռոմ, Համպլինս կամ Միլան. Արևել-  
եան կայսերութեան աթոռանիստ էր ան-  
փոփոխ կոնստանտինուպոլիսը:

Հատ զանազան եղաւ այս երկու կայսե-  
րութեանց վիճակը: Արևմտեանը այնքան  
տկարացաւ դերմանական ազդերու ստէպ  
ստէպ արշաւաններէն, որ 476 թուին քա-  
րութանդ եղաւ և Քերմանացի ցեղերու  
աւար դառաւ: Սորա հակառակ՝ Արևելեան  
կայսերութիւնը ոտքի վրայ դիմացաւ ամեն  
յարձակումներին, թէ և խանդարուած  
հանդամանքների մէջ, հազար տարիի չափ  
աւելի, մինչև որ 1453 թուին խալառ սպուռ  
ջնջուեցաւ Թուրքաց ձեռքով, որոնք մինչև  
այժմ էլ տիրասպետում համարեալ թէ նրանց  
բոլոր նահանգներին:

Հայաստան (ինչպէս որ տեսանք 3 Քլխ.)  
իւր համադրի Հայկազն թագաւորաց ձեռ-  
քէն դուրս եկաւ և ընկաւ օտարազգի Պար-  
թեւների ձեռքը: Պարթեւք մէկ կիսամլայ-  
րինի ազգ էին՝ այժմեան Բուխարա և հին  
Բակտրիայի անապատներումը թափառա-  
կան, և Մեծին Ալէքսանդրի մահէն յետ  
Սելեւկիացոց իշխանութեան ներքոյ մնա-  
ցած 60-70 տարու չափ: Սոցա մէջէն մէկ  
Արշակ անունով երիտասարդ զօրանալով  
այն կողմերը՝ թագաւոր նստաւ ԲաՏԼ քա-  
ղաքումը և դառաւ հիմնադիր Արշակունիաց  
Հարստութեան: Բայց նորա թոռն Արշակ Մեծ  
այնքան զօրացաւ, որ տիրապետեց Պարսից  
աշխարհին, Բակտրիացոց, Մարաց, Ասորես-  
տանեաց, Բարեւրացոց, Հայաստանին, Վրաս-  
տանին և Աղուանից. և ամեն տեղ իւր  
եղբարցմէն թագաւոր նստեցնելով՝ ինքը  
ասուեցաւ Արսայեց Արսայ:

Այս Մեծ Արշակի հրամանով՝ եկաւ նորա  
փոքր եղբայրը Վաղարշակը՝ Հայաստան: Հա-  
յերը որ զգուած էին Մակեդոնացոց յունա-



կան յանդգնութիւնէն՝ սիրով ընդունեցին  
Վաղարշակին: Բազրատունեաց նահապետ  
Բաղարատ Ասպետը տուեց իւր դուստրը  
Վաղարշակին հարսնութիւն, և Հայաստանի՝  
Պարոյրի թագը դրեց նորա գլխին: Վաղար-  
շակ դառաւ Հայաստանի թագաւոր, և Հա-  
յոց աշխարհումը հաստատեց Պարթևաց  
Արշակունիաց Խաչատուրուն անունը (Քր. ՏՆ,  
149 տարի առաջ):

Սորա յաջորդք Արշակ 1-րդ և Արտաշէս  
1-րդ յաջողակ պատերազմներով մղեցին Հա-  
յաստանի սահմանագլուխները դէպի Կաս-  
պից, Պոնտոսի և Միջերկրեաց ծովերը, իսկ  
Տիգրան 2-րդ մինչև Ասորիք էլ տարածեց  
իւր ձեռքը. բայց որովհետև Միհրդատի  
պատերազմներու մէջ անխոհեմութեամբ  
խառնուեցաւ, շարժեց իւր վերայ և իւր  
թագաւորութեան դէմ Հռոմայ անպարտե-  
լի զօրութիւնը:

Հռոմայեցոց անուանի զօրավարները ե-  
կան Հայաստանի վրայ: Թէպէտ մէկ քանիսը  
ջարդուեցան, բայց Լուկուլլոսի, Սիւլլայի  
և Պոմպէոսի յաղթութիւնները այնպէս  
տկարացրին Հայերին, որ Տիգրանի որդին

ու յաջորդ Արշակունի 1-րդ չը կարողա-  
ցաւ Հռոմայեցոց դէմ տալ, Անտոնինոս  
զօրապետի ձեռքը ընկաւ և Եգիպտոսումը  
գլխատուեցաւ: Վերին Հայքը մնացին Հռո-  
մայեցոց ձեռին, Ստորին Հայաստանումը  
Թագաւորեց Արշամ՝ Հռոմայեցոց հարկ տա-  
լով: Սորա որդին Աբգար, որ ժամանակակից  
էր Օգոստոս կայսեր, ընդունեց Քրիստոնէ-  
ական կրօնը, որն որ Յիսուս Քրիստոս, նորա  
Թագաւորութեան օրերումը ծնելով, քա-  
րողելով, մեռանելով և փառաւորուելով,  
հաստատել էր Երուսաղէմի մէջ, և իւր  
աշակերտաց աւանդել էր ամեն աշխարհ  
տարածել: Աբգարի քեռորդին՝ Սանատրուկը  
դառաւ նոր հիմնադիր Թագաւորական գեր-  
դաստանի. և սորա յաջորդաց ժամանակը  
Վերին Հայք կրկին ընկան Հայոց Թագա-  
ւորաց ձեռքը, իսկ Միջագետքը Երէւան և  
Մշէն մայրաքաղաքների հետ խալառ մնա-  
ցին Հռոմայեցոց ըստին: Քրիստոնէութեան  
300 թուականին Տրդատ Թագաւորը հաւա-  
տաց և Լուսաւորչի քարողութեամբ Քրիս-  
տոնէական կրօնը դառաւ աղգային կրօն, և  
Էջիատնիւ հռչակուեցաւ Հայրաստանի ամեն Ամեն,



որոյ Տիմն դրել էր, Արգարի ժամանակը,  
Թաղէն Առաքեալը Եղեսիայումը: Ինչպէս,  
որ Օգոստոս կայսեր յաջորդները իրանց  
տմարդութեամբ կործանվելու մօտ էին հաս-  
ցրել Հռոմայ ինքնակալութիւնը, նոյնպէս  
և Տրդատի յաջորդները իրանց տեսակ տե-  
սակ պակասութիւներով տկարացրին Հա-  
յաստանը: Հռոմայ տէրութիւնը էլի ունեցաւ  
մէկ քանի կայսր, որ այն լայնածաւալ մի-  
ապետութիւնը կազդուրեցին, բայց Հայաս-  
տան չունեցաւ:

Մեծն կոնստանտինոս և Մեծն Թէոդոս  
նորոգեցին Հռոմայեցոց ուժը և զօրութիւ-  
նը, բայց Հայաստանին նորոգող և կազ-  
դուրող չըզտնուեցաւ ոչ ոք Արշակունի թա-  
գաւորների մէջէն:

Օրոացել էին Պարսիկք, թուլացել էին  
Հռոմայեցիք, տկարացել էին Հայք: Պար-  
թեւաց թագաւորութիւնը դեռ ևս Տրդատ  
թագաւորի հօր՝ Մեծին Խոսրովի ժամանա-  
կըն էր վերջացել Պարսից աշխարհէն: Նորա  
աւերակների վրայ Արշակունի Սասանէանը նո-  
րոգել էր Կիւրոսի աթոռը, և ինչով որ  
Աքեմենիդեան հարստութիւնը հզօր էր՝

ամենն էլ ոտքի վրայ էր կանգնեցրել. Չո-  
րասարի էջնը և Որհորայան հուրը բորբոքել  
էին Պարսից վաղընջուց աշխոյժը և քա-  
ջութիւնը. Հայաստանը դառել էր նոցա  
արշաւահանդէսը: Հռոմայեցիք ուղում էին  
որ Հայերը ուժ չունենան և միշտ իրանց  
հալատակ լինին. բայց Պարսից դէմ չէին  
օգնում Հայերուն. կամենում էին որ՝ Հա-  
յերը մէնակ իրանց զօրութեամբ կռուելով  
Պարսից հետ՝ տկարանան: Երբ որ Հայերը  
նշկահում էին Հռոմայեցոց և յաղթում էին  
Պարսից, Հռոմայեցիք հետևում էին Հա-  
յերին նուաճել: Մեծն Թէոդոս բաժնել էր  
իւր կայսերութիւնը: Արևելեան բաժինն  
էր Արկադէոսի ձեռին: Հայաստանը էր  
Արևելեան բաժնի մէջ: Երբ որ Արևել-  
եան կայսր Արկադէոսը և Պարսից արքայից  
արքայ Շապուհը ուղեցին դաշնադրութիւն  
անել, Հայաստանը կիսեցին, և այսպէս այն  
ողորմելի աշխարհը նոր ի նորոց տկարացաւ:  
Հայաստանի Արշակունի թագաւորները, փո-  
խանակ իրանց թագաւորութեան խնամք  
տանելու, սկսան Հայոց նահապետներին և  
երևելի նախարարներին հալածել և կոտորել



և իրանց խրատ տուող Հայրապետներին  
ատել և կորցնել: Հռոմայեցոց բաժին Հա-  
յաստանի մասը չունեցաւ առանձին թաղա-  
ւոր, միայն Պարսիկք էին դնում իրանց  
բաժին Հայաստանի վրայ այնպիսի թաղա-  
ւորներ, որ նրանց ձեռքով լաւ կարողանան  
Հայաստանը նուաճած պահել:

Այս թաղաւորների մէջէն մի միայն Վասի-  
լապոսն էր, որ իւր մէջ ցոյց տուեց մար-  
դու թեան և թաղաւորութեան շնորք ու առա-  
քինութիւն: Սորա ժամանակներումը և սո-  
րա յորդորանքով Միսրոն Վարդապետը Հայոց  
22 հին տառերի վրայ այլ ևս 14 նոր ձայներ  
աւելացնելով՝ ազգային դպրութիւնը (407)  
կենդանացրուց և Խորհմանչայ օրերը ա-  
ռաջ բերեց: Վասիլապոսն որդին՝ Սարգիս-  
տէն Վերջին դուրկ էր իւր հօր առաքինու-  
թեանէն: Հայոց մեծամեծքը (տեսնելով որ  
նա միայն իւր անառակ կեանքն է անցու-  
ցանում, և Հայաստանի վրայ թաղաւոր ա-  
նունով ոչ թէ նորան մէկ թեթեւութի  
է տալիս, այլ աւելի ծանրութիւն է դառ-  
նում, որովհետեւ բոլորովին Պարսից իշխա-  
նութեան տակն է) չը կամեցան երկու թա-

գաւորի ծառայել, խնդրեցին Պարսից թագաւորէն, և Արտաշէսին հանեցին Հայաստանի աթոռէն:

Հայաստանը այնուհետև սկսած 434 թուականէն՝ կառավարոււմ էր Մարդուհանէի ձեռքով, որ երբեմն Պարսիկ էին լինում և երբեմն Հայազգիք: Այս Հայազգի Մարդուհանէի առաջինն էր Վաստի Սիւնի, որ ուղում էր Հայոց թագաւորութիւնը ստանալ, և այս սրտաճառաւ Պարսից առջև շատ կեղծաւորութիւններ արաւ, Քրիստոնէութիւնը ուրացաւ, Հայաստանումը կրակի պաշտօնը սփռեց, սկսաւ Հայերուն վնասներ տալ և Հայաստանը Պարսից ձեռքը մատնել: Սորա արարմունքին չըհաւնելով Քաջ Վարդան Մակիդոնիան Հայոց Ստրատելատ և Սպարապետը՝ ազգի համահաճութիւնով Պարսից դէմ պատերազմ հրատարակեց, և նոցա Ալիբանակը Սերոխատի զօրավարութեան տակ՝ ինքը ջարդեց Աղուանից երկրումը, և միւս բանակը Միհր-Ներսէսի առաջնորդութեան տակը՝ Ներ-Շապուհ Արծրունոյ ձեռքով բնաջինջ արաւ: Այլ երրորդ համաշխարհական ճակատամարտի մէջ, որ խմբուե-



ցաւ 451 թուին Արտաղու դաշտումը, Տըղ-  
մուտ դեռի մօտ, ինքն հաւատոյ և ազգի  
համար զսհ երթալով՝ նահատակուեցաւ,  
և մարտիրոսութեան սրահը ընկալաւ: Նորա  
արիւնով զրազեշական հուրն էլ յաւի-  
տեան շիջաւ Հայաստանէն:

ՎԵՐԶ ՆՍԻՆԻ ԴՆՐՈՒ:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Ե

ԸՌԱՔ	ՅՈՑՆՔ.	ԿԱՐԹԱԳԻՆԵՑԻՔ.	ՀԱՅՔ.
2000	Գալուստ տարաշխարհիկ գաղթականաց.		
888	Լիկո բղաս.	Գիղոնա հիմնե զկարթագինե.	Կայսրակ.
820			Փառնաւազ 1-րդ.
754	.		Սկայրրղի
720			Պարոյր
—			
—			
700			Հրաչեայ
624	Գրակոն.		Կոռնակ
—			
—			
600	Սաղոն.		Հայկակ 1-րդ.
550	Պիզիսարաս.		Տիգրան 1-րդ.
530			
509			Վահագն
500	Պարսկական պատերազմունք Մարաթոնի, Սալամինայ, Պլատեայ և Միկալի մտ.		



Վ Ր Ո Ւ Թ Ի Ի Ե

Մ.Տ.	ՄՍՐԲ ԵՒ ՊՍՐ-ՍԻԿԲ.	ՀՌՈՒՄԱՅԵՑԻՑԻՑ.	ԱՐԺԱՆԱՅԻՇԱՑԱԿ ԱՆՑԲ.
2000			1975 Արմախր շինեց Արմայխը:
888			1908 Մեկքիսեդէկ օրհնէ զԱրբահամ:
820	Ղարբակեա Հիմեղեկաւան.		835 Եղիսէ մարգար:
784		Հռոմուլոս.	808 Կարանոս 1-րդ. թագաւոր Մակեդոնիոյ:
720		Նումա Պոմպիլիոս	772 Սկիզբն Ուլմպիադի:
—			749 Հռոմ շինի:
—			709 Եղիկիա թագաւոր, և Եսայի մարգարէ:
700	Ղեովկ անկախ կացոյց զՄարս.		673 Մանասէ գերի:
624		Տալլոս Հաստիլիոս. Անկոս Մարկոս Տարկուինիոս Պրիսկոս:	605 Ամբաբուժ մարգարէ:
600			
550	Սժղահակ. կործանումն տէրութեան Մարաց.		554 Տիգրանուհի կարգի թագուհի Մարաց:
530	Կիւրոս. Տէրութիւն Պարսից.	Տարկուինիոս Ամբարտաւան, ի Հռոմ Հասարեկապետութիւն եղև: Հիւպատոսք:	553 Տիգրան յաղթէ Սժղահակայ:
509			546 Կրեսոս ըմբռնի:
500	Ոգորումն Յունաց գէւ.		534 Առումն Բարեւնի:
			470 Տէրութիւն Յունաց էանց յԱթէնա:
			450 Նեէմի շինէ զպարիսպ Երուսաղէմի:

Ժ Ը Մ Ը Ն Ը Կ

ԸՌԸՔ Գ. Ծ.	ՅՈՅՆՔ.	ԿՍՐԹՍԳԻՆԵՑԻՔ.	ՀՍՅՔ.
338	Յունաստան հոգա- տակի Մակեդոնա- ցոյ.		Ղահէ
333			319 Արդուարդ
264		Պատերազմ Հառմայ դէմ.	298 Հրանտ 239 Արտաւազ
256			
146	Կորնթոս կործ: Յու- նաստան եղև նա- հանգ Հառմայ:	Կարթագինէ կոր- ծանի և լինի նա- հանգ Հառմայ:	149 Ղաղարչա
113			127 Արչակ 1-
—			114 Արտաշէս
—			
88			89 Տիգրան
30			Արչամ
668 Ծ. Գ.			
226			Խոսրով Մեծ.
—			
—			
230			Տրդատ
393			Ղաամշապուհ
476			451 Ղարղանան նահատակութիւն



Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ե

Մ.Ս.Ք.	ՄԱՐԲ ԵՒ ՊԱՐՍԻԿՔ.	ՀՌՈՄԱՅԵՑԻՔ.	ՍՐԺԱՆԱՅԻՇԱՑԱԿ ԱՆՑՔ.
338			328 Ղազէ մեռանի և Հայաստան նուածի յԱլէքսանդրէ Մակեդոնացոյ:
333	Գարեհ Վոզոման:		319 Հայաստան աղատի:
264	Կործանումն տէրութեան Պարսից:	Պունիկեան պատերազմ:	273 Թարգմանու թիւն Աստուածաշնչոյ:
236	Սրշակունի Պարթևաց թագաւորութիւն:		149 Սրշակունի թագաւորք Հայոց:
146			
113		Սկիզբն Գերմանացոց դէմ պատերազմի:	
—			
88		Սզգամիջեան պատերազմունք:	
30		Օգոստոս Հռոմայ կայսր:	33 Արտաւազդ սպանանի յԵղիստոս:
ՅԵՑ			
Մ. ք.			
226	Կործ. Պարթևաց		
—	Արտաշիր. Պարսից		
—	տէրութիւն.		
330		Կոնստանտինոս.	
395			
476		Բաթանու թիւն կայսերութեան: Կործ. արև. կայսերութ:	428 Բարձումն Հայոց Սրշակունեաց թագաւորաց:

Ժ Ե Մ Ե Ն Ե Կ Ե

ԳՐԻՍՏՈՒՆԻ ՆՈՒՄԸ.	ԵՍՈՐԵՍՏԱՆ. ԵՍՈՐԻՒՔ.	ԲԱԲԵԼԱՑԻՔ.ՄԱ- ԿԵԴՈՆԱՑԻՔ.	ՀՍՅՔ.
2000 1500	Նինոս և Շամիրամ.		Արամ և Արայ. Փառնակ 1-րդ.
978			Հոյ.
—			
720	Սալմանասար.		Պարոյր.
650			Պաճոյճ.
600	Սարաբար. կործա- նումն Ստրեստանի աւերութեան.	Նարուպուլասար. Բարիլն անկա- խութիւն ստացաւ. Նարուգոզնասար նուաճէ զՀրէաս- տան.	Հայկակ 2-րդ.
586			
536		Նարոնիդէս. կործա- նումն Բարիլնի.	Տիգրան 1-րդ.
525			Վահագն.
333		Ալեքսանդր. Մա- կեդոնացոց Տէրու- թիւն.	Վահէ.
301	Սելեւկոս և Ստրոյ աւերութիւն.		Արղուարդ.



Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ե

ՔՐԻՍՏՈՍԻՆ  
ՄՈՍԶ.

ԵՔՐՍՅԵՑԻՔ ԿԱՄ  
ՀՐԷՍՅՔ.

ԵԳԻՊՏՍԵՑԻՔ.

ՄՐԻՍՆՍՅԻՇԱՍՍԿ  
ՍՆՅՔ.

2000 Արրահամ.

Մեհեօ.

Պաաերազմ Արամայ  
ընդդէմ Նիւբարայ,  
Բարչամայ և Պայ  
Արխայ:

1500 Մուէս.

Սեսասորէս.

1504 Դարդանես Թա-  
գաւոր:

975 Հրէայք և Իսրայէ-  
լայիք.

971 Յերոբովամ:

720 Յասիա: Կործանումն  
Իսրայէլի.

717 Սալմանասար է-  
տա զՍամարիա:

650

Պսամմէտիքոս.

625 Երեմիա մարգա-  
րէ:

600

602 Գերու թիւն Հը-  
րէից: Շուշանայ ան-  
ջբը. Դանիէլ մար-  
գարէ:

586 Սեղեկիա. Կործա-  
նումն Հրէից.

Եզովքոս.

Եօթն իմաստասէրք.  
Երեք մանկունք.

536 Գերեզարձ Հրէից  
հրամանաւ Կիւրո-  
սի.

555 Կիւրոս Թագա-  
ւորեաց ի Պարսս և  
դաշնակից եղև Տիգ-  
րանայ:

525 Յեսու. Յովսեփէ-  
կեան.

Պսամմէնիտա և  
Կործանումն Եզիպ-  
տացոց տէրութեան:  
Եզիպտոս դառաւ  
Պարսից նահանգ.

Կամբիսոս սրդի և յա-  
ջորդ Կիւրոսի:

333 Յաղոս.

319 Յեա մազու

Սէէրսանդրի Հա-

յաստան վերստին

ստացաւ զանկա-

խութիւն իւր:

301 Ոնիա.

Պատրովոս և Եզիպ-  
տացոց տէրութիւն.

189 Արշակ մծ

Պարթև:

Ժ Ը Մ Ը Ն Ը Կ Ը

ՔՐԻՍՏՈՍԻՆ  
ԱՌԱՋ.

168

ԱՍՈՐԻՍՏԱՆ,  
ԱՍՈՐԻՔ.

ԲԱՐԵԼՍՑԻՔ.ՄՍ-  
ԿԵՒՈՆՍՑԻՔ.

ՀՍԵՔ.

Պերսէոս, կործա-  
նումն Մակեդոնա-  
ցոց: Մակեդոնիա  
եղև նահանգ Հռո-  
մայ.

Արտաշատ կուսակալ:

64 Կործանումն տէ-  
րութեան Ասորոց:  
Ասորիք դառան նա-  
հանգ Հռոմայ:

Տիգրան.

30

Արշամ.



Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ե

ԲԻՍՏՈՒԿ  
ՄՈՒՆԸ

ԵՐԲՍԵՆՑԻՔ ԿՍՄ  
ՀՐԷՍՑՔ.

ԵԳԻՊՏՍՑԻՔ.

ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ  
ՍՆՑՔ.

168 Մակարեացիք.

149 Ղաղարչակ  
Պարթև հիմնե  
զթագաւորութիւն  
Հայոց Արչակու-  
նեաց:

64 Հրէաստան հա-  
տակեցաւ Հռոմա-  
յեցոց.

125 Արչակ նուաճե  
զՊոնտացիս.

31 Արտաւազդ գերի,  
և Հայաստան անկա-  
նի ի ձեռս Հռոմայեց-  
ւոց:

30

Պէտոպարա, կոր-  
ծանումն Եգիպտա-  
ցոց Տէրութեան.

Արչամ թագաւորեաց  
ի վերայ Սաորին Հա-  
յոց:

ԱԿՍԳՐՈՒԹԵՆՆ.

## Յ Ա Ն Կ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

#### Նախնի Գորուս.

	<i>Երև.</i>
Ներածութիւն . . . . .	5
Ասորեստանեայք և Քաբէլայիք. 11.	50
Հայք . . . . . 14	171 214
Փիւնիկեցիք . . . . .	17
Եգիպտացիք . . . . . 21.	29
Հին աղգերու մէջ երևելիները . . .	32
Եբրայեցիք. . . . . 33. 36. 38. 43.	50
Մարք և Պարսիկք. Կիւրոս. . . . .	52
Յոյնք . . . . .	56
Արգոնաւարդներու արշաւանը . . .	59
Կողրոս և Աթէնացիք . . . . .	64
Լիւկուրդոս . . . . .	66
Սողոն . . . . .	71



	<sup>Երես.</sup>
Պարսից պատերազմները . . . . .	77. 81. 83
Թեմիատոկէս . . . . .	92
Արիատիտէս . . . . .	96
Պաւղանիաս . . . . .	99
Կիւմոն . . . . .	101
Աթէնքի ծայրագոյն կարողութիւնը և նորա տկարանալը: Պէլոպոնէսեան պատերազմը. Ալկիբիադէս . . . . .	102
Աթէնքի կործանակը . . . . .	110
Սոկրատ . . . . .	112
Թերայեցիք. Եպամինոնդ. Պելոպիդ . . . . .	116
Մեծն Ալէքսանդր (Մակեդոնացի) 120. . . . .	129
Հիմնարկութիւն Հռոմէական տէրու- թեան . . . . .	134
Հռոմը Պատրիկներու ձեռին . . . . .	140
Հռոմ ստացաւ օրէնքներ . . . . .	145
Քաղղիացիք նուաճեցին Հռոմը . . . . .	150
Հռոմայ ոգորումը Սամնիտացոց դէմ . . . . .	152
Պիւնիկեան պատերազմները 157. 162. 167. 171. 173	
Առաջին ազգամիջեան մարտը Հռոմայ. Սիւլլա և Մարիոս . . . . .	178
Երկրորդ ազգամիջեան մարտ Հռոմու- մը. Կեսար. Պոմպէոս և Կրասոս . . . . .	184

	երես.
Երրորդ աղգամիջեան պատերազմ.	
Օգոստոս և Անտոնիոս . . . . .	194
Հռոմայեցոց կայսերք Օգոստոսի տա- նէն . . . . .	199
Հռոմէական կայսերութեան երջանիկ ժամանակները. . . . .	204
Մեծն կոնստանտինոս. Մեծն Թէոդոս. պատառումն տէրութեան. . . . .	210
Ժամանակագրութիւն . . . . .	222

« ԻՐԶ ՅՄՆԿԻ :





467

0013

10m





